

# ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954



Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ

(76-րդ տարի) Թիվ-6 (1664)

Հունիս 2022

# Բովանդակություն



«Դրոշակ» ամսաթերթ  
Հայ Յեղափոխական Դաշնակցության  
պաշտոնաթերթ  
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմության թանգարան  
հիմնադրամ»  
Երևան, Միեր Սկրուպյան փ. 12/1  
Հեռ. (+374) 10-52-18-90  
Էլ. հասցե՝ droshak@arf.am  
Կայք՝ <https://www.droshak.am>  
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան  
Խմբագրական խորհուրդ



## 1- Առաջնորդող

*Բաժանարար (Էջ 1-2)*

## 2- Քաղաքական

### **Հրանտ Մելիք-Շահնազարյան**

*Հայ-ադրբեջանական բանակցությունների մոսկովյան և բրյուսելյան հարթակները (Էջ 3-6)*

### **Անի Մելքոնյան**

*Պարտված ղեկավարների ճակատագիրը պատմության մեջ (Էջ 7-10)*

### **ԱԼՕ Գաթրճեան**

*Համաթուրքականության-համաթուրանականության գաղափարախօսությունը սերմանող թուրք ղեկավարներու և գործիչներու վարքագիծը (մաս 3 և վերջին) (Էջ 11-17)*

## 3- Հայ կյանք

### **Սեդա Գալստյան**

*Պատմական իրողության նոր մանրամասներ (Էջ 18-21)*

## 4- Պատմության լուսարձակ

### **Վանիկ Վիրաբյան**

*Մահմեդական բնակչության 1919 թ. հակահայկական խռովության ճնշումը Չող-Բասարգեչարի շրջանում և հայկական պետականության ամբողջականության վերահաստատումը (մաս 2 և վերջին) (Էջ 22-31)*

### **Ալբերտ Մուշեղյան**

*Հայոց աշխարհակալ Տիգրան Մեծ արքայից արքան հռոմեացի սենատոր և ճարտասան Տիգերոնի գնահատմամբ (Էջ 32-43)*

## 5- Ընթերցումներ

### **Վրեժ-Արմեն**

*Մենք այս Ենք (Էջ 44)*

# Բաժանարար

ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» և «Պատիվ ունեն» ընդդիմադիր խմբակցությունները հունիսի 3-ին հրավիրել էին խորհրդարանական արտահերթ նիստ: Նիստի նպատակն էր ընդունել հայտարարություն, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետությունն աջակցելու է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացմանը և ԼՂՀ միջազգային ճանաչմանը, անընդունելի է համարվելու հակամարտության այնպիսի լուծումը, որի դեպքում Արցախը կարող է հայտնվել Ադրբեջանի կազմում, ՀՀ-ի ու ԼՂՀ-ի միջև պետք է ապահովվի հուսալի ցամաքային կապ, Հայաստանի ու Ադրբեջանի միջև սահմանագծման և սահմանագատման համար անհրաժեշտ է նախապայման ընդունել Հայաստանի տարածքից ադրբեջանական զորքերի դուրսբերումը, ռազմագերիների ու պահվող անձանց վերադարձն ու ՀՀ ինքնիշխան տարածքից ԱՀ զորքերի դուրսբերումը, հայ-թուրքական հարաբերություններում Հայոց ցեղասպանության և հայրենագրկման իրողությունները չեն կարող հարցականի տակ դրվել և այլն: Ինչպես հայտարարում էին ընդդիմադիր շարժման առաջնորդները, այս նախաձեռնությունը բաժանարար գիծ է՝ փաստելու, թե Արցախի ու Հայաստանի կենսական շահերի հարցում ինչ դիրքորոշում ունեն իշխանությունները: Եթե նկատի ունենանք, որ հայտարարության շուրջ լայն քարոզչություն էր ծավալվել, խորհրդարանական ուժերի նախաձեռնության մասին հայտարարվել էր ընդդիմության բազմահազարանոց հանրահավաքի ժամանակ, իշխանության հակառակ դիրքորոշումը վարկաբեկիչ հարված կլիներ նրա համար:

Չնայած հոգեբանական, հանրային և քաղաքական մեծ ճնշմանը՝ իշխող ուժը տապալեց հարցի քննարկումը՝ պարզապես չներկայանալով նիստին, ինչպես, ի դեպ, վարվել էր նախորդող նմանատիպ դեպքերում: Հակազգային այս դիրքորոշումը ակնհայտ է դարձնում, թե ՀՀ ներկա իշխանություններն ինչ չափով են կախման մեջ արտաքին ուժերից և որքան են վախեցած թշնամիներից: Կարելի է ասել, որ հանձինս բախտախնդիր ու ապազգային կառավարողների՝ Հայաստանն ու հայությունը երբեք այսքան նվաստացած ու զիջող չեն եղել: Եվ այս ամենը տեղի է ունենում այն ժամանակ, երբ աշխարհաքաղաքական տևտոնական ցնցումների պայմաններում ձևավորվում է համաշխարհային նոր աշխարհակարգը: Ի հայտ եկած մարտահրավերների հանդիման չունենալով համարժեք պատրաստվածություն և ավելի ու ավելի կաշկանդվելով արտաքին կախումների մեջ՝ ապազգային ու անսկզբունք իշխանությունը գավառական խորամանկությամբ ձգտում է պատմակշիռ հակամարտության մեջ գտնվող աշխարհաքաղաքական հակադիր բևեռներին բավարարելու միաժամանակ: Ընդ որում, իշխանությունն իրեն տեսնում է երկու տեսակի զիջումների երկրնորանքի առջև՝ անվերապահորեն ընդունել արտաքին ուժերի



և մասնավորապես գավթիչ հարևանների բոլոր պահանջները՝ ապահովելով արտաքին ուժերի հանդուրժողականությունը (անգամ հովանավորությունը) ներքաղաքական կյանքում ցանկացած անօրինականություն թույլ տալու համար, կամ հրաժարվել իշխանությունից՝ փրկության դուռ բացելով Հայաստանի ու Արցախի համար:

Հայաստանը հեղինակապետության վերածած վարչապետը համառ հետևողականությամբ փորձում է իրականացնել Արցախի հանձնումն ու Հայաստանի կենսական զիջումները՝ իշխանությունը չկորցնելու նպատակով, ինչպես և խուսափելու բազմաթիվ հանցագործությունների համար պատասխանատվությունից: Նա հաշվարկել է, որ, անկախ համակրանք-հակակրանքից, արտաքին ուժերն իր իշխանությունը կհանդուրժեն այնքան ժամանակ, քանի դեռ կարելի է զիջումներ պոկել Հայաստանից, իսկ դրանից հետո հավանաբար կերաշխավորեն իր փախուստն ու ապաստանը արտերկրում: Նա մտածում է նաև, որ շահագրգիռ արտաքին ուժի համար քաղաքական վատ խամաճիկն ավելի լավ է, քան նրա փոխարինումը ազգային ու ինքնուրույն ուժերով: Արտաքին հովանավորության պայմաններում անօրինականություններ թույլ տալով ու բռնություններ կիրառելով ներքաղաքական գործընթացներում՝ թիվ մեկ իշխանավորը, միևնույն է, հիստերիկայի հասնող անհանգստության մեջ է: Ի տարբերություն իր անմեղսունակ թիմակիցների՝ նա հասկանում է, որ, ըստ էության, այն, ինչ տեղի է ունենում Երևանի փողոցներում, ազգային-ազատագրական պայքար է, որի ծավալումն ու հաղթանակը կարելի է հետաձգել, բայց կասեցնել անհնարին է:

Ի տարբերություն գաղափարապես ու հոգեբանորեն կենսունակ ժողովրդական շարժման՝ իշխանության որդեգրած ստերի ու մանիպուլյացիաների քաղաքական վարդապետությունը բարոյապես սպառված է: Հրապարակայնորեն հրաժարվելով ազգային շահերին հետամուտ լինելուց և թշնամական օրակարգեր սպասարկելով՝ անհնար է քաղաքական նորանոր պարտություններն ու զիջումները մշտապես

բարդել նախկինների վրա: Հայրենիքում և նրա շուրջ տեղի ունեցող իրադարձությունների թիվ մեկ պատասխանատուն, այլևս չապավինելով կեղծ բացատրություններով ժողովրդին մոլորեցնելու իր ճարպկությանը, ուղղակիորեն և բացահայտորեն անցել է սեփական իշխանությունը բռնի ուժով պահպանելու գործելակերպին: Նա կարծես ցանկանում է համոզել, որ օրինական ճանապարհով իր հրաժարականին հասնելու ակնկալիքն անիմաստ է, ինչը, ի դեպ, ունանց մոտ վաղ թե ուշ ծնելու է օրինականության կարմիր գծերից անդին ելքեր փնտրելու գայթակղություն: Քաղաքական խաղաղ պայքարին հակադրելով բռնի ուժն ու իրավական հավաճանքների սիրած մեթոդը, ծառայամտության դիմաց մուրալով արտաքին հովանավորների աջակցությունը, միաժամանակ գիտակցելով, որ սեփական ուժերին ապավինող ընդդիմության պայքարը չի կարող սահուն ու կայծակնային հաջողություններ գրանցել, քաղաքական դիակի վերածված ղեկավարը հույս ունի, թե կկարողանա գոնե մինչև իր ֆիզիկական ապահովությունը երաշխավորող հակահայկական պայմանագրերի ստորագրումը ձգել պաշտոնավարման շրջանը: Միաժամանակ նա հասկանում է, որ ժամանակն իր դաշնակիցը, առավել ևս հովանավորը չէ ոչ մի առումով: Գրկից գիրկ ցատկելու պատեհապաշտության սահմանները գնալով նեղանում են, և ի վերջո նրան ստիպելու են անդավաճան սեր խոստովանել աշխարհաքաղաքական բևեռներից մեկին: Որքան էլ նա շարունակի տնտեսական ժանրի հեքիաթներ պատմել առաջընթացի մասին, համընդհանուր ու շոշափելի գնաճը ստիպում է նրանից երես դարձնելու նաև հասարակության այն հատվածին, որն անվերապահորեն ընդունել է իր կուռքի քաղաքական կեղծարարությունները: Օտարասուն իշխանությանը հասցված թերևս ամենածանր հարվածն էր ազգային արժեքների դեմ իրականացված վերջին տարիների լայնածավալ հակաքարոզչությունից հետո հայ ժողովրդի ընդվզումը՝ հանուն Արցախի, Հայաստանի և համազգային կենսական շահերի: Դժվար է ասել, թե դեռ որքան կշարունակվի վերջինիս դավաճանական գործունեությունը, ակնհայտ է, սակայն, որ Լևոն Տեր-Պետրոսյանից և ՀՀԿ-ից ժառանգած պարտովորական վարդապետությունը հերթական անգամ փլուզվեց հանրային դաշտում՝ այս անգամ քաղաքականորեն խորտակելով Նիկոլին ու իր ապագային խառնախմբին:

Ակնկալելով դանդաղորեն մեծացնել պայքարի թափը՝ «Դիմադրություն» շարժումը հույս ունի, որ կկարողանա օրինական ճանապարհով պարտադրել պարտության առաջնորդի հրաժարականը: Այս պահին ընթանում է համառ դիմակայություն, երբ ազգային և հակազգային բաժանարարի տարբեր կողմերում գտնվող քաղաքական ուժերը փորձարկում են իրենց ու դիմացիների նյարդերի ամրությունը: Ճակատագրական հերթական ճամփաբաժանին հայ ժողովուրդը հարկադրված է կրկին միայնակ

հաղթել նախ ներքին և ապա արտաքին թշնամուն, եթե ցանկանում է հարատևել հայրենիքում՝ իր սեփական պետության մեջ: Ռուսեր չեն պայթում, թուրքական ու բուլղարական հորդանքերը դրսից ու ներսից չեն թրատում, կացնահարում ու հավածում զանգվածաբար, սակայն չի նշանակում, թե մարտահրավերն ու դրա հետևանքները նվազ ծանր կարող են լինել մեզ ու մեր հայրենիքի համար: Պայքարն այլընտրանք չունի, և թշնամու ու դավաճանի դեմ դարավոր այս պայքարը մեր ընտրությունը չէ, այլ մեր խաչը: Դեռ երեկ մենք հաջողությամբ հաղթահարեցինք պատերազմ ու արհավիրք, դրանից առաջ ներկայիս Ֆրանսիական հրապարակից ոչ հեռու երկու տարի ամեն օր մասնակցեցինք հանրահավաքի ու երթի, բախվեցինք զանազան փորձությունների: ՔՊ-ականների նախորդները նույնպես փորձեցին երկրին պարտադրել Արցախը հանձնելու ինքնադավաճանությունը, թալանեցին երկիրը, մատնեցին այն սովի ու տնտեսական ավերի: Այն ժամանակ նույնպես ժողովուրդը միանգամից ու համընդհանուր ձևով ոտքի չեղավ: Զանգվածներն առհասարակ վախենում են անորոշությունից և ամենավատ, սակայն ընկալելի ներկան չեն ցանկանում փոխարինել անորոշ ապագայով, որքան էլ որ այն հրամցվի վարդագույն ակնոցներով: Բազմիցս խաբված հասարակությունները հիմնավոր փաստարկներ են ուզում այն մասին, որ հերթական փոփոխությանը չի հաջորդելու հերթական հիպոթիությունը: Անկեղծություն, անմասցորդ նվիրվածություն, ազգային բոլոր առողջ ուժերի ներգրավում՝ այս է ցանկանում տեսնել հայ մարդը և ունենալ երաշխիքներ, որ չեն կրկնվելու նիկոլիզմի ոչնչապաշտությանը հասցրած տասնամյակների սխալներն ու սայթաքումները: Ջրբաժանը շատ ավելի լայն է, բայց պիտի անցնենք այն, եթե իսկապես ցանկանում ենք սպրել հանուն սերունդների դարավոր իղձերի իրականացման, հանուն արժանապատիվ ու հզոր հայրենիք ունենալու մեր զավակների իրավունքի: ■



# Հայ-ադրբեջանական բանակցությունների մոսկովյան և բրյուսելյան հարթակները

Հրանտ Մելիք-Շահնազարյան  
Քաղաքագետ, «Ոսկանապատ» վերլուծական կենտրոնի ղեկավար

2020 թ. պատերազմից հետո հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման և արցախյան խնդրի լուծման երկու նոր հարթակ է ձևավորվել՝ Մոսկվայում և Բրյուսելում: Դրանցից առաջինը՝ Մոսկվան՝ որպես ինքնուրույն միջնորդ, քաղաքական ասպարեզ է եկել պատերազմի արդեն վերջին օրերին: Ավելին՝ հենց Ռուսաստանի միջնորդությամբ է Հայաստանի և Ադրբեջանի միջև զինադադար կնքվել, որից հետո պաշտոնական Մոսկվան ստանձնել է ոչ միայն միջնորդի, այլև Արցախում անվտանգության ասպահովման երաշխավորի դեր: Իհարկե, ռուսական կողմը նախկինում էլ է հանդես եկել ինքնուրույն նախաձեռնություններով և անգամ շատ մոտ է եղել որոշ լուծումների, բայց, վերջին հաշվով, այդ բոլոր ջանքերը մշտապես համադրվել և համատեղվել են ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևաչափով մշակված մոտեցումների հետ և նույնիսկ մաս կազմել դրանց: Իսկ անհա 44-օրյա պատերազմից հետո Ռուսաստանի միջնորդությունը բացարձակապես ինքնուրույն և միանձնյա էր դարձել:



Բրյուսելը՝ որպես հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման նոր հարթակ, հետպատերազմյան շրջանում առաջին անգամ ասպարեզ է եկել 2021 թ. դեկտեմբերին, երբ ԵԽ խորհրդի նախագահ Շառլ Միշելի միջնորդությամբ տեղի է ունեցել Ալիևի ու Փաշինյանի հանդիպումը: Դրանից հետո՝ 2022 թ. ապրիլի 6-ին և մայիսի 22-ին, տեղի են ունեցել ևս երկու եռակողմ հանդիպումներ՝ ԵԽ-ի, Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների մակարդակով: Բացի այդ՝ եվրոպական կողմի միջնորդությամբ տեղի են ունեցել նաև Հայաստանի ու Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյաների հանդիպումներ, ինչպես նաև դրանց ղեկավարների երկու հանդիպում՝ այս անգամ արդեն Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի միջնորդությամբ: Այս բոլոր հանդիպումներն ու հակամարտության կարգավորմանն ուղղված եվրոպական կողմի ջանքերն էլ ձևավորել են, այսպես կոչված, բրյուսելյան ձևաչափը, որն այս պահին հայ-ադրբեջանական հարաբերությունների վերականգնման ամենակատիվ գործող հարթակներից է դարձել՝ շատ հարցերում մրցակցելով Մոսկվայի հետ:

որից հետո Մոսկվան և Բրյուսելը սկսեցին մրցակցել նաև արցախյան հակամարտության կարգավորման գործում առաջնային դեր ունենալու համար: Երևանն ու Բաքուն նախընտրեցին օգտագործել թե՛ մոսկովյան և թե՛ բրյուսելյան հարթակները՝ իրենց հերթին նպաստելով այդ մրցակցության ակտիվացմանն ու էլ ավելի սրմանը:

Որո՞նք են Մոսկվայի և Բրյուսելի միջնորդությամբ ծավալվող բանակցային գործընթացների ընդհանրություններն ու տարբերությունները, և ինչ է սպասվում Արցախին ու հայ-ադրբեջանական հարաբերություններին առաջիկայում: Այս հարցերին պատասխանելու համար առաջարկում ենք առանձին-առանձին դիտարկել մոսկովյան և բրյուսելյան գործընթացները:

## Մոսկվա

44-օրյա պատերազմն ավարտվել է 2020 թ. նոյեմբերի 9-ին Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի ղեկավարների կողմից հայտնի եռակողմ հայտարարության ընդունմամբ: Ինը կետերից բաղկացած այդ հայտնի փաստաթղթի գրեթե բոլոր դրույթներն այս կամ այն չափով գրեթե անմիջապես կյանքի են կոչվել. դադարեցվել են ռազմական գործողությունները, հայկական կողմն Ադրբեջանին է հանձնել Ակնայի, Քարվաճառի և Բերձորի շրջանները (սչենք, որ հայտարարության մեջ օգտագործվել են դրանց ադրբեջանական անվանումները), Արցախում՝ հայ-ադրբեջանական զինված ուժերի շփման գծում, տեղակայվել են ռուս խաղաղապահներ, տեղի է ունեցել զերինների և զոհվածների մարմինների փոխանակում (իհարկե, ոչ լիարժեք), ստեղծվել է խաղաղապահ կենտրոն և այլն:

Հիշատակված հայտարարության որոշ կետեր էլ, ցավոք, գերակատարվել են ի վնաս հայկական կողմի: Օրինակ՝ պատերազմի ավարտից հետո Ադրբեջանի Հանրապետությունը կանգ չի առել իր

2022 թ. փետրվարի 24-ին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարեց Ուկրաինայում հատուկ ռազմական գործողություն սկսելու մասին: Այդ օրվանից ի վեր Ռուսաստանի և Արևմուտքի հարաբերությունները հետխորհրդային ողջ ժամանակաշրջանի կտրվածքով լարվածության ամենաբարձր մակարդակին հասան: Կողմերը սկսեցին մրցակցել հնարավոր բոլոր հարթակներում, ինչն իր անդրադարձն ունեցավ նաև հայ-ադրբեջանական բանակցային գործընթացի վրա: Ուկրաինական ճգնաժամը դարձավ այն ջրբաժանը,

«գրադեցրած դիրքերում», ինչը նախատեսված էր հայտարարության առաջին կետով, և հետագայում իր գործերն առաջ է բերել թե՛ Արցախի Հանրապետության և թե՛ Հայաստանի Հանրապետության ուղղությամբ՝ գրավելով ոչ միայն ռազմավարական բարձունքներ, այլև բնակավայրեր ու միջպետական ճանապարհներ: Կամ՝ պաշտոնական Բաքուն հրաժարվել է լիարժեքորեն կատարել հայտարարության 7-րդ կետով ստանձնած պարտավորությունները և Հայաստանին վերադարձնել բոլոր ռազմագերիներին, պատանդներին ու պահվող անձանց: Բայց ընդհանուր առմամբ նոյեմբերի 9-ի հայտարարության առաջին 8 դրույթները կյանքի են կոչվել, և այժմ կողմերն աշխատում են 9-րդ կետի կենսագործման, այն է՝ տարածաշրջանում բոլոր տնտեսական և տրանսպորտային կապերի ապաշրջափակման ուղղությամբ:

Այսպիսով՝ 2020 թ. նոյեմբերի 9-ին Ռուսաստանի միջնորդությամբ ձևավորվել է հայ-ադրբեջանական բանակցային փաստացի նոր, այն էլ՝ որոշ արդյունքներ (դրանց դրական կամ բացասական լինելու խնդիրը դուրս է այս հոդվածում քննարկվող հարցերի շրջանակից) արձանագրած ձևաչափ, որը հետագայում հարստացել է նոր օրակարգերով և պայմանավորվածություններով:

2021 թ. հունվարի 11-ին Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի ղեկավարները կրկին հանդիպեցին Մոսկվայում և եռակողմ նոր հայտարարություն ընդունեցին<sup>2</sup>: Այս անգամ 4 կետերից բաղկացած փաստաթուղթը ամբողջությամբ նվիրված էր նախորդ հայտարարության վերջին կետին՝ տարածաշրջանում տնտեսական և տրանսպորտային կապերի ապաշրջափակման խնդրին: ՌԴ նախագահ Վ. Պուտինի առաջարկով կողմերը համաձայնեցին Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի փոխվարչապետների համատեղ նախագահությամբ եռակողմ աշխատանքային խումբ ձևավորել, որի առջև դրվեցին հստակ խնդիրներ՝ կազմել նոյեմբերի 9-ի հայտարարության 9-րդ կետի կիրառումից բխող աշխատանքների հիմնական ուղղությունների ցանկ՝ որպես գերակայություններ ընդունելով երկաթուղային և ճանապարհային հաղորդակցությունները, և մինչև 2021 թ. մարտի 1-ը ՀՀ, ՌԴ և ԱՀ ղեկավարներին ներկայացնել Հայաստանի ու Ադրբեջանի տարածքներով միջազգային փոխադրումների կազմակերպման, իրականացման և անվտանգության ապահովման համար անհրաժեշտ նոր տրանսպորտային ենթակառուցվածքների օբյեկտների վերականգնման և կառուցման միջոցառումների իրականացման ցանկ և ժամանակացույց:

Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի ղեկավարների երրորդ համատեղ հայտարարությունն ընդունվել է 2021 թ. նոյեմբերի 26-ին Սոչիում<sup>3</sup>: Այս փաստաթղթում կողմերը հղում են անում նախորդ երկու հայտարարությունների տեքստերին՝ նշելով դրանց կետերը կյանքի կոչելու անհրաժեշտությունը, և առաջին անգամ խոսում Հայաստանի և Ադրբեջանի միջև պետական սահմանի դելիմիտացիայի և դեմարկացիայի գործընթաց սկսելու մասին: Փաշինյանն ու Ալիևը համաձայնում են ստեղծել սահմանագծման

և սահմանագատման երկկողմ հանձնաժողով՝ Ռուսաստանի խորհրդատվական մասնակցությամբ:

Եռակողմ այս հանդիպման ավարտից և հիշատակված հայտարարության ընդունումից հետո ՌԴ նախագահ Վ. Պուտինը մամուլին տրված մեկնաբանություններում նշել է, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանագծման և սահմանագատման աշխատանքների երկկողմ հանձնաժողովը կձևավորվի մինչ 2021 թ. ավարտը<sup>4</sup>: Մակայն, ինչպես շատ այլ հարցերում, այս անգամ ևս երեք երկրների ղեկավարների ընդունած այդ որոշման կյանքի կոչվելու ժամկետները խախտվեցին: ՀՀ-ի և ԱՀ-ի միջև սահմանագծման և սահմանագատման հայկական և ադրբեջանական կողմերի հանձնաժողովները ձևավորվեցին շատ ավելի ուշ՝ 2022 թ. ապրիլ-մայիս ամիսներին, արդեն միանգամայն այլ պայմաններում և այլ ձևաչափով՝ Բրյուսելի ակտիվ մասնակցությամբ: Իսկ այդ հանձնաժողովների ղեկավարների առաջին հանդիպումը տեղի է ունեցել նույն թվականի մայիսի 24-ին: Այդ հարցին կվերադառնանք փոքր-ինչ ավելի ուշ:

Այսպիսով՝ Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի ղեկավարների հիշատակված երեք համատեղ հայտարարությունները դրվել են հայ-ադրբեջանական բանակցությունների մոսկովյան ձևաչափի հիմքում: Այդ ձևաչափի հիմնական առաջնահերթություններն են արցախյան հակամարտության գոտում հրադադարի պահպանման ռեժիմի ապահովումն ու տարածաշրջանում բոլոր տնտեսական և տրանսպորտային կապերի ապաշրջափակումը: Մնացած բոլոր հարցերը, որ այս ընթացքում քննարկվել են երեք երկրների ղեկավարների ու բարձրաստիճան պաշտոնյաների կողմից, ստորադասված են հենց այս երկու դրույթներին:

Ըստ որում, պետք է նշել, որ մոսկովյան ձևաչափում թե՛ կայունության և թե՛ կոմունիկացիոն խնդիրներն ավելի շատ համապատասխանում են մեր տարածաշրջանի ապագայի մասին այն պատկերացումներին, որոնք տարածված են Ռուսաստանում և որոշ չափով նաև Ադրբեջանում ու Թուրքիայում: Ցավոք, հայկական օրակարգի այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսին է, օրինակ, Արցախի հայության ինքնորոշման իրավունքը, բանակցային այս ձևաչափում դեռևս չեն քննարկվում: Այս հարցի կապակցությամբ Ռուսաստանի դիրքորոշումը հետևյալն է. «Ադրբեջանին պետք է վերադարձվեն Լեռնային Ղարաբաղի շուրջ գտնվող յոթ պահվող շրջանները, իսկ բուն Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը պետք է անփոփոխ մնա, այսինքն՝ դա պետք է թողնվի ապագային: Լեռնային Ղարաբաղում պետք է ամրագրել ստատուս քվո, բայց Հայաստանի և Ղարաբաղի միջև շփման հնարավորության պարտադիր ստեղծմամբ...»<sup>5</sup>:

**Բրյուսել**

2021 թ. դեկտեմբերի 14-ին Եվրոպայի խորհրդի նախագահ Շառլ Միշելի նախաձեռնությամբ Բրյուսելում տեղի ունեցավ Փաշինյան-Միշել-Ալիև եռակողմ հանդիպում, որից հետո կողմերը հանդես

եկան հայտարարություններով: Հայաստանի և Ադրբեջանի պաշտոնական հաղորդագրություններում հիմնական շեշտը դրված էր 2020 թ. նոյեմբերի 9-ի, 2021 թ. հունվարի 11-ի և նոյեմբերի 26-ի եռակողմ հայտարարությունների կատարման ընթացքի շուրջ քննարկումների վրա: Սակայն Շառլ Միշելի՝ եռակողմ հանդիպումն ամփոփող հայտարարությունից պարզ դարձավ, որ Բրյուսելում անցած հայ-ադրբեջանական բանակցություններում ի հայտ են եկել նոր տարրեր: Մասնավորապես, առաջին անգամ Շառլ Միշելը հայտարարեց, որ մեր տարածաշրջանում կայուն խաղաղությունը «ի վերջո կամրագրվի համապարփակ խաղաղության համաձայնագրով»<sup>6</sup>: Բացի այդ՝ ԵՄ խորհրդի նախագահի աջակցությամբ Հայաստանի և Ադրբեջանի սահմաններում լարվածությունը նվազեցնելու նպատակով ուղիղ կապ է հաստատվել երկու երկրների պաշտպանության նախարարների միջև:

Բրյուսելյան եռակողմ առաջին հանդիպման հատկանշական հանգամանքներից մեկն էլ այն է, որ, չնայած Շառլ Միշելն ինքն էր հղում անում Ռուսաստանի միջնորդությամբ ընդունված երեք հայտնի հայտարարություններին, այնուամենայնիվ, արդեն իսկ 2021 թ. վերջին նկատելի էր, որ եվրոպական դիվանագիտությունը փորձելու է իր ձեռքը վերցնել այդ հայտարարություններում ամրագրված կետերի իրագործման նախաձեռնությունը: Այսպես՝ դեկտեմբերի 14-ի հանդիպման ընթացքում ԵՄ խորհրդի նախագահը փորձագիտական և ներդրումային աջակցություն է առաջարկել Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարներին, որպեսզի վերջիններս կարողանան հնարավորինս անվտանգ միջավայրում արագ իրականացնել սահմանագծման և սահմանազատման աշխատանքները, վերականգնել երկաթուղային կապերը և այլն:

Բրյուսելյան այդ հանդիպման երրորդ կարևոր առանձնահատկությունն այն է, որ Փաշինյանը, Ալիևն ու Միշելը պայմանավորվել են շարունակել աշխատանքներն այդ ձևաչափում, ինչը բացահայտ ակնարկ էր այն մասին, որ բրյուսելյան ձևաչափը՝ որպես Մոսկվայի ձևաչափի փոխլրացնող, իսկ հնարավոր է՝ նաև այլընտրանք, գոյություն ունենալու իրավունք ունի: Ավելին՝ ադրբեջանական իշխանամերձ մամուլը հենց այդ հանդիպումից հետո սկսեց շարունակ հոդվածներ հրապարակել այն մասին, որ Բրյուսելը շատ ավելի անկողմնակալ միջնորդ է, քան Մոսկվան:

2022 թ. ապրիլի 6-ին Բրյուսելում կայացավ Փաշինյան-Միշել-Ալիև երկրորդ եռակողմ հանդիպումը: Այս անգամ պայմանավորվածությունները շատ ավելի առարկայական էին և վկայում էին այն մասին, որ հայ-ադրբեջանական բանակցային գործընթացին նոր տեմպ է հաղորդվել: ԵՄ խորհրդի նախագահ Շառլ Միշելը հանդիպման ավարտից անմիջապես հետո հայտարարել է, որ և՛ Իլիամ Ալիևը, և՛ Նիկոլ Փաշինյանը ցանկանում են արագ տեմպերով շարժվել դեպի խաղաղության համաձայնագիր: «Այդ նպատակով պայմանավորվածություն է ձեռք բերվել

արտաքին գործերի նախարարներին հանձնարարելու աշխատել ապագա խաղաղության պայմանագրի նախապատրաստման վրա, որը կլուծի բոլոր հրատապ խնդիրները»<sup>7</sup>, - մասնավորապես նշել է Շառլ Միշելը:

Երկրորդ խիստ շոշափելի և առարկայական համաձայնությունը, որը ապրիլի 6-ին ձեռք է բերվել Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների միջև, վերաբերում էր սահմանագծման և սահմանազատման հարցերով հայ-ադրբեջանական համատեղ հանձնաժողով ստեղծելուն, որը պետք է ձևավորվեր մինչև 2022 թ. ապրիլի վերջը: Ընդ որում, ի տարբերություն 2021 թ. նոյեմբերի 26-ին Մոսկուում ձեռք բերված համանման հանձնաժողովի մասին պայմանավորվածության, որին անդրադարձել ենք հոդվածի առաջին հատվածում, Բրյուսելում որոշվել է, որ այս նոր հանձնաժողովը պետք է օժտված լինի երկու մանդատով՝ սահմանազատել Հայաստանի և Ադրբեջանի միջև երկկողմանի սահմանը և ապահովել կայուն, անվտանգ իրադրություն սահմանագծի երկայնքով և մերձակայքում:

Նշված հանդիպումից մեկուկես ամիս անց՝ մայիսի 23-ին, ԵՄ խորհրդի նախագահ Շառլ Միշելը Բրյուսելում կազմակերպեց Հայաստանի, Ադրբեջանի և ԵՄ ղեկավարների երրորդ համատեղ հանդիպումը: Այս անգամ եվրոպացի դիվանագետի՝ հանդիպումն ամփոփող հայտարարությունը շատ ավելի հստակ և կոնկրետ էր: Նախ՝ նա տեղեկացրեց, որ առաջիկա օրերին Հայաստանի և Ադրբեջանի միջպետական սահմանին տեղի կունենա սահմանային հանձնաժողովների առաջին համատեղ նիստը: Միշելի ազդարարած այդ հանդիպումը տեղի ունեցավ հաջորդ օրը՝ մայիսի 24-ին<sup>8</sup>:

Երկրորդ՝ ԵՄ ղեկավարը հայտնեց, որ Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարները համաձայնության են եկել տարանցման կարգավորման սկզբունքների, սահմանների կառավարման, անվտանգության, միջազգային բեռնափոխադրումների, մաքսային սկզբունքների և այլ հարցերի շուրջ<sup>9</sup>:

Միշելի այդ հայտարարությունը վկայում է այն մասին, որ տարածաշրջանում տնտեսական և տրանսպորտային կապերի ապաշրջափակման շուրջ հայ-ադրբեջանական բանակցությունները մտել են ավարտական փուլ: Ընդ որում, կարևոր է նշել այն հանգամանքը, որ քննարկվող այս հարցերի առումով Հայաստանին փաստորեն պարտադրվում է չհավասարակշռված որոշում: Այսպես, ըստ Շառլ Միշելի հայտարարության, մեր երկիրը թույլ է տալիս Ադրբեջանին Հայաստանի տարածքով կապ ունենալ Նախիջևանի հետ՝ փոխարենը ստանալով «Հայաստանի տարբեր շրջանների միջև Ադրբեջանի տարածքով տարանցման» հնարավորություն: Հարց է առաջանում՝ միմյանց հետ կապ պահելու համար Հայաստանի այդ որ շրջաններն ունեն Ադրբեջանի տարածքից օգտվելու անհրաժեշտություն: Խոսքն այստեղ կարող է վերաբերել միայն երկու ճանապարհների՝ Երևան-Նախիջևան-Մեղրի գծին և 2020 թ. պատերազմի հետևանքով Ադրբեջանի վերահսկողության տակ անցած՝ Սյունիքի

միջհամայնքային և միջպետական ճանապարհի փոքր հատվածներին: Բայց պետք է փաստենք, որ նախ՝ ադրբեջանական զինված ուժերի ներկայությունը Սյունիքի ճանապարհներին անօրինական է (առնվազն որովհետև այդ հատվածներում սահմանագծում և սահմանազատում դեռևս չի կատարվել), և երկրորդ՝ Հայաստանն իր մայրաքաղաքը Սյունիքի քաղաքներին կապող այլընտրանքային ճանապարհ էլ ունի (ճիշտ է՝ խայտառակ վատ որակի), իսկ Ադրբեջանը Նախիջևան տանող այլ ճանապարհ ոչ:

Երրորդ կարևոր կետը, որ նշված էր Միշելի հայտարարության մեջ, վերաբերում էր Հայաստանի և Ադրբեջանի միջև կնքվելիք խաղաղության պայմանագրի շուրջ քննարկումներին, «որով կարգավորվելու են միջպետական հարաբերությունները: Առաջիկա շաբաթների ընթացքում ԱԳ նախարարների գլխավորած թիմերը առաջ կտանեն այս գործընթացը»<sup>10</sup>:

Եվ վերջապես, չորրորդ կարևոր շեշտադրումը վերաբերում էր «Ղարաբաղի էթնիկ հայ բնակչության իրավունքներին ու անվտանգությանը», որոնք, ըստ Շառլ Միշելի, անհրաժեշտ է ապահովել:

Ամփոփելով Փաշինյան-Միշել-Ալիև եռակողմ երեք հայտարարությունների արդյունքները, ինչպես նաև նկատի ունենալով այն փաստը, որ նման չորրորդ հանդիպումը կկայանա ս.թ. հուլիս-օգոստոս ամիսներին՝ կարելի է վստահ պնդել, որ բրյուսելյան ձևաչափը հայաադրբեջանական հարաբերությունների կարգավորման բանակցություններում արդեն իսկ կայացած փաստ է: Ընդ որում, այն իր գործունեության առաջին իսկ օրվանից նախաձեռնողների ու մասնակիցների կողմից մատուցվել և ընկալվել է որպես Մոսկվայի ձևաչափին այլընտրանք, որի գործունեությունը, ի դեպ, 2022 թ. շատ ավելի արդյունավետ է եղել, քան ռուսական միջնորդությունը: Ավելին՝ Բրյուսելը հայաադրբեջանական բանակցությունների օրակարգ շարունակ նոր տարրեր է ներմուծում, որոնք Մոսկվայում հաճախ մեկնաբանվում են որպես հակառուսական կամ Ռուսաստանը Հարավային Կովկասի տարածաշրջանից հեռացնելու փորձ:

Ինչպես արդեն նշվել է նյութի սկզբում, հայաադրբեջանական բանակցությունների բրյուսելյան ձևաչափի կայացման գործում մեծ դեր է ունեցել նաև Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը, որն իր հերթին Ալիևի և Փաշինյանի հետ երկու հանդիպում է անցկացրել: Ակտիվ ջանքեր են գործադրում նաև եվրոպական տարբեր կառույցների ղեկավարներն ու ներկայացուցիչները, որոնք իրենց հերթին Հայաստանի ու Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյաների հանդիպումներն են կազմակերպում: Սակայն այս բոլոր գործընթացներում, լինեն դրանք Մոսկվայում, թե Բրյուսելում, բաց է թողնվում հայկական կողմի համար ամենակարևորը՝ Արցախի ինքնորոշման իրավունքի իրացման հնարավորությունը: Իսկ ամենացավալին այն է, որ պաշտոնական Երևանն ինքն է շրջանցում այդ հարցի բարձրացման բոլոր առիթները և դեռ ավելին՝ համաձայնություն տալիս Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագրի շուրջ բանակցություններ

սկսելու համար Բաքվի ներկայացրած 5 հայտնի առաջարկ-պահանջներին (Հայաստանի և Ադրբեջանի բանակցային դիրքորոշումների առանձնահատկություններին կանդիդատանք մեկ այլ հոդվածով): Եվ սա է այն հանգամանքը, որը, չնայած մոսկովյան ու բրյուսելյան բանակցային ձևաչափերի բոլոր նմանություններին ու տարբերություններին, ինչպես նաև ուկրաինական ճգնաժամի պատճառով Ռուսաստանի և Արևմուտքի՝ աշխարհաքաղաքական նոր թափ ստացած մրցակցությանը, Հայաստանի և Արցախի իրական շահի տեսանկյունից երկու ձևաչափերն էլ դնում է նույն հարթության մեջ:

Ճիշտ է, և՛ ռուսական, և՛ արևմտյան կողմերը հաճախ խոսում են արցախահայության իրավունքների մասին՝ նշելով, որ, առանց տեղի հայության կարծիքը հաշվի առնելու, հակամարտության կարգավորումը հնարավոր չէ, այնուամենայնիվ, թե՛ Մոսկվայում և թե՛ Բրյուսելում փաստացի անտեսվում է հայկական երկու պետությունների գլխավոր խնդիրը՝ Արցախի ինքնորոշման իրավունքը: ■

### Չղումներ

1. Տե՛ս Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը, 10.11.2020, <https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/> (մուտք՝ 08.06.2022):
2. Տե՛ս Նիկոլ Փաշինյանի, Վլադիմիր Պուտինի և Իլիամ Ալիևի հանդիպման արդյունքներով ընդունվել է համատեղ հայտարարություն, 11.01.2021, <https://www.primeminister.am/hy/press-release/item/2021/01/11/Nikol-Pashinyan-Moscow-meeting-Announcement/> (մուտք՝ 08.06.2022):
3. Տե՛ս Հայաստանի վարչապետը, Ռուսաստանի նախագահը և Ադրբեջանի նախագահն ընդունել են համատեղ հայտարարություն, 26.11.2021, <https://www.primeminister.am/hy/press-release/item/2021/11/26/Nikol-Pashinyan-Sochi/> (մուտք՝ 08.06.2022):
4. Տե՛ս Заявления по итогам трехсторонних переговоров лидеров России, Азербайджана и Армении, 26.11.2021, <http://kremlin.ru/catalog/countries/AM/events/67203> (մուտք՝ 08.06.2022):
5. Путин: статус Карабаха должен остаться неизменным и решаться в будущем, 17.12.2020, <https://ria.ru/20201217/karabakh-1589711827.html> (մուտք՝ 08.06.2022):
6. Statement of President Charles Michel following the trilateral meeting with President Ilham Aliyev and Prime Minister Nikol Pashinyan, 14.12.2021, <https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2021/12/14/statement-of-president-charles-michel-following-the-trilateral-meeting-with-president-ilham-aliyev-and-prime-minister-nikol-pashinyan/> (մուտք՝ 08.06.2022):
7. Statement of European Council President Charles Michel following the Second Trilateral Meeting with President Ilham Aliyev and Prime Minister Nikol Pashinyan, 06.04.2022, <https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2022/04/06/statement-of-european-council-president-charles-michel-following-the-second-trilateral-meeting-with-president-ilham-aliyev-and-prime-minister-nikol-pashinyan/> (մուտք՝ 08.06.2022):
8. Տե՛ս Հայաստանի և Ադրբեջանի փոխվարչապետները հանդիպել են միջպետական սահմանին, 24.05.2022, <https://times.am/?p=308835&l=am> (մուտք՝ 08.06.2022):
9. Տե՛ս Press statement by President Michel of the European Council following a trilateral meeting with President Aliyev of Azerbaijan and Prime Minister Pashinyan of Armenia, 23.05.2022, <https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2022/05/23/press-statement-by-president-michel-of-the-european-council-following-a-trilateral-meeting-with-president-aliyev-of-azerbaijan-and-prime-minister-pashinyan-of-armenia/> (մուտք՝ 08.06.2022):
10. Նույն տեղում:



## Պարտված ղեկավարների ճակատագիրը պատմության մեջ

Անի Մելքոնյան  
Պատմաբան

Համաշխարհային պատմության մեջ ավանդաբար պահպանվել են հաղթող ղեկավարների կերպարները: Պատմությունը պահպանում է նաև պարտված ղեկավարների մասին հիշողությունը և այն, թե ինչ ճակատագրի են արժանանում նրանք: Հայոց պատմության մեջ պարտված ղեկավարներ շատ քիչ են եղել, և այդ քչերն էլ հիմնականում ինքնակամ հեռացել են պետության ղեկավարի պաշտոնից՝ այդպիսով հնարավորինս քիչ դժվարություններ ստեղծելով իրենց փոխարինողների համար ուղքի հանելու պարտված երկիրը:

Աշխարհում քիչ չեն պարտված ղեկավարները, որոնց երկրների ճակատագրերը մեծապես կախված են եղել պարտությունից հետո դրանց ղեկավարների գործունեությունից: Այն երկրները, որոնց ղեկավարները պատերազմում պարտվելուց հետո հեռացել են պետության կառավարման ղեկից, ճգնաժամից դուրս են եկել հնարավորինս քիչ կորուստներով և հետագայում վերականգնել են իրենց դիրքերը համաշխարհային քաղաքականության թատերաբեմում: Հայոց պատմության մեջ թերևս չի եղել մի ղեկավար, որը պատերազմում խայտառակ պարտություն կրելուց հետո գամված է մնացել պետության ղեկավարի աթոռին՝ նոր արհավիրքների տանելով երկիրը: Այս իմաստով Հայաստանի մերօրյա իշխողները անգամ մեր պարտված ղեկավարներից շատ բան ունեն սովորելու:

Ք.ա. 570-560 թթ. Մեծ Հայքի արքան էր Երվանդ Ա Սակավակյացը, որը Մարաստանի թագավոր Աժդահակի դեմ պատերազմում պարտություն կրեց և ստիպված էր ընդունել նրա գերիշխանությունն ու հարկեր վճարել նրան: Երկիրն ավելի վատ վիճակի մեջ չդնելու համար Երվանդ Ա-ն հրաժարվեց գահից՝ այն հանձնելով որդուն՝ Աքեմենյան արքա Կյուրոսի մտերիմ ընկեր Տիգրանին: Հաջորդելով հորը՝ Տիգրան Երվանդունին (Ք.ա. 560-530-ական թթ.) «Պարսից Աքեմենյան արքա Կյուրոս II Մեծի հետ Ք.ա. 550 թ. մասնակցել է Հայաստանի թշնամիներ՝ Մարաստանի, իսկ Ք.ա. 538 կամ 537 թ.՝ Բաբելոնիայի թագավորությունների կործանմանը»<sup>1</sup> և հզորացրել Հայաստանը: Բաբելոնը գրավելուց հետո Տիգրան Ա Երվանդունին, «Հայոց արքա լինելուց բացի, դարձավ նաև տերության արևմտյան կեսի փոխարքան: Որպես գլխավոր դաշնակից՝ Հայաստանն արտոնյալ դիրք ուներ Աքեմենյան տերության մեջ»<sup>2</sup>: Այսպիսով՝ Հայկագունի արքա Երվանդ Ա-ն, որ Սակավակյաց է կոչվել կարճատև ղեկավարման համար, պատերազմում պարտություն կրելուց հետո, հասկանալով, որ իր՝ որպես պարտված ղեկավարի հետագա պաշտոնավարումը կարող է ծանր վիճակի մեջ դնել Հայաստանը, հանուն պետական շահերի թողեց պետության ղեկավարի



պաշտոնը՝ այսօրվա ապրողների հազարամյակների հեռավորությունից ցույց տալով, թե ինչպիսին պետք է լինի պետականամետ ղեկավարը, անգամ եթե հանգամանքների բերումով պարտվել է:

Հայոց արքաներից պետականամետության մեկ այլ օրինակ է տալիս Արտաշես Ա Բարեպաշտի որդին՝ Արտավազդ Ա-ն (Ք.ա. 160-115 թթ.), որը պարթևների արքա Միհրդատ Բ-ի դեմ պատերազմում պարտություն կրելուց հետո հաշտություն է կնքում և որպես խաղաղության պահպանման երաշխիք պատանդ է տալիս երբոր որդուն՝ գահաժառանգ Տիգրանին (Տիգրան Բ Մեծ): Այսպիսով՝ խաղաղության դիմաց հայրենիքից հող զիջելու փոխարեն հայոց արքան պատանդառության է ուղարկում գահաժառանգին՝ թողնելով ոչ մի դեպքում հայրենի հողը չզիջելու յուրօրինակ դաս Հայաստանի մերօրյա և ապագա ղեկավարների համար:

Հայոց պատմության մեջ ողբերգական հետևանքներ ունեցան Բագրատունյաց Հովհաննես-Սմբատ արքայի թուլակամությունն ու աթոռասիրությունը: Վերջինս, վախենալով Բյուզանդիայի դեմ պատերազմից, Պետրոս Գետադարձ կաթողիկոսի ճնշմամբ հայոց մայրաքաղաք Անին կտակեց Բյուզանդիային: Սա հայոց պատմության մեջ աննախադեպ երևույթ էր, երբ հայոց արքան իր կամքով հայրենի հողը նվիրում էր օտարներին, մինչդեռ հայոց պատմության մեջ հաճախակի էին դեպքերը, երբ հայոց արքաները զոհաբերում էին իրենց՝ հայրենիքի կայունությունն ու ամբողջականությունը պահպանելու համար: Այդ արքաներից էին Տիգրան Բ-ի որդի Արտավազդ Բ-ն, Արշակունյաց արքա Արշակ Բ-ն, Բագրատունյաց արքա Սմբատ Ա-ն, որոնք իրենց արքայական փառքի, նույնիսկ կյանքի և հայրենիքի միջև ընտրություն կատարելիս ընտրել են հայրենիքի բարեկեցությունն ու պետական շահը՝ իրենցից հետո եկողներին տալով հայրենիքը դժվար վիճակից դուրս բերելու, հզորացնելու և նրա հարատևությունն ապահովելու հնարավորություն: Իսկ Հովհաննես-Սմբատը, ինչպես տեսանք, արեց միանգամայն հակառակը

և, սեփական մայրաքաղաքը թշնամուն կտակելով, իրեն հաջորդած արքայի՝ Գագիկ Բ Բագրատունու համար ստեղծեց չափազանց ծանր պայմաններ: Ի վերջո, Պետրոս Գետադարձի օգնությամբ 1045 թ. Բյուզանդիան ստացավ Անին, իսկ երիտասարդ արքա Գագիկ Բ Բագրատունին դավադրաբար ձերբակալվեց: Բագրատունյաց թագավորությունն ընկավ, ինչը ճակատագրական եղավ Հայաստանի հետագա ավելի քան 800 տարվա պատմության համար՝ սետելով հայ ժողովրդին պետականագուրկ և հալածանքներով ու կոտորածներով լի պատմափուլի մեջ:

Պակաս ուսուցողական չեն համաշխարհային պատմության մեջ պարտված ղեկավարների օրինակներն ու նրանց երկրների ճակատագրերը: Եվրոպայի մեծ նվաճող Նապոլեոն Բոնապարտը 1812-1813 թթ. ջախջախիչ պարտություն կրեց նախ Ռուսական կայսրությունից, ապա՝ հակաֆրանսիական դաշինքի ուժերից գերմանական Լայպցիգ քաղաքի մոտ: 1814 թ. դաշնակիցների զորքերը մտան Փարիզ: Նապոլեոն Բոնապարտը հրաժարվեց գահից և որպես տիրոյթ ստացավ Էլբա կղզին: Համեմատաբար հանգիստ հեռացած Նապոլեոնը, սակայն, կարճ ժամանակ անց արեց մի քան, որը նրա հեղինակությունն ունեցող տիրակալի համար իրական խայտառակություն էր. «1815 թ. գարնանը Նապոլեոն I-ը փոքրաթիվ զորաջոկատով մտել է Ֆրանսիա, անհավանական արագությամբ աճող զորքով գրավել Փարիզը և վերականգնել կայսրությունը: Սակայն գահակալել է ընդամենը 100 օր: Դաշնակիցները Վաթեռլոոյի (քնակավայր Բոյուսելից 20 կմ հարավ) ճակատամարտում 1815 թ-ի հունիսի 10-ին ջախջախել են ֆրանսիացիներին: 1815 թ-ի հունիսի 22-ին Նապոլեոն I-ը վերջնականապես գահընկեց է արվել և աքսորվել Ատլանտյան օվկիանոսի Սբ. Հեղինե կղզի (որպես անգլիացիների գերի), որտեղ և վախճանվել է»<sup>3</sup>: Հետևանքը եղավ այն, որ Ֆրանսիան հայտնվեց բավականին ծանր վիճակում և միայն հմուտ դիվանագետ և հայրենասեր արտաքին գործերի նախարար Մորիս Թալերյանի գերմարդկային ջանքերի շնորհիվ դուրս եկավ այդ վիճակից հնարավորինս փոքր կորուստներով:

Այս ամենից բացի՝ համաշխարհային պատմության մեջ բազմաթիվ են դեպքերը, երբ ոչ միայն պարտված, այլ նաև կապիտուլյացված ղեկավարները, դրսևորելով պետական բարձր գիտակցություն, հեռացել են պետության ղեկավարի պաշտոնից: Ասվածի վառ օրինակ է Գերմանիան, որը 1918 թ. նոյեմբերին ստիպված եղավ կապիտուլյացիոն հրադադար կնքել: Բեռլինի փողոցներ դուրս եկած գերմանացիները պահանջեցին կապիտուլյացված ղեկավարության հրաժարականը: Կայգեր Վիլհելմ 2-րդը այդ օրերին շատերի համար պարտության խորհրդանիշ էր, որի հրաժարականի պահանջով հանդես եկավ նաև քանակը: «Գերմանացի կայգերը, պետականամետ գործչի պահվածք դրսևորելով, չհեղեց սեփական ժողովրդի արյունն ու հրաժարվեց գահից: «Ես



Արարավազ Բ

ընդմիշտ հրաժարվում եմ Պրուսիայի գահի նկատմամբ իրավունքներից, ինչպես նաև գերմանական կայսերական գահից»,- հայտարարեց նա: Նրա հետ հեռացավ նաև կանցլեր Մաքս Բադենսկին: Ավելին, նրանք ոչ միայն թողեցին պաշտոնները, այլ նաև կայգերը գնացրով հեռացավ Նիդերլանդներ, որտեղ ապրեց մինչև խոր ծերություն»<sup>4</sup>:- Վիլհելմ 2-րդը կապիտուլյացված առաջնորդ էր, բայց ոչ պետական դավաճան, ուստի հեռացավ՝ այդպես փրկելով իր երկրի մագորդներն ու վերակազմավորվելու, ոտքի կանգնելու հնարավորություն տալով Գերմանիային, հասկանալով, որ իր հետագա պաշտոնավարման դեպքում Գերմանիան կարող էր դադարել որպես պետություն գոյություն ունենալուց, որովհետև պարտված ղեկավարի հետ ոչ թե բանակցում են, այլ պարտադրում:

Այլ էր իրավիճակը Բոլիվիայում 1930-ականներին, երբ այն Գրան Չակոյի համար պատերազմում էր Պարագվայի դեմ: Բոլիվիայի ղեկավար Դանիել Սալամանկան ձախողել էր պատերազմի ղեկավարումը, ինչի պատճառով երկիրը կրեց տարածքային ու մարդկային ահռելի կորուստներ, տապալվեց երկրի ժողովրդավարական կառավարման համակարգը. «Գրան Չակոյի պատերազմում Բոլիվիան պարտվեց բացարձակապես քաղաքական ապիկար առաջնորդ ունենալու պատճառով. Սալամանկայի վարած արտաքին քաղաքականության արդյունքում Բոլիվիան ողջ պատերազմի ընթացքում չունեցավ դաշնակիցներ: Չլինելով զինվորական և չունենալով անհրաժեշտ հմտություններ՝ Սալամանկան հեռացրել էր փորձառու գեներալներին, նշանակել իր կամակատարներին, իր ձեռքը վերցրել ռազմական ղեկավարումը, իսկ պարտվելիս մտքը բարդել բացարձակապես զինվորական համակարգի վրա՝ հոչակելով վերջիններիս դասալիքներ»<sup>5</sup>: Մեզ հայերիս համար չափազանց ծանոթ պատկեր՝ 2020 թ. սեպտեմբեր-նոյեմբերից հետո: Դանիել Սալամանկան իշխանությունից հեռացվեց 1934 թ. նոյեմբերին ռազմական հեղաշրջման միջոցով՝

«պատմության մեջ մնալով Լատինական Ամերիկայի ամենաարյունահեղ պատերազմում մոտ 60.000 զոհ, ռազմական և տնտեսական նշանակություն ունեցող տարածքների կորուստ կրած Բոլիվիայի Հանրապետության ամենախայտառակ ղեկավարը»<sup>6</sup>: Սալամանկան մահացավ իշխանազրկվելուց մեկ տարի անց քաղցկեղից:

Մեր կարծիքով՝ հիշատակման է արժանի նաև Իսրայելի վարչապետ Իցհակ Ռաբինի՝ «հող խաղաղության դիմաց» արտաքին քաղաքական կուրսը: 1994 թ. հորդանանա-իսրայելյան սահմանում՝ Վադի Արաբայում, սկսվեցին հորդանանա-իսրայելյան երկկողմ բանակցությունները: Նույն թվականի հոկտեմբերի 26-ին «Վադի Արաբայում Հուսեյն թագավորի, Իցհակ Ռաբինի, ԱՄՆ նախագահ Բիլ Բլինթոնի, Իսրայելի նախագահ Էզեր Վեյցմանի և բազմաթիվ այլ պաշտոնյաների մասնակցությամբ տեղի ունեցավ հորդանանա-իսրայելյան խաղաղության համաձայնագրի ստորագրումը»<sup>7</sup>: Խաղաղության համաձայնագիրը ստորագրվեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 242-րդ և 338-րդ բանաձևերում սահմանված «հող խաղաղության դիմաց» սկզբունքով: «Համաձայնագրով ապահովվեց Իսրայելի կողմից գրավված հորդանանյան տարածքների վերադարձը Հորդանանին: Համաձայնագրով ամրագրվեց նաև, որ Հորդանանը կստանար իր ջրաբաժինը Յարմուկ և Հորդանան գետերից»<sup>8</sup>: Այսպիսով՝ Հորդանանը ստացավ իր կորցրած բոլոր տարածքները, իսկ մինչ այդ՝ 1993 թ., Իցհակ Ռաբինը ստորագրել էր Օսլոյի պայմանագիրը Յասեր Արաֆաթի հետ, ինչի համար ստացավ (Յասեր Արաֆաթի և Շիմոն Պերեսի հետ մեկտեղ) Խաղաղության նոբելյան մրցանակ: 1993 թ. սեպտեմբերի 9-ին՝ պայմանագրի ստորագրման նախօրյակին, Ռաբինը Պաղեստինի ազատագրման կազմակերպության առաջնորդից՝ Յասեր Արաֆաթից, նամակ ստացավ, որում վերջինս հրաժարվում էր բռնությունից և պաշտոնապես հայտարարում իր կազմակերպության կողմից Իսրայելի ճանաչման մասին: Նույն օրը Ռաբինը Արաֆաթին պատասխան նամակ ուղարկեց, որում պաշտոնապես հայտարարում էր Իսրայելի կողմից Պաղեստինի ազատագրման կազմակերպության ճանաչման մասին: Այդ պայմանագրերի հետևանքով ստեղծվեց Պաղեստինյան ինքնավարությունը, որին փոխանցվեց Գազայիի հատվածի և Հորդանան գետի արևմտյան ափի մի մասի մասնակի վերահսկողությունը: Պաղեստինի ազատագրման կազմակերպության հետ համաձայնագիրը հանգեցրեց իսրայելական հասարակության մեջ Ռաբինի հեղինակության երկատման. ոմանք նրան հերոս են համարում խաղաղության ձգտելու համար, մյուսները՝ դավաճան՝ պաղեստինցիներին հողեր տալու համար, որոնք, նրանց կարծիքով, պատկանում են Իսրայելին: Շատ իսրայելցիներ մեղադրում են Ռաբինին, որ նրա՝ Օսլոյում ստորագրած պայմանագրի պատճառով հազարավոր հրեաներ են զոհվել: Ի վերջո,

1995 թ. նոյեմբերի 4-ին, երբ Թել Ավիվում՝ Իսրայելի Թագավորների հրապարակում, հոգուտ «Օսլոյի» գործընթացի բազմահազարանոց ցույցին ելույթ ունենալուց հետո Ռաբինը մոտենում է իր մեքենային, նրա վրա 3 անգամ կրակում են: 40 րոպե անց նա մահացավ հիվանդանոցում: Մարդասպանն Իգալ Ամիրն էր՝ հավատացյալ ուսանող, որն իր հանցագործությունը հիմնավորեց նրանով, որ «պաշտպանում էր Իսրայելի ժողովրդին Օսլոյի պայմանագրից»: Ահա այսպիսի ճակատագիր ունեցավ «հող խաղաղության դիմաց» քաղաքականությունն իրականացնող Իցհակ Ռաբինը, որը պարզապես Հորդանանին վերադարձրեց այն, ինչ, պատկանում էր նրան, այլ ոչ թե Իսրայելի պատմական հողերը, և չներվեց իսրայելցի երիտասարդության կողմից: Իսկ թե ինչ ճակատագիր կարող է սպասվել սեփական երկրի պատմական տարածքներից հրաժարվող ղեկավարին, կխոսենք փոքր-ինչ ուշ, իսկ մինչ այդ խոսենք Հայաստանի ոչ վաղ անցյալի մասին:

1920 թ. սեպտեմբերին քենսլական Թուրքիան առանց պատերազմ հայտարարելու հարձակվեց Հայաստանի Հանրապետության վրա: Հոկտեմբերի 30-ին Կարսի անկումը կանխորոշեց պատերազմի ելքը. Հայաստանի Հանրապետությունը պարտություն կրեց: Երկիրն ավելի ծանր վիճակի մեջ չդնելու և կապիտուլյացիայի չտանելու համար նոյեմբերի 23-ին Համո Օհանջանյանի կառավարությունը հրաժարական ներկայացրեց, կազմավորվեց նոր կառավարություն՝ Սիմոն Վրացյանի ղեկավարությամբ, որն էլ ավարտին հասցրեց բանակցությունները ՌԽՖՍՀ-ի հետ:

Ինչպես տեսանք թե՛ հայոց, թե՛ համաշխարհային պատմության մի շարք ղեկավարների օրինակով, անկախ իրենց կամքից կրած պարտություններից հետո առավել պետականամետ ղեկավարները ինքնակամ հեռացել են պետության ղեկավարի պաշտոնից, թե՛ն այդ ղեկավարներից և ոչ մեկը, ըստ էության, իր պետությունը դիտավորյալ պարտության չի տարել, մի երևույթ, որը տեղի ունեցավ Հայաստանում 2020 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին, երբ 44 օր շարունակ հերոսաբար պաշտպանվող հայկական բանակը թիկունքից դաշույնի հարված ստացավ ոչ ավել, ոչ պակաս պետության ղեկավարից, որը, ի պաշտոնե լինելով գերագույն գլխավոր հրամանատար, պարտավոր էր ամեն գնով ապահովել հայոց հերոսական բանակի հաղթանակն ու հայկական երկու պետությունների տարածքային ամբողջականությունը, սակայն թշնամու ձեռքին գործիք դարձած ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը 2020 թ. նոյեմբերի 9-ին կապիտուլյացիոն փաստաթուղթ ստորագրեց և հազարամյակներ շարունակ Հայաստանի պատմական տարածք եղած Արցախը դավադրաբար հանձնեց թշնամուն:

Նոյեմբերի 9-ի կապիտուլյացիոն համաձայնագրով «Հայաստանը ոչ միայն կորցրեց Արցախի 75 %-ը, այլև թուրքը, ավելի քան հարյուր տարի առաջ նախ Արամի, հետո Նժդեհի շնորհիվ վիժեցված



Նասպղեն Բոնասարյո

պանթյունի դրագրին հետամուտ, հայտնվեց իր համար անհասանելի երազանք դարձած Զանգեզուրում: Շուշիի և Արցախի կորստով Հայաստանի Հանրապետությունը կանգնած է կործանման վտանգի առաջ, քանի որ Հայաստանի Հանրապետության դարպասները բացված են թշնամու առաջ, թշնամին, փաստորեն, նոյեմբերի 9-ից հետո առանց ջանք թափելու ստանում է այն ամենը, ինչ ուզում է՝ Սոթք, Որոտան, Երասխ, Նոր Այգեձոր, Կութ և ՀՀ այլ գյուղերին իշխող բարձունքները առանց դիմադրության հանձնվել են թշնամուն: Այս ամենով չբավարարվելով՝ թշնամին պահանջում է միջանցք Մեղրիով, ինչը կկտրի Հայաստանի Հանրապետությունը Իրանի Հանրապետությունից և օդակի մեջ կվերցնի Հայաստանը»<sup>9</sup>: Հայաստանի իշխանությունների, մասնավորապես վարչապետի աթոռը զբաղեցնողի հանցավոր անհետատեսության ու դավաճանական վարքագծի պատճառով սկիզբ է դրվել Հայաստանի Հանրապետության՝ այդքան դժվարությամբ պահպանված տարածքի բզկտմանը, Հայաստանի ջրային և էներգետիկ ռեսուրսների՝ թշնամուն հանձնման գործընթացին, վտանգի տակ է հայտնվել ոչ միայն Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը, այլև հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը:

2020 թ. նոյեմբերի 9-ից հետո ամեն օր Հայաստանի Հանրապետության քաղաքական վիճակն ավելի ու ավելի է վատթարանում, քանի որ թե՛ Հայաստանի թշնամիները, թե՛ բարեկամներն ու առհասարակ միջազգային կառույցները Հայաստանի Հանրապետության պարտված, ավելին՝ կապիտուլյացված ղեկավարին ընկալում են ոչ թե որպես բանակցողի, այլ միայն թշնամու պայմանները կատարողի, մինչդեռ եթե Նիկոլ Փաշինյանը

Հայաստանի Հանրապետությունը կանխամտածված պարտության տարած չլիներ, և պարտությունը լիներ անկախ նրա կամքից՝ հանգամանքների բերումով, ապա նա գոնե մի փոքր պետականամետություն կդրսևորեր ու կթողներ պետության ղեկավարի պաշտոնը, սակայն, ինչպես տեսնում ենք, Նիկոլ Փաշինյանը չունի Վիլիելմ կայզերի հայրենասիրությունն ու պետականամետությունը, որպեսզի պետության շահը գերադասի իր պաշտոնից և այնուհետ, իսկ Հայաստանի զինվորականությունը, 2021 թ. փետրվարի 25-ին Նիկոլ Փաշինյանի հրաժարականը պահանջելով հանդերձ, չդրսևորեց Բոլիվիայի զինվորականության վճռականությունն ու պետականամետությունը՝ չկազմակերպելով զինված հեղաշրջում և պետության ղեկից չհեռացնելով երկիրը կործանման տանող ղեկավարին:

Ինչպիսի ճակատագիր կունենա կապիտուլյացված և Հայաստանն իր շահերի համար զոհաբերող Նիկոլ Փաշինյանը. ի վերջո կդրսևորի մի փոքր շրջահայացություն և ինքնակամ կհեռանա, օրենքի առաջ պատասխան կտա՞ կազմակերպված պարտության համար, թե՛ զոհաբերելով պետականությունը, հայ ժողովրդի ազգային շահերը, ի վերջո կարժանանա իր գաղափարակցի՝ «հող խաղաղության դիմաց» սկզբունքի հետևորդ Իցիակ Ռաբինի ճակատագրին... ■

**Ֆոտոմներ**

1. [http://www.historyofar menia-am.armin.am/am/Encyclopedia of armenian \\_history\\_Yervandunineri\\_Haykazyan\\_tagavorutyuny](http://www.historyofar menia-am.armin.am/am/Encyclopedia of armenian _history_Yervandunineri_Haykazyan_tagavorutyuny) (մուտք՝ 5.06.2022).
2. Մովսիսյան Ա., Հայոց 5000-ամյա պետականությունը, Եր., 2016, էջ 28:
3. <http://encyclopedia.am/pages.php?hlid=1325> (մուտք՝ 5.06.2022).
4. <https://antifake.am/am/news/18645> (մուտք՝ 5.06.2022).
5. <https://antifake.am/am/news/8394> (մուտք՝ 5.06.2022).
6. Նույն տեղում:
7. <https://antifake.am/am/news/9800> (մուտք՝ 5.06.2022).
8. Ղազարյան Ա., 1994 թ. Հորդանանախորհրդային խաղաղության համաձայնագիրը՝ որպես քեմիկալիտյան գործընթացի շարունակություն, «Կանթեղ», Եր., 2015, էջ 129, [http://arts.sci.am/files/pubs/20150709\\_125756\\_am\\_KANTEGH\\_1\\_2015.pdf](http://arts.sci.am/files/pubs/20150709_125756_am_KANTEGH_1_2015.pdf) (մուտք՝ 5.06.2022):
9. Մելքոնյան Ա., Կարսից Արցախ, «Դրօշակ», Եր., հոկտեմբեր, 2021, թիվ 10 (1656), էջ 30:

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ

ա) Գրականություն

1. Մովսիսյան Ա., Հայոց 5000-ամյա պետականությունը, Եր., 2016:
- բ) Մամուլ
1. Մելքոնյան Ա., Կարսից Արցախ, «Դրօշակ», Եր., հոկտեմբեր, 2021, թիվ 10 (1656):

գ) Համացանցային նյութեր

1. [http://www.historyofar menia-am.armin.am /am/Encyclopedia \\_of\\_ armenian \\_history\\_Yervandunineri\\_Haykazyan\\_tagavorutyuny](http://www.historyofar menia-am.armin.am /am/Encyclopedia _of_ armenian _history_Yervandunineri_Haykazyan_tagavorutyuny) (մուտք՝ 5.06.2022).
2. <http://encyclopedia.am/pages.php?hlid=1325> (մուտք՝ 5.06.2022).
3. <https://antifake.am/am/news/18645> (մուտք՝ 5.06.2022).
4. <https://antifake.am/am/news/8394> (մուտք՝ 5.06.2022).
5. <https://antifake.am/am/news/9800> (մուտք՝ 5.06.2022).
6. Ղազարյան Ա., 1994 թ. Հորդանանախորհրդային խաղաղության համաձայնագիրը՝ որպես քեմիկալիտյան գործընթացի շարունակություն, «Կանթեղ», Եր., 2015, [http://arts.sci.am/files/pubs/20150709\\_125756\\_am\\_KAN-TEGH\\_1\\_2015.pdf](http://arts.sci.am/files/pubs/20150709_125756_am_KAN-TEGH_1_2015.pdf) (մուտք՝ 5.06.2022):

# Համաթուրքականության-համաթուրանականության գաղափարախօսությունը սերմանող թուրք դեկավարներու և գործիչներու վարքագիծը (մաս 3 և վերջին)

Աւօ Գաթրճեան

Հրապակագիր, բանասէր, Հալէպի Հայագիտական հիմնարկի Հայ դատի դասախոս

Յեղապաշտական, ազգայնամոլական, այլամերժ, անհանդուրժողական, ատելութիւն ու յատկապէս հայատեացութիւն սերմանող գաղափարախօսութեան՝ թրքականութեան ամէնէն վաղ օրինակը կարելի է ներկայացնել Թուրքիոյ մէջ 1933-2013 տարիներու ժամանակահատուածը, երբ Թուրքիոյ բոլոր նախակրթարաններու աշակերտութեանը, վեցէն տասը տարեկան երեխաներուն պարտադրուած էր վարժարաններուն մէջ ամէն առաւօտ բարձրաձայն արտասանել «Ուսանողի երդումը» կամ «Երդում» խորագիրը կրող ցեղապաշտական երդումը, որ կարծէք զինուորական քայլերգ մը ըլլար:

«Երդում»-ին բնագիրը 1933 թուականին գրած է ընդամենը տասնութ ամիս կրթութեան նախարարի պաշտօնը վարած Ռեշիտ Կալիփը: Հետագային երդումը քանի մը անգամ վերամշակուած է (1972ին և 1997ին):

«Թուրք եմ, ճիշդ եմ, աշխատասէր եմ: Կ'առաջնորդուիմ՝ Փոքրերը պաշտպանել, մեծերը յարգել, Պետութիւնս, ազգս սեփական եսէն աւելի սիրել: Նպատակս բարձրանալ և առաջ երթալն է: Ո՛վ մեծ Աթաթուրք, կ'երդնում, որ քու բացած ճանապարհին, Քու ցոյց տուած նպատակին անդադար պիտի հետևիմ: Իմ ինքնութիւնը թող նուէր ըլլայ թրքական ինքնութեան: Երջանիկ է ան, ով կ'ըսէ՝ թուրք եմ»:

Տասնեակ տարիներ այսպէս դաստիարակուեցան Թուրքիոյ տարածքին ուսանող տակալին «ազգային», «քաղաքականութիւն» բառերուն և իմաստին գիտակ չեղող երեխաները:

Հոգեբանական առումով և մանկավարժական գիտութեամբ անընդունելի այս ընթացքը Թուրքիոյ մէջ տարիներ շարունակ ցեղապաշտութիւն և այլամերժութիւն ջանքեց երեխաներուն: Այդ փոքրիկները դպրոցական առաջին օրէն իրենք իրենց կարծես կը զգային ռազմի դաշտին մէջ՝ շրջապատուած թշնամիներով: Եւ այս անմեղ երեխաները պարտաւորուած էին իրենք զիրենք կոչել թուրք, պայքարիլ յանուն թուրք ազգի և աւելին՝ նուիրուիլ թրքութեան:

Հայկական վարժարաններուն մէջ այս երդումը շատ աւելի խստօրէն կը կիրարկուէր՝ հակառակ անոր, որ բոլոր աշակերտները և ուսուցիչներու մեծ մասը հայեր էին: Նոյնն էր պարագան յունական և հրէական



վարժարաններուն մէջ:

Վերոնշեալ՝ զինուորական քայլերգ յիշեցնող ցեղապաշտական երդումը, բարեբախտաբար, Թուրքիոյ մէջ ընդունուած «Ժողովրդավարացման ծրար»-ի շնորհիւ 2013էն յետոյ այլևս դուրս եկաւ գործածութենէ:

Հարկ է յիշեցնել, որ հայկական վարժարաններու մէջ պարտադիր է թրքերէնի և թրքական գրականութեան, պատմութեան, աշխարհագրութեան ուսուցիչներու՝ ազգութեամբ թուրք և նախարարութեան կողմէ յատուկ ընտրուած ըլլալը: Կայ նաև թուրք փոխտնօրէնի պաշտօնը վարող վերակացու, որ անվտանգութեան գաղտնի աշխատակից է: Այս «մասնագէտները», բացի թրքութիւնը և անոր բարձրութիւնը քարոզելէ, շատ փոքր տարիքէն ծածուկ կերպով կը բացատրեն ոչ թուրք աշակերտներուն «Երջանիկ է ան, ով կ'ըսէ՝ թուրք եմ» խօսքի իսկական իմաստը, այսինքն՝ «Եթէ չես ըսեր՝ թուրք եմ, եթէ չես դառնար թուրք, ուրեմն այս երկրին մէջ երջանիկ ըլլալ չես կրնար»:

Թուրքիոյ դպրոցներուն մէջ շաբաթական երկու անգամ դպրոցի բացման և փակման օրերուն, պարտադիր կ'երգուի Թուրքիոյ ազգային օրհներգը՝ «Իպթիքլալ Մարշըլ» («Անկախութեան քայլերգ», կ'երգուի նաև չճանչցուած Հիւսիսային Կիպրոսի թրքական հանրապետութեան մէջ): Հայկական վարժարաններու մէջ այս կիրառումն ալ որոշ առումներով աւելի «հետաքրքրական» է: Քայլերգը երգելու ժամանակ դպրոցի բակին մէջ շարուած աշակերտներու շարքերուն առջևէն աջալորջ կ'անցնի թուրք փոխտնօրէնը, որ կը հետևի, որ բոլորը բարձրաձայն երգեն, և յանկարծ ուէ մէկը չփորձէ միայն շուրթերը շարժել: Նոյն փոխտնօրէնը կը հետևի նաև, որ բոլորը հերթով բռնեն թրքական դրոշմը, և ոչ ոք չխուսափի դրոշմ բռնելու իր «պատուաւոր» հերթէն, նոյնիսկ եթէ երեխան ֆիզիքապէս ի վիճակի չէ պահելու բաւական ծանր դրոշմը: Նման պարագաներու

## Քաղաքական

կասկածամիտ փոխտնօրէնը յատուկ տեղեկանք կը պահանջէ բժիշկէն, որ տուեալ աշակերտը ի վիճակի չէ կրելու թրքական դրօշի ծանրութիւնը:

Վարժարաններու ցեղապաշտ ու այլամերժ այս փոխտնօրէնները հայ երեխաները կը նկատէին իրենց թշնամիները, այդ պատճառով այլ հայ երեխաները կ'անուանէին «հայու սերմ»:

Թուրքիոյ ազգային օրհներգի առնչութեամբ կայ այլ իրողութիւն մը ևս. Թուրքիոյ մէջ տարիներ շարունակ բազմաթիւ քաղաքացիներ ծեծի ու խոշտանգումներու ենթարկուեցան թրքական օրհներգը երգելէ հրաժարելու համար: Այսպէս՝ յատկապէս 2021 թուականին Թուրքիոյ Շըրնաք շրջանին մէջ խիստ ուժեղ քանտին մէջ բանտարկուած այն քիւրտ քաղաքական բանտարկեալները, որոնք չէին երգեր Թուրքիոյ օրհներգը, կ'ենթարկուէին մարմնային բռնութիւններու՝ ծեծի ու խոշտանգումներու:

Թուրքիոյ այժմու նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան իր ցեղապաշտական և ազգայնամոլական նկրտումները յաճախ և ամէն տեղ ու ամէն աղիթի տարբեր ձևերով արտայայտած է, շատ անգամ նոյնիսկ ան «Գորշ գայլեր» կազմակերպութեան՝ ձեռքով բարևելու գորշ գայլի նշանը կը կատարէ առանց վարանելու:

Թրքական «Հիրրիյէթ» օրաթերթը կը հաղորդէ, որ Եվրոպական խորհուրդի ցեղապաշտութեան և անհանդուրժողականութեան դէմ եվրոպական յանձնախումբը իր մտահոգութիւնը յայտնած է Թուրքիոյ մէջ կրօնական, սեռային և ազգային փոքրամասնութիւններուն դէմ ատելութեան խօսքին և բռնութեան աճին առնչութեամբ: Յանձնախումբը, մասնատրաբար յիշեցնելով հայերուն դէմ Էրտողանի ոչ պատշաճ արտայայտութիւնները, նշած է, որ պետութեան բարձրաստիճան ղեկավարներուն կողմէ ատելութեան խօսքը մտահոգութեան առանձնայատուկ նիւթ է:

Յանձնախումբը անդրադարձած է օգոստոս 2014ին Էրտողանի ըրած այն յայտարարութեան, որուն մէջ ան նշած էր. «Անոնք ինձի ըսած են, թէ վրացի եմ... մինչև իսկ անելի վատ բաներ ըսած են: Անոնք զիս անուանած են, ներեցէք արտայայտութեանս համար, հայ, սակայն ես թուրք եմ»: «Ցեղապաշտութեան և անհանդուրժողականութեան դէմ եվրոպական յանձնախումբը խստօրէն կը յորդորէ պաշտօնատարները և քաղաքական ղեկավարները դադրեցնել ատելութիւն պարունակող խօսքը: Խորհրդարանը և կառավարութիւնը պէտք է ընդունին օրէնքներ, որոնք կ'արգիլեն ատելութեան խօսքը», - 4 հոկտեմբերին կ'ըսուի հրապարակուած զեկուցումին մէջ: Այստեղ բնականաբար կ'ընդգծուին համաթրքութեան համաթուրանականութեան ծրագրէն մղուած այլամերժութիւն, անհանդուրժողականութիւն և հայատեսացութիւն:

9 ապրիլ 2016ին՝ Շուէտի ատրպէյճանական, թրքական և թուրքմենական շարք մը համայնքային կազմակերպութիւններու կողմէ Սթըքհոլմի կեդրոնը կազմակերպուած ցոյցի մը ընթացքին, Շուէտի

թրքական կազմակերպութիւններու համադրող կեդրոնի նախկին փոխնախագահ Պարպարոս Լէյլանի հանդէս եկաւ բացայայտ հայատեսաց և ազգայնամոլական յայտարարութիւններով:

Լէյլանին կատարած է ազգային խումբի դէմ ատելութեան սերմանումի յանցագործութիւն՝ ծանրացուցիչ հանգամանքներով:

Սթըքհոլմի դատարանը 14 դեկտեմբեր 2016ին վճիռ արձակած է Շուէտի թրքական կազմակերպութիւններու համադրող կեդրոնի փոխնախագահ Պարպարոս Լէյլանի գործին առնչութեամբ: Լէյլանիի ազգայնամոլական և հայատեսաց վարքագիծը որակուած է իբրև քրէական յանցագործութիւն:

Յիշեցնենք, որ 9 ապրիլ 2016ին Շուէտի թուրք աշխատատեղերու ընկերութիւններու դաշնակցութիւնը շուէտաբնակ ատրպէյճանցիներու հետ Սթըքհոլմի մէջ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան դէմ ատրպէյճանական զինուորական յարձակումին կապակցութեամբ «Թուրք, արթնցիր» կոչերով հակահայկական հաւաք կատարած էր: Այս դաշնակցութեան փոխնախագահ Լէյլանի իր թրքերէն խօսքին մէջ ըրած էր շարք մը հակահայկական, ազգայնամոլական յայտարարութիւններ՝ մասնատրաբար ըսելով. «Հասած է թուրք ազգի միատրուելու ժամանակը: Թուրքը կ'արթնայ, հայ շուներուն վերջ պիտի տրուի: Մահ հայ շուներուն: Մահ: Մահ: Կը դիմեմ հաւատացեալ մարդոց: Խօսք մը կայ՝ հայրենիքի նկատմամբ սերը կը բխի հաւատքէն: Հայրենիքը ուրիշին չի տրուիր: Եկած է թրքական հանրապետութիւններու միատրուելու ժամանակը, անիկա արդէն հասունցած է: Բոլորին շտրիակալութիւն, որ եկած էք: Ասով մենք սքանտիսաւեան բոլոր երկիրներուն, Եւրոպային ցոյց կու տանք, որ մենք արին չենք սիրեր, սակայն պատրաստ ենք արին թափելու»: Անոր «Մահ հայ շուներուն, մահ, մահ» վանկարկումներուն միացած էին ցոյցին մասնակիցները:

Միջադէպը 11 ապրիլին լայն արձագանգ գտած էր շուէտական մամուլին մէջ: Շուէտահայ համայնքի բազմաթիւ կազմակերպութիւններ և անհատներ բողոք ներկայացուցած էին Շուէտի ոստիկանութեան՝ տուեալ անձին դէմ դատ յարուցելու պահանջով: Մեծ աղմուկին պատճառով Լէյլանի հեռացուած էր կազմակերպութեան մէջ վարած իր պաշտօնէն և ներում հայցած իր արտայայտութիւններու համար:

Անհրաժեշտ կը համարենք ուշադրութիւն դարձնել նաև հետևեալ հանգամանքի վրայ: Թաթար-ատրպէյճանցիները (հասկնալ՝ թուրք-ազերիները) ևս, իրենց «երեց եղբօր»՝ Թուրքիոյ օրինակին հետևելով, մասնեցան համաթրքականութեան գաղափարախօսութեամբ, Անդրկովկասի մէջ կազմակերպեցին հայկական կոտորածներ. առաջինը 1905ին հայթաթարական ընդհարումներն էին:

Հայ-թաթարական կոտորածներու տպաւորութեան տակ ատրպէյճանցի յայտնի կին գրող Ում-Էլ-Պանինը (Banin), որ իր մանկութիւնը անցուցած է Պաքուի մէջ, 1945 թուականին Փարիզի մէջ լոյս կ'ընծայէ ֆրանսերէն «Jours caucasiens» («Կովկասեան օրերը») նշանաւոր

ինքնակենսագրական վեպը: Անոր մէջ ընդգրկուած են հայ-թաթարական ընդհարումները: Պանին վեպին մէջ հարազատօրէն կ'արտացոլացնէ ցեղապաշտութեան և ազգայնամոլութեան վառ օրինակներ:

Ֆրանսաբնակ թաթար (հետագային՝ ազերի) գրող Ումուլպանու Էսատուլլանա (որոշ աղբիւրներու մէջ՝ նաև Ում-Ալ-Պանու, Պանին) ծնած է 1905 թուականին Պաքու՝ յայտնի պաքուեցի միլիոնատէր Շամսի Էսատուլլանի որդւոյն ընտանիքին մէջ: Պանինի մեծ հայրը եղած է պաքուեցի մէկ այլ յայտնի միլիոնատէր՝ Մուսա Նակիկը: 1920էն յետոյ Պանինը գաղթած և հաստատուած է Փարիզի մէջ:

Փարիզի մէջ ան իր ապրուստը վաստկած է խանութներու մէջ՝ աշխատելով որպէս վաճառողուհի, ապա դարձած է բարձր նորաձևութեան բնորդ (մոտել): Այնուհետև սկսած է զբաղելու թարգմանութիւններով, լրագրութեամբ, ֆրանսերէն ռատիոհաղորդումներ պատրաստելով:

Այսպիսով՝ ան յայտնի դարձաւ Փարիզի գրական, մասնատրապէս ռուս վտարանդի գրողներու շրջանակներուն մէջ, որոնք կը կազմէին ներգաղթեալ վերնախաւի սերտ խումբը:

«Կովկասեան օրերը» վեպը հիմնուած է հեղինակի կենսագրութեան վրայ և մանրամասն կը ցոյցացնէ 20րդ դարակիզբի Ատրպէյճանի պատմութիւնը, անոր աւանդութիւնները, կենցաղը և մշակոյթը: Վեպին մէջ արտացոլուած են երիտասարդ հերոսի վերաբերմունքը մարդոց ու շրջապատի նկատմամբ, ժամանակակիցներու տրամադրութիւնները և անոնց վերաբերմունքը շրջապատող իրադարձութիւններու նկատմամբ: Բացի այդ՝ Պանինը իր վեպին մէջ մանրամասն կը գրէ հայ-ատրպէյճանական հակամարտութեան, Պաքուի մէջ, այսպէս կոչուած, «ատրպէյճանցիներու ջարդերու», ժողովրդավարական հանրապետութեան ստեղծման ու փլուզման և վերջապէս՝ Կարմիր բանակէն յետոյ իր ընտանիքի հետ պատահած ողբերգութիւններու մասին:

«Կովկասեան օրերը» վեպը առաջին անգամ ֆրանսերէնէ ատրպէյճաներէն ( «Qafqaz Günleri») թարգմանած է Համլետ Կոճանը 1989 թուականին, և քանի մը անգամ վերահրատարակուած է: Վեպը վերջին անգամ լոյս տեսած է 2006 թուականին «Քաֆքազ» հրատարակչութեան կողմէ: Հետաքրքրականն այն է, որ բոլոր հրապարակումներու մէջ կը հանդիպինք վեպի քանի մը կրճատ հատուածներու: Եզրափակելով նշեմ, որ թարգմանութեան կրճատ տեղերը պէտք է ըլլան գիրքի III գլխուն մէջ՝ 49րդ էջը:

Պանին «Կովկասեան օրեր» գիրքին մէջ կը գրէ. «Տօնական օրերուն մենք կը խաղայինք «հայերու սպանդ» խաղը, զոր կը գերադասէինք բոլոր միւս խաղերէն: Մեր մոլեռանդ կիրքերով արբեցած՝ մենք կը զոհաբերէինք Թամարը (մօր կողմէ հայուհի) մեր խոովարար ատելութեան զոհաստղանին վրայ: Սկիզբը քմահաճօրէն զայն կը մեղադրէինք իբրև մեղսակից իսլամի մը սպանութեան և անմիջապէս կը գնդակահարէինք՝ կրկնելով քանի մը անգամ իրարու ետևէ, որպէսզի վերաթարմացնէինք հաճոյքը: Յետոյ

կը պոկէինք անոր անդամները՝ լեզուն, գլուխը, ներքին օրկանները, զորս կը շարտէինք շուներուն իբրև արհամարհանք հայկական մարմնին»:

Այսպիսի խաղերով դաստիարակուած պաքուցի երեխաները հետագային դարձան անկախ Ատրպէյճանի ղեկավարներն ու զինուորները, որոնք տևաբար իրագործեցին պատմութեան մէջ ամէնէն հրէշային բարբարոսութիւնները: Հայ-թաթարական/ատրպէյճանական ջարդերն ու բռնութիւններն ընթացած են հինգ հիմնական փուլերով՝ 1905-1906, 1918-1920, 1991-1994 (Մուկլայիթի կամ Պաքուի), 2-6 ապրիլ 2016 (արցախեան քառօրեայ պատերազմ) և 2020 թուականներուն:

Մուկլայիթի հայերու ջարդերը, բացառիկ դաժանութեամբ կատարուած գազանութիւններն ու սպանութիւնները, մարմիններու անդամահատումն ու ծեծը, յղի կիներու որովայնի դաշունահարումն ու ողջակիզման դէպքերը տեղի ունեցան օր ցերեկով, բազմաթիւ անցորդներու աչքին առջև:

Արդարև, համաթուրանականութեան քաղաքակա-նութիւնը միշտ կենդանի է թուրք-թաթար քաղաքական ղեկավարութեան և մտատրականութեան միտքին ու յիշողութեան մէջ:

Համաթուրանական ու համաթուրանական ծրագրին հետևող տարածաշրջանի երկու եղբայրներ՝ թուրքեր և թաթար-ազերիներ, կ'երազէին իրարու միանալ: Պաքուն ցեղային գտման առաջին փորձն էր, որ կը հետապնդէր Թուրքիոյ միանալու կամ նորանկախ թրքական պետութիւն ստեղծելու հեռանկարներ: Չէ բացառուած նաև, որ դեռ 1905 թուականին Թուրքիոյ մէջ կը քննարկուէր մեր տարածաշրջան ուղղակի ռազմական արշաւանք ձեռնարկելու հարցը: Եթէ այդպէս է, ապա Պուլիսը ուղղակի ժամանակ չունեցաւ, քանի որ հայերը կրցան արագ ու կոշտ ճնշել Պաքուի ջարդարարները:

Հայ ժողովուրդը Ատրպէյճանի՝ հայութեան նկատմամբ ատելութեան, անհանդուրժողականութեան և ցեղասպանական նկրտումներուն քաջածանօթ է: 1918ին Ատրպէյճանի Հանրապետութեան հիմնադրութենէն ի վեր երկրի բոլոր նախագահներն ալ գործնականօրէն հետևած և իրագործած են համաթրքական-համաթուրանական ծրագիրները:

9 նոյեմբեր 2020 թուականէն յետոյ Ատրպէյճանի նախագահ Իլիհամ Ալիև հրապարակայնօրէն ատելի ռազմատենչ, ցեղապաշտական ու հակահայկական ելոյթներ ունեցաւ և մինչև այսօր կը շարունակէ վարել հայատեաց քաղաքականութիւն: Անոր վառ օրինակը 27 սեպտեմբեր 2021 թուականի ամբողջական ուղերձն է, որուն իրաքանչիւր պարբերութեան մէջ Ալիև հայերը կ'անուանէ ֆաշիստ, թշնամի, կը պնդէ, որ Հայաստանի Հանրապետութիւնը ատրպէյճանական պատմական տարածք է: Ալիևի նմանատիպ հրապարակային յայտարարութիւնները միշտ ալ կը վկայեն, որ Ատրպէյճանը պատրաստ չէ խաղաղութեան: Անոր վառ ապացոյց են Ատրպէյճանի մէջ հայատեացութեան քարոզը, հայկական մշակութային յուշարձաններու պղծումը և ոչնչացումը, հայ ռազմագերիները

## Քաղաքական

կտանքներու ենթարկելը և սպաննելը:

Հայ ժողովուրդի անմիջական դրացի թուրք և ազերի (նախապես թաթար) ժողովուրդներու արմատներուն պէտք է քաջածանօթ ըլլալ, նաև անոնց ուղղուածութեան, գաղափարախօսութեան և մարմնազնեւումն ու յատկապէս մեծ պետութիւններու ախորժակներուն, որոնց պատճառով ու հրահրումով Անդրկովկասի տարածաշրջանին մէջ տեղի ունեցան հայ և թաթար (այժմ՝ ազերի) ժողովուրդներու իրարայաջորդ հակամարտութիւնները և անոնց հետևանքով յառաջացած արինահեղութիւնները:

Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան 25 փետրուար 2021ին Պաքու իր այցելութեան ընթացքին անգամ մը ևս յայտարարեց, որ Թուրքիա և Ատրպէյճան միաձայն են թէ՛ երկկողմանի կապերը, զինակցութիւնը սերտացնելու և թէ՛ հակահայ մարտավարութիւնը աւելի ևս զարգացնելու նպատակով: Էրտողանի այցելութեան անմիջական շարժառիթն էր Թուրքիա-Ատրպէյճան ռազմական գործակցութեան գերագոյն խորհուրդի նիստը, որուն մասնակցեցան երկու պետութիւններու աւագանիները, և որն արդիւնատուրուեցաւ Իլիհամ Ալիևի հետ շարք մը համաձայնագիրներու ստորագրութեամբ:

Ըստ թրքական ու ատրպէյճանական աղբիւրներու՝ օրակարգի վրայ էին շուրջ 15 համաձայնագիրներ, որոնք կը նպատակադրեն զարգացնել երկու երկիրներուն միջև գործակցութիւնը քաղաքական, զինուորական-զինական, տնտեսական, մարզական, արհեստագիտական, ցամաքային ճամբորդութեան, քարիւղ-կազի արտածման և այլ բնագաւառներու մէջ:

Ուշագրաւօրէն մտահոգիչ էր, որ գերատիժանի աւարտին՝ երկու «եղբայրներուն» միացեալ մամուլը ասույիսին, համառօտ ակնարկութիւններ արուեցան գործակցական հորիզոններուն, իսկ լայնածաւալ բաժինը Արցախի հարցն էր: Էրտողան առանց տատանելու յայտարարեց, որ «Լեռնային Ղարաբաղի հարցը միայն Ատրպէյճանի խնդիրը չէ», և Թուրքիա պիտի աջակցի իր «եղբոր» (անոր նախընտրած ձևով) լուծումի հասնելու:

Պարզամիտ պէտք չէ ըլլալ: Թուրքիոյ խնդիրը Արցախը չէ, այլ ընդհանրապէս Հայաստանը և հայ ժողովուրդը և անոնցմէ՛ անդին...

Էրտողանի գորշգայլային խորամանկութիւնը և նոյնիսկ անոր նման նախորդները և ապահովաբար նաև յաջորդները, ինչ որ ալ ըլլան պայմանները, պատմութեան մոռցումը էջերէն չեն կրնար ջնջել Հայկական հարցը և Մեծ եղեռնը, որ Հայոց ցեղասպանութիւնն է: Էրտողան զիտակից է այս իրողութեան և կը խորհի, որ համաթրքական-փանթիւրքիստ օվկիանոսին մէջ կրնայ վերջ տալ Հայկական հարցին-Հայ դատին՝ ճզմելով նաև Հայաստանը:

### Եզրակացութիւն

«Համաթրքականութեան-համաթուրանականութեան գաղափարախօսութիւնը սերմանող թուրք դեկավարներու վարքագիծը» խորագիրը կրող ուսումնասիրական այս աշխատութեամբ փորձեցինք



*Թուրանի որոշը, շուրջը թրքացել ժողովուրդներու փարածքներու որոշներ*

ներկայացնել համաթրքականութեան-համաթուրանականութեան գաղափարախօսութիւնը ծնունդէն ի վեր սերմանող շարք մը մտաւորականներ, դեկավարներ և գործիչներ ու անոնց կատարած կարգ մը յայտարարութիւնները: Այս աշխատութեան մէջ բերուած օրինակներու շարանը կարելի էր երկարել:

Փաստերու վրայ հիմնուած ներկայ աշխատութեան մէջ փորձ արուեցաւ վերլուծելու և ներկայացնելու համաթրքութեան-համաթուրանականութեան գաղափարախօսութիւնը, անոր հիմնախնդիրները, անոր հետևողներուն տեսակէտները, խորհուրդներն ու պատգամները, նաև այդ գաղափարախօսութեան ճամբուն վրայ տեղի ունեցած իրադարձութիւնները:

Միւս կողմէ՝ ներկայացուցանեցան գաղափարախօսութիւնը ծաւալելու գործունէութեան հիմնական ուղղութիւնները, և հերթաբար առանձնացուցանեցան անոր անցած կարևորագոյն փուլերը, ինչ որ հնարատրութիւն կու տայ աւելի յստակ պատկերացում կազմելու համաթրքականութեան-համաթուրանականութեան վարքագիծի և նպատակադրութեան մասին:

Իբրև եզրակացութիւն կարելի է ըսել, որ յստակ է բոլորին համար, նոյնիսկ միջազգային կարծիքին համար, որ հայութեան դիրքորոշումը հետևանք է ոչ թէ երկու ժողովուրդներուն պատմական համահասարակ առճակատումի, այլ Թուրքիոյ կողմէ՛ մեր ժողովուրդին դէմ ծրագրուած ու կազմակերպուած դարատր հալածանքին, բնաջնջման և հայրենազրկման, իսկ Թուրքիոյ թշնամական քաղաքականութիւնը ոչ թէ պայմանաւորուած է հայութեան՝ թուրք ժողովուրդին նկատմամբ ֆիզիքական հաշուեյարդարներու յերիւրածին ու երևակայածին ծրագիրներով, այլ անմիջական շարունակութիւնն է համաթրքականութեան: Անգարա անշեղօրէն կը շարունակէ իր ցեղապաշտական քաղաքականութիւնը մինչև օրս, մինչև պահս անթաքոյց ու անարգել: Եւ ոչ միայն Հայաստանի, այլև համայն հայութեան դէմ:

Այստեղ մէկ անգամ և ընդմիշտ կը յստակեցուի Թուրքիոյ երազանքը, որ սկիզբէն ի վեր



Հայաստանին տիրանալն է և այդ տարածքին վրայ ապրող հայ ժողովուրդը բնաջնջելը կամ թրքացնելը: Ուստի վերոնշեալ մեկնակետէն ելլելով է, որ Հայոց ցեղասպանութեան հարցին արմատը համաթրքականութեան յայտնի մոլորութիւնն է՝ իր համիտեան, երիտթրքական և քեմալական դրսևորումներով, որ կը մնայ էական գիծը Թուրքիոյ քաղաքականութեան մինչև այսօր: Միս կողմէ՝ նոյն արմատներէն ծնունդ առած է նաև Ատրպէյճանը 1918 թուականին. 1911ին Պաքուի մէջ կը հիմնուի մուսաւաթական կուսակցութիւնը, որուն հիմնադիրներ Ռասուլզատէն, Քազեմզատէն և Շարիֆզատէն, համաթրքական գաղափարներէ ելլելով, կը հովանաւորուէին Օսմանեան Թուրքիոյ կողմէ, իսկ արդէն 1918 թուականին առաջին անգամ Առան և Շիրվան տարածքներու մէջ կը հռչակուի պետութիւն մը, որ կը կրէ Ատրպէյճանի Հանրապետութիւն շինծու անունը: Փաստօրէն, թուրք-ատրպէյճանական համաթրքականութեան աքցանին մէջ բռնուած է Հարաւային Կովկասը վերջին հարիւր տարուան ընթացքին: Այս խնդիրն է, որ այժմ կը դրուի հայոց անկախ պետականութեան առջև իր բազմաթիւ անհնգեալ ձևերով: Եւ այս խնդիրն է, որուն վերաբերմամբ յստակ քաղաքական ռազմավարութիւն չէ մշակուած ո՛չ Արևմուտքի և ո՛չ ալ Ռուսաստանի կողմէ, որոնք կոչուած են տարածաշրջանի կայունութեան երաշխաւորներն ըլլալու:

Ակնյայտ իրողութիւն է նաև, որ Թուրքիա սուլթանական շրջանէն առ այսօր հետապնդած է իր համաթրքականութեան-համաթուրանականութեան ծաւալապաշտական ծրագիրներու իրականացումը:

Ներկայ օրերու համաթրքականութիւնը համաթուրանականութեան գաղափարին վերարտադրութիւնն է, որուն իրական քաղաքական դաշտը այսօր Կովկասն է՝ իր անմիջական հարևանութեամբ: Թուրքիա և Ատրպէյճան հետևողական ճիգեր կը գործադրեն համաթուրանական դրօշի տակ հաւաքելու նաև Կեդրոնական Ասիոյ ժողովուրդները, սակայն առանց նշանակալի յաջողութեան:

Վստահօրէն կրնանք ընդգծել, որ հայ ժողովուրդի ողբերգութիւնը կը բխի Թուրքիոյ և Ատրպէյճանի իշխանութիւններու քաղաքականութենէն, որ սկիզբէն ի վեր եղած է համաթրքութեան-համաթուրանականութեան ծրագրի իրագործումը: Այսպիսով՝ ցեղասպան երկու եղբայրներու ծաւալապաշտական ծրագիրները իրականացած են, երբ Արևմտեան Հայաստանը յօշոտուած է Թուրքիոյ սուլթանական շրջանէն (համիտեան)՝ շարունակուելով երիտթրքական, քեմալական և մինչև օրս Էրտողանի սաղայելական դրսևորումներով, իսկ Արևելեան Հայաստանն ալ՝ Ատրպէյճանի կողմէ՝ սկսած Մեհմետ Էմին Ռասուլզատէէ, անցնելով Այազ Մոլթալիպովէ, Ապուլֆազ Էլչիպէէ, Հայտար Ալիէ և հասնելով Իլիհամ Ալիևին:

Վերջապէս, համաթրքականութեան-համաթուրանականութեան ծրագիրով Հայաստան Թուրքիոյ համար ճանապարհ է դէպի Կեդրոնական Ասիա,

իսկ Ատրպէյճան Հայաստանի համար ելք է դէպի Կեդրոնական Ասիա, սակայն այստեղ խիստ կարևոր է ընդգծել, որ հայերս դէպի Կեդրոնական Ասիա ծաւալելու ծրագիր չունինք երբեք:

Համաթրքականութեան-համաթուրանականութեան ծրագիրով, անշուշտ Հայաստանի գրաւումով, Հայաստան Ատրպէյճանի համար ելք է դէպի Թուրքիա, այսպիսով նաև՝ դէպի Եւրոպա, որ առաւել ցեղապաշտ թուրքերու ախորժակները կը սրէ Հայաստանը գրաւելու համար:

Թուրքիա և Ատրպէյճան Հայաստանի թշնամի դրացիներ են, և անոնց վարած քաղաքականութիւնը կը վկայէ, որ անոնք չեն պատրաստուիր հրաժարելու անելիքն մէկ դար առաջ սկսած և մինչ օրս շարունակուող ցեղասպանական գործողութիւններէ: Չեն հրաժարած երբեք համաթրքութեան՝ Արևելահայաստանը ևս գրաւելու ծրագրէն: Ուստի թուրք և ազերի իշխանութիւններու համար բոլոր բնագաւառներուն մէջ ի գօրու է և կիրարկելի համաթրքականութեան-համաթուրանականութեան չհինցող թղթածրարը:

Թուրքիոյ և Ատրպէյճանի կողմէ պետական մակարդակով իրականացուող հայատեացութեան քաղաքականութիւնը նոր չէ, անելին՝ այս երևոյթը տարիներու ընթացքին դարձած է թրքական և ատրպէյճանական ինքնութեան անբաժանելի մէկ մասը, իսկ տագնապի պայմաններուն մէջ Թուրքիոյ և Ատրպէյճանի իշխանութիւններուն կողմէ կ'օգտագործուի իբրև սեփական ժողովուրդը մոլորեցնելու և հայկական հողատարածքներու՝ պատմական Հայաստանի, Նախիջևանի, Ջաւախքի և Արցախի մասին թիր տեղեկութիւններ տարածելու գործիք:

Այս ուսումնասիրութեամբ, երբ յետադարձ հայեացքով լուսարձակի տակ կ'առնենք են պատմութիւնը, են մինչև մեր օրերը շարունակուող բանաւոր և գրաւոր, քաղաքական, մտատրական, մշակութային և ռազմական ելևէջներու ծալքերը, խիստ ուսանելի դասերու և խորհուրդներու ամբողջ թղթածրար մը կը բացուի մեր առջև:

ա. Համաթրքականութեան-համաթուրանականութեան հիմնադիրներու, տեսաբաններու և մտաւորականներու ցեղապաշտական և ազգայնամոլական տեսակետները, գրական ստեղծագործութիւնները, մտածումներն ու յայտարարութիւնները կը մնան նոյն ուժգնութեամբ, հզօրութեամբ և ազդու:

բ. Զանոնք հող գտած են ոչ թէ թրքացեղ ժողովուրդներու մէջ միայն կամ անոնց հողատարածքներուն վրայ, այլ անելի անդին՝ համայն աշխարհի տարածքին, իսկ անելի ցաւալին, որ հայ ժողովուրդի փոքր հատուածի մէջ անգամ կը հանդիպինք հայրենակործան այս վարդապետութեան գաղափարակիցներուն:

գ. Ցեղապաշտական այս գաղափարախօսութիւնը ծնունդէն ի վեր և ոչ մէկ ատեն կանգ առած է, ընդհակառակը՝ տեսականէն անցած է գործնականի:

Անհրաժեշտ կը նկատենք ներկայ աշխատութեան մէջ կատարուած յայտնաբերումներն ու վերլուծումները ամբողջացնելու նպատակով կատարել կարգ մը

եզրայանգումներ.

ա. Փաստօրէն հաստատուեցաւ, որ համաթրքականութեան-համաթորանականութեան գաղափարախօսութեան հետևողները ջարդարար գործունէութիւն ծաւալեցին տարածաշրջանին մէջ բնակող իրաւատէր ժողովուրդներու, ամէնէն հիմնականը՝ հայ ժողովուրդին հանդէպ: Անխնայ իրականացուեցան ցեղասպանութիւն, եղեռն, ջարդ, կոտորած, յետոյ՝ հողերու բռնագրաւում:

բ. Եթէ Հայոց ցեղասպանութեամբ բռնագրաւուեցաւ Արևմտեան Հայաստանը, ապա հայ-թաթարական ընդհարումներով և անկէ յետոյ ալ հանգրուանային կերպով բռնագրաւուեցան Արևելեան Հայաստանի հողատարածքները, օրինակ՝ Նախիջևանը, Արցախը:

գ. Ատելութիւն պարունակող խօսքը լայնօրէն կիրարկուած է հասարակական անձերու և մտատրականներու կողմէ, ինչպէս նաև լրատուամիջոցներուն մէջ:

դ. Ատելութիւն քարոզող անձեր անպատիժ մնացած են և կը մնան մինչև օրս:

ե. Այդ քարոզիչներուն սադրանքներուն, հրահրումներուն ու պնդումներուն հետևանքով հայերու նկատմամբ կիրարկուած են ջարդեր, կոտորած, սպանդ, եղեռն, ցեղասպանութիւն, գաղթ, բռնաբարում, սրբապղծում, ինչքերու յափշտակում, հողային բռնագրաւում և այլն:

զ. Վերլուծական վերջին տուեալներով՝ լրատուութեան մէջ չորս անգամ անեցած է ատելութեան քարոզը:

է. Այլատեացութեան՝ իբրև ժամանակակից աշխարհին մէջ մարդկութեան սպառնացող ամէնէն մեծ մարտահրաւերներէն մէկի դէմ անհրաժեշտ է, որ միասնաբար պայքարինք: Այս ուղղութեամբ յաջողութեան կարելի է հասնիլ, եթէ բոլորին կողմէ ընկալելի ըլլայ այն գիտակցումը, որ այլատեացութեամբ թունաւորուած հանրութիւնը երբեք և որևէ պարագայի չի կրնար հասարակական և համամարդկային արժէք ստեղծել:

ը. Համաթրքական կազմակերպութիւններու գաղափարական ակունքներն ու սկզբունքները նոյնն են: Բոլորն ալ կը բխին համաթորք նոյն տեսաբաններու և քաղաքական գործիչներու միտքերէն: Սակայն ամէն մէկը իր երկրի պայմաններու հիման վրայ կ'աշխատի: Եթէ Սուրիոյ, Իրանի կամ նոյնիսկ Իրաքի մէջ բացայայտ կերպով չեն կրնար ըսել, որ իրենք կը հետապնդեն համաթրքական նպատակներ, այդ մէկը կ'իրագործեն մշակութային, կրթական, մարզական և այլ բնագաւառներու ընդմէջէն, ինչպէս որ է պարագան Երուսալի մէջ:

թ. Այս տեսակի աշխատանքները խիստ կարևոր է, որ թարգմանուին օտար լեզուներու, որպէսզի Հայոց ցեղասպանութեան և Արցախի հիմնահարցերու լուրջ ու մտածուած բացատրութիւն մը բիրեղանայ:

Ներկայ աշխատութեան մէջ պարզ կը դառնայ, որ թորքիզմի հետևանքները չափազանց վտանգատր են հայութեան համար, վկայ թորքիզմի տեսաբան Զիյա Կէօքալիի սպառնալից կարգախօսք՝ «Բոլոր



Էրուողան շրջապարուած թրքացեղ բանակներու գինվորներու փարագ հագած թիկնագորով

թորքերը մէկ բանակ են», որ կը նշանակէր «մահ հայերուն»: Զիյա Կէօքալիի յոյսած այս կարգախօսն էր, որ շարժառիթը եղաւ Հայոց ցեղասպանութեան իրագործման, հագարատր հայերու սպանութեան, բռնագաղթի, տեղահանութեան, թրքացումի, բռնագրաւումի, մշակութային ցեղասպանութեան և այլ աղէտալի իրադարձութիւններու՝ շարունակուելով և 1988 թուականի փետրուարին հասնելով Սումկայիթի, Պաքուի և Կիրովապատի (Գանձակ) ջարդերուն, հասնելով արցախեան քառօրեայ և 44օրեայ պատերազմներուն, որոնք նոյն բանը կը վկայեն: Յեղապաշտ ատելութեան ամենասն և բարբարոսական էջերը գրուեցան պատմութեան մէջ:

Յեղապաշտներուն հիմնական նպատակն էր և է հայ ժողովուրդը զրկել հայրենիք ունենալու իրաւունքէն, ամէն միջոց ի գործ դնելով՝ հայերը բնաջնջել վերացնելու համար համաթորանականութեան ճամբուն վրայ գտնուող խոչընդոտը:

Վերջապէս, մէկ անգամ ընդմիշտ պէտք է ըմբռնել, որ համաթրքականութեան-համաթորանականութեան տեսլականը իբրև գաղափար և վարքագիծ, կենդանի է բոլոր թրքացեղ ժողովուրդներու առօրեային մէջ: Պահելով անոնց պատմական տրամաբանութիւնը՝ պէտք չէ մտահան ընել, որ այս գաղափարախօսութեան կողմ եղողները ամէն տեղ են, ամէն վայրկեան՝ տեսական ու գործնական աշխատանքներով: Ուստի համաթրքականութեան-համաթորանականութեան յառաջխաղացքը կասեցնելու առումով իւրաքանչիւր հայու պարտականութիւնն ու պարտաւորութիւնն է ըլլալ արթուն, միակամ և խոհեմ՝ հեռու մնալով ներքին առճակատում ու անհանդուրժողութիւն յառաջացնող մօտեցումներէ:

Ուսումնասիրութեան արդիւնքով շեշտադրուած իրողութիւն է, որ թորքին հետ կարելի չէ երբեք խաղաղ



Ապուլֆազ Էլչիպեյ, Ալփարսլան Թյուրքեշ

համակեցություն ունենալ:

Հիմնատրեղով մեր վերլուծությունը՝ հարկ կը համարենք շեշտադրել համահայկական ծրագիրներու իրականացման մէջ գաղափարախօսական գործօնի դերն ու նշանակութիւնը, համահայկական մեր տեսլականէն մեկնած՝ իբրև պահանջատէր, իբրև միևնույն դատին պահանջատէր ընդունելու և Հայ դատի պայքարը իբրև ամբողջ հայութեան անկատար տենչերուն խտացումը դաւանելու հրամայականը: Այս մեկնակէտէն ելլելով է, որ հայ ազգը՝ իբրև պահանջատէր և թշնամիներով շրջապատուած ու վտանգի մատնուած ժողովուրդ, հարկ է քաջատեղեակ ըլլայ թրքական ազգայնամոլական և ցեղապաշտական գաղափարախօսութեան և այդ գաղափարախօսութիւնը քարոզող կառոյցներու և անոնց գործելակերպի մասին, պէտք է պայքարի, իրաքանչիւրը՝ իր ձևով, որովհետև վերջ ի վերջոյ մեր բոլորին նպատակն է պահպանել Հայաստանն ու հայ ժողովուրդը:

Ներկայ ուսումնասիրութիւնը ցոյց կու տայ, որ տարածաշրջանին մէջ մարտահրաւերները շատ են, իսկ պահը՝ ճակատագրական ու վտանգաւոր: Անկասկած, սպառնալի փուլի մէջ է յայտնուած հայութիւնը տևաբար հարևան թուրք ժողովուրդներու կողմէ ու յատկապէս անոնց՝ համաթրքականութեան և համաթուրանականութեան «մեծ երագին»՝ Օղուզիստան ու Թուրան պետութիւն ստեղծելու երազանքով, որ կան նորանոր արիւնահեղութիւններու պիտի յանգի և կան թուրքի օգտին լուծուի: Ուրեմն ուրիշ ելք չկայ. քաջատեղեակ ըլլալով պայքարիլ տարբեր միջոցներով կ'ենթադրէ նաև կարևորել ինքնապաշտպանութեան մարտական կորովն ու մարտավարական բարձր պատրաստուածութիւնը և հնարքը: Այսօր և վաղը ու միշտ հայ ժողովուրդը և յատկապէս հայ զինուորը, հրամանատարն ու կամաւորը պատրաստ պէտք է ըլլան անկարելին կարելի ընելու. միայն այդ ճամբով կրնանք կանխարգիլել և թոյլ չտալ, որ պատմութիւնը կրկնէ ինքզինք: Անգամ մը ևս կը շեշտուի, որ հայ ժողովուրդը միայն իր ազգային գիտակցութեամբ, կոտ միասնութեամբ ու հերոսական պայքարով կը կարողանայ ձեռք բերել ապրելու և գոյատևելու իրաւունքը: ■

Ճանութագրություն

1. «Իրօշակ» (ՀՅԴ պաշտօնաթերթ), Ժն 1905, թիւ 3:
2. «Օսմանեան յեղափոխութեան մութ ծայքերը եւ Իթթիհատի հայացինք ծրագիրները», Պէյրութ-Լիբանան, 1975:
3. Ատոմ (Յարութիւն Շահրիկեան, Նիտրա), Օսմանեան կայսրութեան անկման պատճառները, Կ. Պոլիս, 1913:
4. Աւագեան Ս., Թուրքիայի դերը Հայ դատի հետապնդման պայքարում՝ պանթուրքիզմը իշխանում է Թուրքիայի արտաքին քաղաքականութեան մէջ, «Հայկական հարցի պատմութիւն», խմբ.՝ Փիրումեան Ռուբինա, Եր., «Էտիք փրիմը», 2002, էջ 228-263:
5. Բոզոյեան Ա., Բոզոյեան Մ. եւ ուրիշներ, Հայաստանի յարակից երկրների պատմութիւն, Եր., 1992:
6. Բրամ Ստեփան, Ուլգեր Մեհմեթ, Գորշ գայլեր, Եր., 2003:
7. Գիլլիանդանեան Ա., Բագուի դերը մեր ազատագրական շարժման մէջ, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն 1924, թիւ 1, էջ 123-131, թիւ 2, էջ 133-144, թիւ 3, էջ 60-66, թիւ 5, էջ 97-111, թիւ 6, էջ 102-108, թիւ 8, էջ 109-118, թիւ 9, էջ 106-112, թիւ 10, էջ 109-119, թիւ 11, էջ 98-103, թիւ 12, էջ 49-56, 1925, թիւ 3, էջ 125-131, թիւ 4, էջ 106-112, թիւ 5, էջ 116-121:
8. Գիլլիանդանեան Ա., Հայ-թաթարական ընդհարումները, հատ. Ա, Փարիզ, 1933:
9. Գիլլիանդանեան Ա., Հայ-թաթարական կոնիւերը Անդրկովկասում, «Հայրենիք» ամսագիր, 1935, թիւ 10, էջ 132-135, թիւ 11, էջ 129-135, թիւ 12, էջ 134-141:
10. Զարեանդ, Միացեալ անկախ Թուրանիա. Կամ ինչ կը ծրագրեն թուրքերը, Աթէնք, 1988:
11. Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բ տպագրութիւն, Պէյրութ, 1968:
12. Սարգսեան Ե., Թուրքիան եւ նրա նաւաճողական քաղաքականութիւնը Անդրկովկասում, Եր., 1964:
13. Aydin Suavi, Cumhuriyet'in Ideolojik Şekillenmesinde Antropolojinin Rolü: Irkçi Paradigmanın Yükselişi ve Düşüşü, Modern Türkiye'de Siyasi Düşünce, Kemalizm, C. 2, İletisim, 2001, ss. 344-369.
14. Ayni M. Ali; derleyen: Nezih Neyzi, «Ulusçuluk (Milliyetçilik)», İstanbul: Peva Yayınları, 1997.
15. Afet Inan, Medeni Bilgiler ve M. Kemal Atatürk'ün El Yazıları, TTK, 1969.
16. Berk Ercüment, Yusuf Akçura ve Fikirleri, Türkiyat Araştırmaları Enstitüsü Dergisi (TAED), 2017, ss. 479-509.
17. «Gözcü» gazetesi, 20 Eylül 2004.
18. «Hürriyet» gazetesi.
19. İlater Erdal, Türk-Ermeni İlişkileri Bibliyografyası, Ankara: Ankara Üniversitesi, 1997.
20. «Le Monde diplomatique», février, 1990.
21. «Milliyet» gazetesi, 6 Ekim 2011.
22. Milliyetçi Hareket Partisi, PARTİ TÜZÜĞÜ, 8 Kasım 2009, ANKARA.
23. Naci Kutlay, İsmet Paşa'da Dönemsel İrkçi Anlayışlar, Özgür Politika, 9-12 Kasım 2003.
24. Nazan Maksudyan, Türklüğü Ölçmek, Bilimkurgusal Antropoloji ve Türk Milliyetçiliğinin İrkçi Çehresi, Metis, 2005.
25. «Ortadoğu» gazetesi, «Bayrak, Vatan, Allah», 1 Kasım 1996.
26. R. Pinon. L'Offensive de l'Asie, Revue des Deux Mondes, Paris, 15 Avril, 1920.
27. «The Encyclopedia of Islam», Volume VIII, Leiden The Netherlands, 1995.
28. Tomas Goltz, Azerbaijan Diary, p. 212-213, M. E. Sharpe, Armonk. New York, London, England.
29. «TRT 3» TBMM-ի յստուկ կայանը, թրքական պատկերասփիւռի կայան, 1 հոկտեմբերի 2003.
30. Türkiye Alparslan, Milli Doktrin 9 Işık, İstanbul, Kamer Yayınları, 1997.
31. Uluğ İğdemir, Cumhuriyetin 50. Yilinda Türk Tarih Kurumu, TTK, 1973.
32. «Ülkücülik»; Hamle Yayinevi; İstanbul, 1995.
33. «Yeni Gün» gazetesi, 28 Ekim 1960.
34. Yıldız Ahmet, Ne Mutlu Türküm Diyebilene Türk Ulusal Kimliğinin Etno Seküler Sinirleri (1919-1938), İletişim, 2001.
35. «Yön» gazetesi, 21 Mart 1962.

-1987. جهاد صالح، الطورانية التركية بين الأصولية والفائنية، دار الصداقة بيروت، 1987.  
 -صالح زهر الدين، سياسة الحكومة العثمانية في أرمنييا الغربية وموقف القوى الدولية منها، انطلياس، 2010.  
 -صحيفة السفير اللبنانية، 1981.

## Պատմական իրողության նոր մանրամասներ

Սեդա Գալստյան

Հայաստանի պատմության թանգարանի նոր և նորագույն պատմության բաժնի վարիչ

1949 թ. բռնաքսորը հայ ժողովրդի նորագույն շրջանի պատմության մեջ առանձնանում է մյուս բոլոր ողբերգական դրվագներից մի շարք հանգամանքներով: Մեծ եղեռնը վերապրած, դրանից կարճ ժամանակ անց անկախությունը կերտած ու վերածնվող մեր բազմաչարչար ազգին նոր փորձություններ էին սպասվում: 1921 թ. պատմական հայրենիքի սրբազան ու անբաժան հատվածը կորցնելուց ու բոլշևիկյան տեռորի ենթարկվելուց հետո սկսվեցին ստալինյան հալածանքները, այնուհետև՝ Երկրորդ աշխարհամարտը: Պատերազմն ավարտվեց ԽՍՀՄ ժողովուրդների հաղթանակով, որում անուրանալի ներդրում ունեցան հայերը՝ հանձնա իրենց հերոսների, զորահրամանատարների, թիկունքի աշխատողների: Սպասվածին հակառակ՝ պատերազմից հետո էլ չլուծվեց մեր պատմական հողերի վերադարձի հարցը: Դեռ ավելին՝ վրա հասավ նոր փորձություն. հայությունը հայտնվեց անձանոթ ու իր գենետիկ-կենսական պայմանների համար խորթ Ալթայի երկրամաս արքայությունում: Պատմության առջև: Հաղթանակ կերտած ժողովրդի, այդ ժողովրդի մաս կազմող հայրենադարձների՝ նոր կյանք սկսելու ու երկիրը շենացնելու երազանքները գոհաբերվեցին անարդար պետական քաղաքականությամբ...

Հայաստանի պատմության թանգարանում պահվող ՀԿԿ 1-ին քարտուղար Ա. Քոչինյանի արխիվի ուսումնասիրության ընթացքում ի հայտ եկավ մի փաստաթուղթ՝ քարտուղարի ստորագրությամբ, որը վերաբերում է 1949 թ. Ալթայի երկրամաս արքային, դրան նախորդած և հաջորդած իրադարձություններին: Փաստաթուղթը ստորագրված է «06. 02. 1989 թ.»: Փաստաթղթում կան արքային վերաբերող մանրամասներ, որոնք, կարծում ենք, կհետաքրքրեն ընթերցողին: Նյութի ուսումնասիրության ընթացքում պարզվեց նաև, որ մինչ այս շատ քիչ անդրադարձներ են եղել այս թեմային: Գործնականում չուսումնասիրված խոշոր բռնաքսորը, որին ենթարկվեց հայ ժողովուրդը 1949 թ., մտում է խորհրդային հալածանքների գրեթե չբացահայտված էջերից մեկը: Խորհրդային ճնշիչ մեքենայի պրակտիկայում զանգվածային տեղահանությունները կիրառվել էին դեռևս 1920-ական թթ., սակայն սա հայերի զանգվածային արտաքսման 1-ին դեպքն էր, որը չունեւր էթնիկ դրդապատճառներ: Փաստաթղթերում հայ արքայալների կոնտինգենտը կրում էր «Դաշնակներ» հատուկ անունը և բաժանված էր 3 խմբի՝ ա) ՀՀԴ-ի հետ կապ ունեցող հայաստանցիներ, բ) պատերազմում գերի ընկածներ կամ հայկական լեգեոնում ծառայածներ, գ) հայրենադարձներ, զինվորականներ: Զանգվածային արքային առաջին



անգամ անդրադարձել է պատմաբան Ամատունի Վիրաբյանը, որի վկայությամբ՝ Հայաստանից այդ տարիներին արտաքսվել է 2754 ընտանիք՝ ավելի քան 12000 մարդ: Նրանցից շատերը մահացան, մյուսները մեծ դժվարություններով հաղթահարեցին բարդ փորձությունները և շարունակեցին ուժերի սահմաններում ծառայել իրենց ժողովրդին ու հայրենիքին: Մենք պարտավոր ենք հիշել մեր պատմության դառը դասերը՝ նոր ողբերգություններից խուսափելու համար: Վիրաբյանի պնդմամբ՝ այդ զանգվածային բռնազաղթի վերաբերյալ նույնիսկ ՀԿ(բ)Կ Կենտկոմի կամ ՀԽՍՀ Նախարարների խորհրդի համապատասխան որոշում չի ընդունվել:

Հիմնականում ՀՀ ՆԳՆ արխիվում պահպանվող 1949 թ. հունիսի 14-ին վերաբերող փաստաթղթերը, մասնավորապես՝ մեղադրական նյութերը, մեկը մյուսից գրեթե չեն տարբերվում, այդ իսկ պատճառով թանգարանային վերոհիշյալ փաստաթուղթը այս բացը նույնպես լրացնում է: Հայաստանի ազգային արխիվի 1191-րդ ֆոնդի 6-րդ ցուցակում պահպանվում են բռնադատվածների վերաբերյալ 2998 կարճված գործեր: Ընդ որում, ինչպես ընդգծում է պատմաբան Ա. Մանուկյանը, որպես արքայալայր «դաշնակցականների» համար նախատեսված էր «Ալթայի երկրամասը, թուրքերի համար՝ Տոմսկի մարզը, իսկ հույների՝ Ղազախստանի ԽՍՀ Հարավ-Ղազախստանյան և Զամբուլի շրջանները»<sup>2</sup>:

Հիշյալ փաստաթղթում Ա. Քոչինյանը գրում է այն մասին, որ Առաջին համաշխարհային պատերազմում տարած հաղթանակը ոգևորել էր սփյուռքահայությանը, բարձրացել էր ԽՍՀՄ-ի և Խորհրդային Հայաստանի հեղինակությունը: Հայաստանի ղեկավարության դիրքորոշումը հետևյալն էր՝ բարձրացնել Թուրքիայի բռնազավթած հայկական տարածքները (Կարսի մարզը, Սուրմալուի գավառը) Խորհրդային Հայաստանին վերադարձնելու և սփյուռքահայերի հայրենադարձության հարցերը: Դա

իրականացնելու համար մշակվեց հատուկ ծրագիր, որում դեր ունեցան Սփյուռքը: Հասկանալի է, որ, առանց միությանական կառավարության որոշման, Խորհրդային Հայաստանի կառավարությունը ոչինչ չէր կարող ձեռնարկել: Հիմք ընդունելով նաև արտասահմանից ստացվող հազարավոր դիմումներն ու նամակները, հաշվի առնելով տիրող իրավիճակը՝ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունովը այս հիմնախնդիրը ներկայացնում է կենտրոնական իշխանություններին: 1946-1948 թթ. ներգաղթած հայերի թիվը կազմում էր շուրջ 90000: 1948 թ. սեպտեմբերին դադարեցվեց ներգաղթը, Ստալինը հրաժարվեց իր մտադրությունից: Նրա վրա մեծ ազդեցություն ունեցան Սառը պատերազմը և Թուրքիային ԱՄՆ-ի հովանավորությունը: Չնայած Հայաստանը պատերազմից հետո հայտնվել էր ծանր պայմաններում, սակայն ամեն ինչ արվեց հայրենադարձներին օգնելու, կյանքի բարվոք պայմաններ ստեղծելու համար: Բնականաբար թույլ տրվեցին նաև սխալներ, եղան բացթողումներ, որոնք էլ հետագա ներգաղթի ծավալների նվազման պատճառ դարձան: Այդ մասին մանրամասներ է հաղորդում ձեռագիր փաստաթուղթը (ՀՊԹ, նգպֆ 18816, բ/մ 3451), որում անդրադարձ կա Հայրենական մեծ պատերազմում հայ ժողովրդի քաջագործություններին: Հայ մարշալները, ծովակալները, գեներալներն ու մյուս զորահրամանատարները հիշվում էին գլխավոր հրամանատարների հրամաններում՝ ռազմաճակատներում տարած հաղթանակների առիթով: Ոչ պակաս անձնվիրությամբ էին մարդիկ կանայք ու երեխաները, աշխատում թիկունքում: Կոտայքի շրջանի Հացավան գյուղի բնակիչ Գրիգոր Թևոսյանը, որի եղբայրը զոհվել էր ռազմաճակատում օդային մարտեր մղելիս, իր խնայողություններից 100000 ռուբլի տրամադրեց օդանավ պատրաստելու համար: Նրա օրինակին հետևեցին տասնյակ հազարավոր մարդիկ: Հայ գեղջկուհին իր զարդերն էր նվիրում, որպեսզի որդին հաղթանակած վերադառնա: Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Չորեքյանի գլխավորությամբ հայոց եկեղեցու, ինչպես նաև սփյուռքահայ մեր եղբայրների տրամադրած միջոցներով կառուցվեցին «Սասունցի Դավիթ» և «Մարշալ Բաղրամյան» տանկային շարասյուները: Հայի սրտում դեռ չէր մարել 1915 թ. ցեղասպանության դաժան արհավիրքը: Գուցե հենց այդ պատճառով էլ ճակատում անօրինակ սխրագործություններ էին գործում՝ քաջ գիտակցելով, որ Խորհրդային Միության պարտության դեպքում թուրք դահիճը կփորձի վերջնականապես բնաջնջել հայությանը:

Հատկանշական է, որ կովի տարիներին հայերի կողմից մեր երկրի սահմանի խախտման հիշարժան դեպքեր չեն եղել: Այս հանգամանքը շատ կարևոր է հետագա ասելիքի առումով: Երբ ավարտվեց պատերազմը, թվում էր՝ կուսակցությունն ու ղեկավարությունը պետք է արժանապատվորեն գնահատեին խորհրդային ժողովուրդների սխրանք-

ները... Սակայն երկրի ղեկավարները, առաջին հերթին՝ Ստալինն ու Բերիան, արդեն սկսել էին ազգերից ընտրել, այսպես կոչված, «անվստահելի անձանց»՝ նրանց հետ հաշվեհարդար տեսնելու համար: Կարծես մարտի դաշտում կրած կորուստները քիչ էին...

Ինչպես գրում է Ա. Քոչինյանը, պատերազմից անմիջապես հետո հարց դրվեց կազմակերպելու սփյուռքահայերի հայրենադարձությունը: ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Գ. Հարությունովը դիմեց Խորհրդային միության կոմունիստական կուսակցության քաղաքային հայրենադարձության առիթով Հայաստանին վերադարձնելու Լեոնային Ղարաբաղը, որտեղ հնարավոր կլինեք բնակեցնել մեծ թվով հայերի: Երբ այդ մասին զեկուցում են Ստալինին, նա կարգադրում է հարցնել Ադրբեջանի Կենտկոմի քարտուղար Բաղիրովի կարծիքը: Վերջինս նամակով պատասխանում է, որ ինքը կհամաձայնե, եթե Ղարաբաղի փոխարեն Հայաստանը Ադրբեջանին տար Բասարգեչարի, Կրասնոսելսկի, Վեդիի և Ջանգիբասարի շրջանները: Բնական է, որ Հայաստանի ղեկավարությունը չէր կարող ընդունել Բաղիրովի ավանտյուրիստական նկրտումները: Հայաստանի ղեկավարությունը նոր առաջարկություն արեց, այն է՝ թույլատրել Հայաստանի ադրբեջանցիներին տեղափոխվել Ադրբեջան, իսկ նրանց բնակավայրերում տեղավորել հայրենադարձներին: Ադրբեջանը նշել է, որ այդ ժամանակ Մուղանի դաշտի հսկայական հողատարածքները դարձրել էին ռոտզելի, բայց մշակող չկար, այդ պատճառով էլ Բաղիրովը խիստ կարիք էր զգում և ստիպված տվեց իր համաձայնությունը: Երկու հանրապետությունների ղեկավարները սկզբունքորեն համաձայնության եկան, որի հիման վրա Խորհրդային Միության կառավարությունը թույլատրեց ադրբեջանցիներին Հայաստանից տեղափոխվել Ադրբեջան: Մեծ աշխատանք է տարվել հնարավորինս արագացնելու գործընթացը, որպեսզի դատարկվող գյուղերը նախապատրաստեին հայրենադարձների բնակության համար. «Այդ ժամանակ ես աշխատում էի, ՀԿԿ Կենտկոմի երրորդ քարտուղարն էի, որոշ չափով գիտեի ադրբեջաներեն, այդ պատճառով հաճախ էի մեկնում ադրբեջանական գյուղեր՝ տեղափոխումը կազմակերպելու նպատակով: Շատ հաճախ գալիս էին Ադրբեջանի ղեկավարները. 2 անգամ Հայաստան եկավ Բաղիրովը և ելույթ ունեցավ Ջանգիբասարի շրջանի ադրբեջանցիների առջև: Նրա հանդիպումից հետո տեղափոխումը շատ արագացավ: Նշենք նաև, որ այդ առիթով մի տարուց ավելի Հայաստանում էր գտնվում Ադրբեջանի Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալը մի խումբ աշխատակիցների հետ: Ադրբեջանցիները տեղափոխվում էին կոլխոզներով ու սովխոզներով՝ իրենց հետ տանելով իրենց ամբողջ ունեցվածքը: Նույնիսկ քանդում էին տները, տեղափոխում շինանյութը, չնայած տների համար պետությունն արդեն վճարել էր... Այդ տարիներին Հայաստանից

Ադրբեջան տեղափոխվեցին մոտ 40000 մարդ՝ իրենց հետ տանելով մոտ 800000 ոչխար ու այծ, 300000 գլուխ խոշոր եղջերավոր անասուն: Հետագայում, երբ Գ. Հարությունովին փոխարինեց Ս. Թովմասյանը, նախկին ղեկավարությանը մեղադրեցին նացիոնալիզմի, ազգային քաղաքականության լենինյան սկզբունքների խախտման մեջ, կոչ արվեց ադրբեջանցիներին վերադառնալու Հայաստան և վերահաստատվելու իրենց բնակավայրերում: Ադրբեջանցիները գրեթե բոլորը վերադարձան, այս անգամ առանց ունեցվածքի՝ հանրապետության համար մեծ դժվարություն ստեղծելով: Նախկին բնակավայրերի մեծ մասը զբաղեցված էր, մյուսները վերածվել էին ավերակների: Վերաբնակները համառորեն պահանջում էին վարկ, անասուն և անասնազույգեր, դպրոցներ և մշակութային այլ օջախներ»:

Ըստ փաստաթղթի հետագա շարադրանքի՝ այնուհանդերձ արվում էր ամեն ինչ, որ պայմաններ ստեղծվեին հայրենադարձների համար, սակայն ստացվեց հակառակը:

Հայ բնակչությունը զանգվածաբար ցուցակագրվում էր հայրենիք վերադառնալու համար: Այդպիսի ցանկություն էր հայտնել ավելի քան 800000 մարդ տարբեր երկրներից՝ Լիբանան, Սիրիա, Եգիպտոս, Հունաստան, Ամերիկա ու Ֆրանսիա: Հետպատերազմյան քայքայված երկիրն ինքն էր տառապում սովի ու աղքատության ճիրաններում, ուր մնաց թե կարողանար հոգալ արտասահմանից ներգաղթածների հոգսերը: Այնուամենայնիվ, այն ժամանակվա ղեկավարությունը՝ Գրիգոր Հարությունովի գլխավորությամբ, աներևակայելի ռիսկի դիմեց՝ խնդրելով թույլ տալ հայրենադարձությունը: Հարությունովը քաջ գիտակցում էր, որ պատերազմում մեծաթիվ զոհեր տալու փաստը խիստ բացասաբար կանդրադառնար բնակչության վերարտադրության վրա: Խորհրդային կառավարության որոշման համաձայն՝ 1946 թ. սկսվեց հայրենադարձությունը գրեթե աշխարհի բոլոր երկրներից: Չնայած դժվարություններին՝ հայրենիքն ընդունեց շուրջ 100000 հայրենադարձների: Թողնելով տուն ու տեղը, անհամեմատ բարեկեցիկ կյանքը՝ մարդիկ գալիս էին հայրենիք՝ այդպես նաև դրսևորելով իրենց դրական վերաբերմունքը խորհրդային կարգերի հանդեպ. հայերը միավորվում էին խորհրդային դրոշի ներքո: Քաղաքական այսպիսի նվիրվածության պայմաններում դահիճ Բերիայի և Բադիրովի կարգադրությամբ սկսվեցին ստուգումներն ու ցուցակագրումը՝ հայ «անվտանգների» անձանց արքայազնի նպատակով: Այդ ժամանակ պետանվտանգության նախարարը Ն. Կրեմյանն (Քրիմյան) էր, որը դրեց այդ սև գործի հիմքը: Հետագայում նա դատապարտվեց գնդակահարության: Աքսորման և առհասարակ «քննության գործի» մեծ մասը կատարվեց Մերգեյ Կորխմազյանի օրոք, որն իր կատարած հանցագործությունների համար հետագայում



Ասրոն Քոչինյան

բանտարկվեց: Ցավալին այն է, որ ստուգողների մեծ մասը այլազգի էր և Արևմտյան Հայաստանում ծնվածներին համարում էր արտասահմանում ծնվածներ ու նրանց շատ ավելի խիստ էր մոտենում, քան մյուսներին: Այդ առումով վիճակն ահավոր էր Լեւինիականում, որի բնակչության մեծ մասը Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերից էր, հատկապես՝ Ղարսից, որին ավելի խիստ էին մոտենում: Դաժանաբար էին վարվում այն ընտանիքների հետ, որոնց անդամներից որևէ մեկը երեսնական թվականներին բանտարկվել էր: Քոչինյանը գրում է. «Հիշում եմ հունիսի 11-ին՝ կիրակի օրը, Կենտկոմից մեքենան ուղարկեցին իմ ետևից՝ շտապ ներկայանալու կարգադրությամբ (սույնիսկ դեռ չէի սափրվել): Վարորդի հետ եկած Կենտկոմի աշխատողը ասաց, որ խորհրդակցություն է սկսվում, պետք է շտապել: Այդ ժամանակ ես աշխատում էի Կենտկոմի կադրերի գծով քարտուղար: Արագ հագնվեցի և ներկայացա Կենտկոմի բյուրոյի նիստերի դահլիճ, որտեղ հավաքված էին չեկիստի համագեղատուժ անձանտթ մարդիկ և հանրապետության ակտիվը՝ քաղկոմ շրջկոմների առաջին քարտուղարների մասնակցությամբ: Խորհրդակցությունն անցավ հույժ գաղտնի պայմաններում»: Խորհրդակցությանը ելույթ է ունեցել ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Գ. Հարությունովը: Նա նշել է, այսպես կոչված, «մաքրման» միջոցառման քաղաքական և պետական նշանակության մասին: Ելույթ է ունեցել նաև պետանվտանգության նախարար Ս. Կորխմազյանը, որը մանրամասն բացատրել է, որ արդեն հանրապետություն են ժամանել հատուկ գործառնների ստորաբաժանումներ, որոնք մեկ գիշերվա ընթացքում կուսակցության ակտիվի օժանդակությամբ պետք է ավարտեին իրենց աշխատանքները: Նախօրոք պատրաստվել էին ցուցակները, թե ակտիվից ով որ շրջանը, քաղաքը պետք է մեկնեն. «Ինձ ամրացրել էին Լենինականին: Խորհրդակցությունը վերջանալուց հետո խնդրեցի տուն գնալ, հագնվել համապատասխան, քանի որ եկել էի անպատրաստ: Կտրականապես արգելեցին: Մեկնեցի 2 զինվորական ջոկատների ղեկավարների հետ, որոնք կցված էին Լենինականին: Նրանց հանձնարարվել էր՝ մինչև լուսաբաց ավարտվի այդ

«օպերացիան»: Ամեն ինչ կատարվում էր խիստ գաղտնի, մեկնեցինք հունիսի 12-ին, Լենինականում քաղկոմի քարտուղարն էր Արմո Հարենցը»<sup>3</sup>:

Հունիսի 14-ի առավոտյան քաղկոմի 1-ին քարտուղար Հարենցի հետ Քոչինյանը որոշել է տեսնել աքսորավայր ուղարկվողներին: Տեսարանն աննկարագրելի էր. ամենուր՝ լաց ու կոծ, երեխաների ճիչ, զարմանք ու զայրույթ, թե ինչու են իրենց աքսորում: Երբ անցել են վագոնների կողքով, մեկը բարձրաձայնել է Քոչինյան ազգանունը: Քոչինյանը տեսել է մի դեռահաս աղջկա, որը փորձել է մոտենալ իրեն, սակայն զինվորականն արգելել է: Նա ինքն է մոտեցել և հարցրել, թե ինչ է պատահել: Աղջիկը հուզված ասել է, որ իր եղբայրը Մանասն է, և նա իրեն տեսել է իրենց տանը դեռևս կոմերիտական աշխատանքների շրջանում. «Մանասին լավ էի հիշում: Պարզվեց նրանց ընտանիքը աքսորում էին, իսկ Մանասը 1 տարի առաջ զոհվել էր ավտովթարից»: Աղջիկը հուզված պատմել է, որ հայրը չի թողել որևէ իր վերցնեն, որովհետև վատահ էր, որ թյուրիմացություն է եղել. ինչպես կարող են անմեղ մարդուն աքսորել: Այդ օրը Քոչինյանին դիմել են շատ շատերը, սակայն Քոչինյանը ոչնչով չի կարողացել օգնել նրանց: Այնուամենայնիվ, 3 ընտանիքների ազգանուններն ու տվյալները վերցրել է: Կուսակցության Լենինականի քաղկոմում Պետանվտանգության ներկայացուցիչն ու Լենինականի բաժանմունքի պետը՝ Մ. Կարապետյանը, կտրականապես մերժել են այդ 3 ընտանիքներին ազատելու խնդրանքը. «Ստիպված հեռախոսով դիմեցի Կենտկոմի 1-ին քարտուղար Գ. Հարությունովին: Նա շատ զայրացավ, թե ինչու եմ գնացել կայարան և խոսել աքսորականների հետ: Ապա ասաց, որ ինքը ոչինչ անել չի կարող. «Ինչու ես ամբարշտված Լենինականին, ինքը էլ հարցերը լուծիր՝ քաղաքի ղեկավարների հետ խորհրդակցելով»»: Նորից ստուգել են տվել այդ 3 ընտանիքի տվյալները: Նախկին քարտուղարը խոստովանել է, որ, ցավոք, արդեն մոռացել էր ազգանունները: Իսկ ստուգումները պարզել են, որ նրանք միանգամայն անմեղ, աշխատավոր մարդիկ էին: «Իմ (Քոչինյանի – Մ. Գ.) պատասխանատվությամբ կարգադրվեց երեքին էլ վերադարձնել իրենց տները»: Հետաքրքիր մի դիպված էր եղել, որը զարմացրել էր նրան. «Երբ ստուգողները զեկուցեցին, որ նրանք լիովին անմեղ են, բաժանմունքի պետը՝ Մ. Կարապետյանը, զայրացած ասաց. «Երևում է՝ լավ չեն ստուգել, չէ՛ որ նրանք ծնվել են արտասահմանում»: Պարզվեց, որ ընտանիքի տարեց անդամներից մեկը ծնունդով սարիղամիշցի է, մյուս երկուսը՝ դարսեցիներ են: Միայն այդ պահին իմացա, որ Արևմտյան Հայաստանում ծնվածների նկատմամբ առանձնակի խիստ վերաբերմունք է դրսևորվել: Իմ ինքնագլուխ որոշումը էժան չստեց: Ղեկավարությունը լրջորեն կշտամբեց իմ արարքը՝ այն որակելով օպորտունիստական»:

Փաստաթղթի հեղինակը անդրադառնում է այն տխուր իրողությանը, որ հիսնական թվականների սկզբներին հայրենադարձ հայերից եղան այնպիսիք,

որոնք, չդիմանալով ստեղծված ծանր պայմաններին, խախտելով պետական սահմանը, անցան արտասահման, վերադարձան իրենց նախկին բնակավայրերը: Այս փաստը շատ մեծ աղմուկ բարձրացրեց հանրապետության աշխատավորության շրջանում. նրանք դատապարտում, անարգանքի սյունին էին գամում փախստականներին: Պարզ է, որ այս երևույթի վերաբերյալ իրենց խոսքը պետք է ասեին կուսակցության ղեկավար մարմինները. «1953-ի սկզբներին ՍՄԿԿ Կենտկոմի քաղքյուրոն քննության առավ սահմանախախտման դեպքերը: Հրավիրել էին կուսակցության կենտկոմի քարտուղար Գրիգոր Հարությունովին և ինձ (այդ ժամանակ Միխատրների խորհրդի նախագահն էի): Քաղքյուրոյի նիստը ղեկավարում էր Բերիան, իսկ Ստալինը, կողքի սեղանի մոտ կանգնած, զբաղված էր իր ծխամորձով: Բերիան կարդաց որոշման նախագիծը, որտեղ նախատեսվում էր խիստ նկատողություն հայտարարել Հարությունովին և ինձ՝ համապատասխան միջոցներ չձեռնարկելու համար: Նախագիծը կարդալուց հետո մի քանի րոպե տիրեց քար լուրջություն, քաղքյուրոյի անդամներից ոչ ոք ձայն չհանեց: Բոլորը սպասում էին Ստալինի խոսքին: Հանկարծ նա մոտեցավ Բերիային, ապա՝ Հարությունովին և հարցրեց (Հարությունովին), թե որքան մարդ է ընդունել: Հարությունովը պատասխանեց. «Շուրջ 100000, ըսկեր Ստալին», Ստալինը նորից մոտեցավ իր սեղանին, լցրեց ծխամորձը, վառեց ու մոտեցավ Մոլոտովին՝ դիմելով. «Եթե դժոխքից 100000 մարդ է տեղափոխվել դրախտ, կգտնվեն այնպիսիք, ովքեր կցանկանան սպրել դժոխքում»: Ստալինի այս արտահայտությունից անմիջապես հետո Բերիան առաջարկեց հարցը հանել քննարկումից, բավարարվել առաջնորդի դիտողություններով: Մենք ազատվեցինք պատժից»: Վերադառնալով Երևան՝ ՀՀԿ Կենտկոմը լուրջ միջոցառումներ մշակեց հայրենադարձների շրջանում «քաղաքական-մասսայական» աշխատանքներն ուժեղացնելու նպատակով:

1953 թ.՝ Ստալինի մահից հետո, Հայաստանի ղեկավարությունը հարց հարուցեց 1949 թ. աքսորվածներին արդարացնելու մասին: Բռնադատվածների արդարացման գործերը քննությունն ավելի արագացվեցին Բերիային գնդակահարելուց հետո: 1955 թ. սկսվեց նրանց վերադարձը հայրենիք: Աքսորվածներից շատերն արդեն ողջ չէին: Կլիմայական դաժան պայմաններին չդիմանալով՝ նրանք բախտ չունեցան նորից տեսնելու իրենց արևային հայրենիքը:

Գրության վերջում 1-ին քարտուղարի ստորագրությունն է՝ «Ա. Քոչինյան 6/02/ 1989թ. Երևան»:

**Հղումներ**

- Տեն «Բաները Հայաստանի արխիվներին», Երևան, 1990, նո. 3, էջ 68, «Երեկոյան Երևան», Երևան, 1988, հունիս 20:
- Մանուկյան Ա., Քաղաքական բռնաճշումները Հայաստանում 1920-1953 թթ., Երևան, 1999, էջ 230:
- ՀՊԹ, նգպֆ, մմ 18816, ք/մ 3451, էջ 9:

## Մահմեդական բնակչության 1919 թ. հակահայկական խռովության ճնշումը Զոդ-Բասարգեչարի շրջանում և հայկական պետականության ամբողջականության վերահաստատումը (մաս 2 և վերջին)

Վահիկ Վիրաբյան  
Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Հարկ է, սակայն, ասել, որ այս կապակցությամբ արևելագետ Դավիթ Կնյազյանը հակառակ տեսակետն է պաշտպանում՝ նշելով, որ Բասարգեչարի շրջանում դրության սրման պատճառը եղել է հայկական կողմը՝ ի դեմս արևմտահայ գաղթականների, որոնք մնացել էին անօթևան և անսնունդ: Դ. Կնյազյանը կարծում է, որ Երևանից ժամանած զորամասը գաղթականներին հանել է մուսուլմանական գյուղերից, և զորամասի հրամանատար ռոտմիստր Սիլիկյանի անպատասխանատու վարքագիծը պատրվակ է դարձել մուսուլմանների ընդվզման համար՝ հանգեցնելով զորքի կոտորմանը<sup>1</sup>: Այդ ամենն էլ հանգեցրել է լարվածությանը և Ադրբեջանի տարածքից զինված խմբերի ներթափանցմանը ՀՀ տարածք ու զենքի առաքմանը ապստամբների: Սկսվեցին նախապատրաստություններ Ճամբարակը և Բաշքենդը գրավելու համար, զուգահեռ զորահավաք հայտարարվեց, որի ժամանակ Ադրբեջանին օգնության եկան մոտ 1000 վրացի սպաներ<sup>2</sup>: Հարկ է նշել, որ ՀՀ-ի համար դրական էր այն, որ խնդրի կարգավորման հարցում բրիտանական հրամանատարությունը և նրա ռազմաքաղաքական ներկայացուցիչը գործնականում աջակցեցին Հայաստանին՝ չնայած Լեռնային Ղարաբաղում, Զանգեզուրում և այլուր իրենց ցուցաբերած բացահայտ ադրբեջանամետ դիրքորոշմանը, և դրանով իսկ նպաստեցին ՀՀ տարածքային ամբողջականության պահպանմանը Զոդ-Բասարգեչարի շրջանում: Միջադեպը նաև հստակ ցույց տվեց, որ Ադրբեջանը բոլոր միջոցներով հավակնում էր տիրելու բոլոր այն հայկական շրջաններին, որտեղ կար համահավաք մուսուլմանական բնակչություն<sup>3</sup>:

1919 թ. փետրվարի 18-ին Նախարարների խորհուրդն իր հերթական նիստում լսում է Բասարգեչարի շրջանում մահմեդական շարժման ակտիվացման մասին և հանձնարարում ՆԳ նախարարին քննություն անցկացնել տեղական վարչակազմի գործունեության վերաբերյալ<sup>4</sup>: Շուտով ավելանում են նոր փաստեր, որոնք հիմք են տալիս կառավարությանը ավելի իրատեսական և ամբողջական պատկերացում կազմելու Զոդի շրջանում ծագած խնդրի վերաբերյալ: Դա հստակորեն երևում է արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանի 1919 թ. փետրվարի 18-ի պաշտոնագրից՝ ուղղված վարչապետին. «Ադրբեջանի կառավարության միջամտության առիթ դարձած Բասարգեչարի շրջանի անցքերը որոշ չափով արդեն պարզվել են: Բացի մասնավոր անհատներից, որոնք կատարել են այդ հանցագործությունը և կրելու են օրինական պատիժը, ես հարկ եմ համարում կառավարության հատուկ ուշա-



դրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ, ըստ կարևորության, տեղական ադմինիստրացիան ցույց է տվել հանցավոր անփութություն և ապիկարություն: Անհրաժեշտ եմ համարում, որ այդ կառավարիչները խիստ դատի կանչվեն, պատժի ենթարկվեն և թերևս հեռացվեն պետական պաշտոնեությունից, իսկ դիվիզիոնի հրամանատար ռոտմիստր Սիլիկյանը, որի միջամտությամբ է վերականգնվել կարգն ու խաղաղությունը, արժանացվի շտրիակալության: Խնդրում եմ մատակարարել ինձ մանրամասն և ստույգ տեղեկություններ անցքի (Զոդում մահմեդական ելույթների – Վ. Վ.) շարժառիթների, բնույթի մասին, որպեսզի կարողանամ այդ մասին իրագրել պահել թե՛ բրիտանական գլխավոր հրամանատարությանը և թե՛ Ադրբեջանի կառավարությանը»<sup>5</sup>:

Արդեն ՀՀ արտաքին գործերի նախարարի փետրվարի 18-ի հեռագրից՝ ուղղված Ադրբեջանի արտաքին գործերի նախարարին, պարզ է դառնում, որ փետրվարի կեսերին հայկական զինուժի ձեռնարկած եռանդուն գործողությունների հետևանքով, որոնց մասնակցել էին նաև տեղական վարչակազմը և ներքին գործերի մարմինները, թաթարները հետ էին շարտվել դեպի իրենց բնակավայրերը, նրանց կողմից կողոպտված ունեցվածքը Զոդի շրջանում վերադարձվել էր, իսկ մեղավորները սկսել էին քննվել դատական կարգով պատասխանատվության ենթարկելու համար<sup>6</sup>: Արտգործնախարարության սույն գրությունը՝ անցկացնելու Բասարգեչարի շրջանի դեպքերի քննություն, ուղարկվում է ներքին գործերի նախարարին<sup>7</sup>:

Փետրվարի 24-ին ռոտմիստր Սիլիկյանը դիվիզիոնի հետ գնում է Մեծ Մազրա գյուղ, որտեղ թաթարները նրանց դիմավորում են աղուհացով՝ վստահեցնելով, որ իրենք արդեն հանդարտվել են: Երեկոյան Սիլիկյանը գնում է Բասարգեչար և փետրվարի 25-ի առավոտյան 1-ին էսկադրոնով և 2-րդ էսկադրոնի կետով վերադառնում Փոքր Մազրա գյուղը: Նույն օրը՝



փետրվարի 25-ին, 1-ին էսկադրոնը ռոտմիստր Սիլիկյանի և կոռնետ Խաչատուրովի հետ վերադառնում է Բասարգեչար գյուղ, իսկ դիվիզիոնի հրամանատար Սիլիկյանն իր համհարզ Շիմկևիչի հետ և կիսա-էսկադրոնով մեկնում է Ջոդ, որտեղ իջևանում են Ազիլյար Սամանդ աղա Քեանանսկի անունով թաթարի տանը: Այստեղ ռոտմիստր Սիլիկյանը գյուղացիներին հայտարարում է, որ դիվիզիոնի համար թաթարները պետական գներով նախապատրաստեն խոտ, ցորեն և գարի: Թաթարները խոստանում են խորհրդակցել և առավոտյան պատասխանել: Փետրվարի 27-ի առավոտյան Ջոդ գյուղի պատվելիները պատասխանում են Սիլիկյանին, որ հրաժարվում են տալ պահանջվող անասնակերը և հացը: Սիլիկյանի համառ պահանջները դարձան թաթարների նախահարձակ լինելու պատճառ: Փետրվարի լույս 27-ի գիշերը գյուղի թաթարների տներում տեղավորված զինվորները՝ 11 հոգի, սպանվում են, այդ թվում՝ Ջոդի թուրքերի կողմից «հյուրընկալված» դիվիզիոնի 4 սպաներ՝ համհարզ կոռնետ Շիմկևիչը, կոռնետ Խաչատուրովը, հրամանատար Ալեքսանդր Սիլիկյանը և նրա կրտսեր եղբայրը՝ Արշակ Սիլիկյանը (սպաները այդ գիշեր հանգրվանել էին Սամեդ աղա Քյասամանսկու տանը), որոնց գլխատում են և ծաղրուծանակով ցուցադրում շրջակա մուսուլմանական գյուղերում<sup>8</sup>: Փետրվարի 28-ին ՀՀ տարածքի վարչակազմի և միլիցիայի կոմիսարը Նոր Բայազետի գավառային կոմիսարին հրահանգ է տալիս տեղամասային քննիչի հետ գնալու դեպքի վայր, անցկացնելու հետաքննություն, պարզելու մեղավորներին և տեղամասային տեսուչի, հասարակական գյուղական կոմիսարների, միլիցիոներների ներկայությամբ ու մասնակցությամբ ձերբակալելու նրանց՝ անհրաժեշտության դեպքում դիմելով նաև զորքի օգնությանը, չթույլատրելով, սակայն, գործում ներգրավել մահմեդական փախստականներից ներկայացուցիչ՝ խուսափելով նոր խռովության հրահրման վտանգից և բռնություններից: Միաժամանակ ՆԳՆ հանձնարարությամբ դեպքի վայր է գործուղվում դատախազի օգնականը՝ հետաքննությունը ղեկավարելու և կարգ ու կանոնը վերականգնելու համար<sup>9</sup>: Այս փաստերը ինքնին ապացույցն են այն իրողության, որ Բասարգեչարի շրջանի մահմեդական խռովարար բնակչությունը գործնական լուրջ նպատակ էր դրել զինված գործողություններով օգնելու Ադրբեջանին՝ շրջանը Հայաստանից կտրելու և Ադրբեջանին բռնակցելու համար: Ջոդյան հանգույցը դարձավ հայկական քաղաքական և ռազմական շրջանակների օրակարգի առանցքակետը: Այն վտանգեց երկրի տարածքային ամբողջականությունը, խրախուսեց անջատողական-սադրիչ ելույթները ՀՀ տարածքի այլ կետերում, որոնք ՀՀ կառավարությունը ձգտում էր զսպել խաղաղ ճանապարհով: Ջոդը շարժառիթ դարձավ Ադրբեջանի առանց այն էլ ազդեցիկ կառավարության համար ավելի բացահայտ կերպով միջամտելու ՀՀ ներքին գործերին և բաց տեքստով խոսելու՝ կանխորոշված համարելով Ադրբեջանի կազմում Բասարգեչարի շրջանի ընդգրկումը, որը ռազմավարական տեսանկյունից ներառում էր նաև



Միրակյան Տիգրանյան

ամբողջ Սևանա լճի ավազանը, ինչպես և այսօր՝ 2021-2022 թթ. դեպքերի ժամանակ՝ 2020 թ. աշնան հայ-ադրբեջանական կապիտուլյացիոն պատերազմից հետո: Բասարգեչարյան թնջուկը սրվեց. այն իր շրջապատույթի մեջ առավ նաև հայկական Բաշքենդի և պղնձահանքերով հարուստ Գետաբեկի շրջանները, որոնց ՀՀ կառավարությունն աջակցում էր այնքան, որքան ի վիճակի էր, քանզի շատ դեպքերում զենք-զինամթերքով ու զորքով աջակցելը միշտ չէ, որ արդյունավետ էր լինում:

1919 թ. մարտի 1-ի նիստում Նախարարների խորհուրդը լսում է ներքին գործերի նախարարի զեկուցումը Բասարգեչարի շրջանի Ջոդ գյուղում տեղի ունեցած դեպքերի մասին, որը վերաբերում էր Ղարաբաղի հեծյալ գնդի սպաների և զինվորների սպանությանը: Հանգամանալից քննարկելով ստեղծված իրադրությունը՝ Նախարարների խորհուրդը որոշում է կազմել մի արտակարգ քննիչ հանձնաժողով՝ Արդարադատության նախարարության ներկայացուցիչների նախագահությամբ և Զինվորական և ՆԳ նախարարությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, և հանձնարարում անմիջապես քննություն սկսել տեղի ունեցած դեպքերի առնչությամբ: Արտակարգ քննիչ հանձնաժողովը կազմվում է հատուկ գործերի քննիչից և Ներքին գործերի ու Զինվորական նախարարությունների մեկական ներկայացուցիչից՝ ՀՀ դատախազի օգնականի նախագահությամբ: Այն ուղարկվում է Նոր Բայազետի գավառի Ջոդ գյուղ՝ քննելու փետրվարի վերջերին տեղի ունեցած դեպքերի պատճառները, որոնց հետևանքով սպանվել էին հեծյալ դիվիզիոնի 4 սպաներ և մոտ 80 զինվորներ, պարզելու մեղավորներին և բանտարկելու ու Նոր Բայազետի բանտն ուղարկելու այն անձանց, որոնք որևիցե առնչություն էին ունեցել այդ հանցագործության հետ: Թուրքերի

կողմից հայերի բռնությունների մասին գանգատներ լինելու դեպքում Արտակարգ քննիչ հանձնաժողովը պարտավորվում էր քննել նաև այդ գանգատները և պատասխանատվության ենթարկել մեղավորներին: Քննության նորմալ պայմաններ ստեղծելու նպատակով հանձնաժողովի տրամադրության տակ էին դրվում բավականաչափ միլիցիոներական և զինվորական ուժեր<sup>10</sup>:

Հանձնաժողովը մարտի 4-ին, ելնելով մարտավարական նկատառումներից, ոչ լրիվ կազմով՝ միայն գավառային կոմիսարի ու քննիչի հետ, մեկնում է Բասարգեչարի շրջան՝ խաղաղ ճանապարհով կարգավորելու հակամարտությունը, ինչին, սակայն, խռովարարների պարագլուխները պատասխանում են ծայրահեղ դիրքորոշմամբ և հայտարարում, որ խաղաղության երաշխիքը հնարավոր է միայն «իրենց հողերի» անկախացումից հետո, և իրենք ամեն ինչ կանեն՝ հայկական կողմին պարտադրելու հրաժարվել Բասարգեչարի շրջանից: Թուրքերը հայ բանագնացներին դիմավորեցին հրացանազարկերով: Դրանով ՀՀ իշխանությունները համոզվեցին, որ եթե այդպես շարունակվի, իրենք հաջողության չեն հասնի, և իրենց ծրագրերը կշրջվեն հակառակ ուղղությամբ, քանի որ մահմեդական բնակչությունը հաստատական էր իր անջատողական գործողություններում<sup>11</sup>:

Հայկական կառավարությունը ջանք չխնայեց խուսափելու թաթարների հետ ռազմական առճակատումից: Այդ մասին շեշտում է շտաբ-ռոտմիստր Կուդրյավցևը Նոր Բայազետից 1919 թ. մարտի 5-ին Երևան՝ գեներալ-մայորներ Սիլիկյանին, Փիրումյանին և ՀՀ տարածքի կոմիսարին ուղարկված հեռագրում, որում նշվում է, որ մարտի 4-ին՝ ժամը 20-ին, գավառային կոմիսարի ու քննիչի հետ մեկնել են թաթարաբնակ այդ շրջանը՝ միջադեպը հարթելու համար, սակայն նրանց դիմավորել են հրացանազարկով: Կուդրյավցևը, շտաբ-ռոտմիստրի հետ համախորհուրդ, համալրում էր խնդրում՝ բողոքելով պարենամթերքի պակասից և ընդգծելով, որ, առանց թնդանոթների, խնդիրն անլուծելի է և մեծ կորուստների կհանգեցնի<sup>12</sup>:

Գնեքալ Սիլիկյանին ուղղված մարտի 5-6-ի հեռագրում գավառային կոմիսար Շահինյանը, անդրադառնալով այդ տագնապալից վիճակին, անհրաժեշտ էր համարում մահմեդականներին օրինական իշխանությանը ենթարկեցնելու համար պատժիչ ջոկատ ուղարկել՝ թնդանոթներով հանդերձ՝ ավելացնելով նաև, որ դարաբաղյան դիվիզիոնում կա ընդամենը 200 սվին, իսկ հրետանարկեր բոլորովին չկան<sup>13</sup>: Ի պատասխան՝ զինվորական նախարար Հախվերդյանը, 1919 թ. մարտի 7-ին այս գրությունն ուղարկելով ՀՀ վարչապետին, միաժամանակ անհրաժեշտ համարեց Նոր Բայազետ ուղարկել մեկ գումարտակ և երկու թնդանոթ՝ հաշվի առնելով թաթարների հնարավոր դիմադրությունը: Զինվորական նախարարը տեղեկացրել էր նաև, որ գնդապետ Քլայվ Թեմպերլեյը (Թեմփրլի Քլայվ Էրինգտոն) իր հետ գրույցում համաձայնել էր զինված ուժի օգ-

տագործմանը, եթե թաթարները քննչական հանձնաժողովին չթույլատրեին մեկնել դեպքի վայր: Անդրկովկասում բրիտանական զորքերի հրաձգային բրիգադի 4-րդ գումարտակի համհարզ կապիտան Քլայվ Թեմպերլեյը դեռ 1919 թ. հունվարի 7-ին, գեներալ Ջ. Ֆորեստիեր-Ուոքերի հուշագրի համաձայն, նշանակվել էր Կարսի բրիտանական զինվորական նահանգապետի պաշտոնում՝ փոխգնդապետի աստիճանով, որի նկատմամբ 1919 թ. փետրվար-մարտ ամիսներին մահմեդական բնակչությունը ցուցաբերեց անպատկառ վերաբերմունք, որն անհանդուրժելի դարձավ: Մահմեդականներն ամեն ինչ արեցին՝ անտեսելու վերջինիս, որին Քաջագունու կառավարությունը սկզբնապես անվանում էր «մեծամիտ և անպատկառ անգլիացի», որը, Կարսում Շուրայի՝ պաշտոնապես հարավարևմտյան կովկասյան ժամանակավոր կառավարության հետ համաձայնության գալով, ընդդիմացել էր հայ վարչակազմի աշխատողներին պաշտոն հատկացնելու ամեն մի փորձի և նույնիսկ խիստ պահանջներ ներկայացրել Ալեքսանդրապոլի՝ Կարսը և Թիֆլիսը շաղկապող գլխավոր երկաթուղային հանգույցի հայ պաշտոնյաներին<sup>14</sup>: 1919 թ. հունվարի 26-ի դրությամբ՝ Ք. Է. Թեմպերլեյը Կարսի բրիտանական զինվորական նահանգապետն էր, որին աջակցելու համար Կարսում էր 4-րդ բրիգադի հրաձիգների գնդապետ Ֆրեդերիկ Լաթընի գլխավորած նախնական թիկնազորի հետ վերամիավորված գումարտակի գլխավոր մարմինը: Դրանից հետո՝ 1919 թ. մարտի 2-ին, Թեմպերլեյը տեղափոխվել է Երևան որպես զինվորական ներկայացուցիչ: Հենց Երևանում ծառայելու ժամանակ Թեմպերլեյի վերաբերմունքը հայերի նկատմամբ որոշակիորեն փոխվում է, ինչն արտահայտվում է նրա՝ 27-րդ գորաբաժնի սպայակույտ ուղարկած զեկույցներում: Դրանցում Թեմպերլեյը մտահոգություն էր հայտնում հայկական կառավարության առջև ծառայած դժվարությունների առթիվ: Նա հաճախակի փորձել էր խաղաղեցնել մահմեդական բնակավայրերի բնակչությանը, որոնք մերժում էին Երևանի իրավասությունը: Այդ ընթացքում խռովարարական քայլերի դիմած Վեդիչայ-Սադարակի մահմեդականներին հանդարտեցնելու համար Թեմպերլեյը զգալի ջանքեր գործադրեց՝ փորձելով կանխել հայերի հաճախակի դարձած սպանությունները և թալանը: Նա փորձեց զսպել ոտքի ելած ցեղապետներին ու խաներին, ինչը, սակայն, ոչ մի հաջողություն չունեցավ: Թեմպերլեյի եզրահանգմամբ՝ այդ խռովությունը սոսկ առանձին միջադեպ չէր, քանի որ Սադարակի շրջանում գորակոչը կապված էր Արալբիսի, Կադգվանի և Կարսի համանման երևույթների հետ, իսկ գնդապետ Լաթընը Սադարակը բնութագրել էր որպես Շուրայի հետ մի ընդհանուր հակահայկական շղթա կազմած անգիջում դիրքորոշում ունեցող շրջան: Թեմպերլեյի և Լաթընի գուսպ ջանքերը և փորձերը՝ պատժելու հանցագործ մահմեդական գյուղերին հանցավոր գործողությունների համար, անհաջողության մատնվեցին, քանզի այդ գյուղերի բնակիչները

պատասխանեցին բացեփրաց գենքի դիմելով, ինչն արդեն խոտվության չարագուշակ նշան էր, ինչին նպաստեց թուրքական քարոզչությունը: Այն Արաքսով Մակուից և Արալըխից տարածվում էր Սադարակի շրջանում՝ գրգռելով մահմեդական բնակչությանը Բոյուք-Վեդիից մինչև Նախիջևան: 1919 թ. ապրիլի 28-ին Թեմպերլեյը գորավար Անդրանիկի և մայոր Ուիլյամ Գիբբոնի ընկերակցությամբ մեկնում է Թիֆլիս և մայիսի 1-ին ժամանակավորապես ստանձնում հրաձգային բրիգադի 4-րդ գումարտակի հրամանատարությունը<sup>15</sup>, ինչին և հաջորդում է նրա գործունեությունը Ջոդ-Բասարգեչարի շրջանում:

Կառավարության և զինվորական իշխանությունների որդեգրած կուրսի մասին կարելի է հստակորեն դատել նաև մեկ այլ փաստաթղթից, որի հեղինակը գեներալ-մայոր Սիլիկյանն է: Այսպես՝ 1919 թ. մարտի 7-ին հայկական դիվիզիայի պետ Սիլիկյանը շտապ գաղտնի զեկուցագրով դիմում է ՀՀ զինվորական նախարարին, որում անդրադառնում է նաև Ջոդի խնդրին՝ նշելով գնդապետ Ա. Շևետրի հաղորդած տեղեկության մասին, որ Մեմյոնովսկի լեռնանցքը ծածկված է ձյունով, իսկ գեներալ Փիրումյանը դեռևս Նոր Բայազետում է՝ սպասելով նոր գորաջուկատի ժամանմանը, որպեսզի վճռական խոսի, հակառակ դեպքում տպավորությունը թույլ կլինի, քանզի տեղական խոտվարար մահմեդական բնակչությունը և նրանց առաջնորդները նախապատրաստություններ էին տեսնում և կազմակերպվում՝ ակնկալելով նաև աջակցություն Ադրբեջանի հետ սահմանամերձ շրջաններից: Սիլիկյանն ընդգծել էր, որ, ըստ գեներալ-մայոր Դանիել Բեկ-Փիրումյանի, թաթարների հետ բախումն անխուսափելի է<sup>16</sup>:

Ջոդ գործողված արտակարգ քննիչ հանձնաժողովին տրված հրահանգում, որը ստորագրել էին արդարադատության նախարար Հարությունովը, ՆԳ նախարարի պաշտոնակատար Մանասյանը և զինվորական նախարար Հախվերդյանը, ասվում էր, որ հանձնաժողովը գործողվում է Նոր Բայազետի գավառի Ջոդ գյուղը՝ հետաքննելու փետրվարի վերջերին տեղի ունեցած դեպքերի հանգամանքները, որոնց հետևանքով սպանվել էին դարաբաղյան հեծյալ դիվիզիոնի 4 սպա և 30 զինվոր, նաև պարզելու մեղավորներին և այդ հանցագործությանն առնչվող բոլոր հանգամանքները: Հրահանգում նաև ասվում էր, որ եթե կլինեն նաև թաթարների կողմից հայտարարագրեր հայերի թույլ տված բռնությունների մասին, ապա քննիչ հանձնաժողովը պարտավոր է հետաքննել նաև այդ բողոքները և մեղավորներին պատասխանատվության ենթարկել<sup>17</sup>: Արտակարգ քննիչ հանձնաժողովը մարտի 8-ին ժամանում է Բասարգեչար: Հանձնաժողովը երկու մահմեդականի է ուղարկում Ջոդ՝ առաջարկելով խոտվարարների առաջնորդներին մարտի 10-ին ներկայանալ Բասարգեչար՝ տեղի ունեցածի հանգամանքները պարզելու, սահմանված կարգով գործի քննությունը վարելու համար: Բանակցություններն ընթանում են մարտի 11-ին Մազրա գյուղում: Արտակարգ քննիչ հանձնաժողովն առաջարկում է հանձնել սպանված սպաների



Մովսես Սիլիկյան

և զինվորների դիերը, ունեցվածքը, զենքերը, ձիերը, փաստաթղթերը և դիվիզիոնի դրոշը՝ նշելով, որ միայն այդ դեպքում քննիչ հանձնաժողովը կհամաձայնի մտնել Ջոդ գյուղ՝ գործի պատճառների, շարժառիթների և հետևանքների անաչառ ու օբյեկտիվ հետաքննություն անցկացնելու: Արտակարգ քննիչ հանձնաժողովն իր բարոյական պարտքը համարեց նաև ընդգծել, որ այդ ամենը անհրաժեշտ է, որ խուսափեն, մասնավորապես, ռազմական ուժի գործադրումից: Նախաքննությամբ ձեռք բերված տվյալներով՝ թուրքերի կատարած հանցավոր գործողությունները վաղօրոք նախապատրաստվել էին տեղի անջատողական ուժերի կողմից և ուղղորդվել Բաքվից, որը տեղի մահմեդականներին դրդում էր շարունակելու պայքարը՝ ամեն կերպ խուսափելով խնդրի խաղաղ կարգավորումից և ձգտելով մեքենայությունների միջոցով, ինչպես նաև ազդելով բրիտանական թրքամետ գեներալների և մասնավորապես Թոմսոնի վրա, վաղ թե ուշ Բասարգեչարի հարցը վճռելու հոգուտ Ադրբեջանի: Բանակցություններն այդպիսով մտնում են փակուղի: Թշնամին ինչպես այսօր, այնպես էլ այդ օրերին Ջոդի և մյուս բնակավայրերի շուրջ կենտրոնացնում է զգալի զինուժ, զենք-ռազմամթերք, հրետանի, ինչը մարտահրավեր էր ՀՀ իշխանություններին:

ՀՀ կառավարությունը պաշտոնագրով դիմում է Երևանում գտնվող բրիտանական զինվորական ներկայացուցչությանը, որը մարտի 12-ին իր սպային է գործողում Բասարգեչար, որպեսզի անձամբ համոզվի, թե ինչքանով են օրինական հայկական իշխանությունների գործողությունները մահմեդական համայնքի նկատմամբ, և ինչքանով են պատճառաբանված նրանց ձեռնարկած քայլերը<sup>18</sup>, որոնց մասին տեղեկանում ենք ՀՀ արդարադատության նախարար Հարությունովի՝ քննչական հանձնաժողովի նախագահ Փարսադանովին ուղղված մարտի

10-ի նամակից, որում իրազեկվում էր, որ գեներալ Թումանի հանձնարարությամբ Նոր Բայազետ է մեկնում անգլիացի գնդապետ Թեմպերլեյը գողյան իրադարձությունները կարգավորելու համար<sup>19</sup>: Մարտի 12-ին Թեմպերլեյը այցելում է Բասարգեչար: 1919 թ. մարտի 17-ին Նախարարների խորհուրդն անդրադառնում է բասարգեչար-գողյան խնդրին՝ լսելով վարչապետի զեկուցումը Զող գյուղ պատժիչ գործնառն ուղարկելու մասին: Նիստում որոշվում է՝ 1) քննիչ հանձնաժողովը թողնել տեղում, որպեսզի հնարավորություն ստեղծվելուն պես նա անմիջապես անցնի գործի, 2) հանձնարարել զինվորական նախարարին կարգադրություն անել գեներալ Փիրումյանին, որ նա հարկ եղած դեպքում անմիջապես իր հայեցողությամբ որոշակի նախապատրաստություններ տեսնելուց հետո զինվորական ուժը շարժի դեպի ապստամբության վայր<sup>20</sup>: Մարտի 17-ին դեպքի վայր է ժամանում բրիտանական զինվորականության ներկայացուցիչ Բ. Թեմպերլեյը և, լսելով արտակարգ քննիչ հանձնաժողովի զեկույցը, թաթարների միջոցով նամակ է ուղարկում նրանց ներկայացուցիչներին՝ պահանջելով հապաղ ներկայանալ Բասարգեչար՝ բանակցությունների համար, սակայն բանագնացները չեն վերադառնում, և բրիտանական սպան ստիպված էտ է վերադառնում<sup>21</sup>: Այդ ընթացքում թաթարները Զողի շրջանում կենտրոնացնում են զգալի ուժեր (նաև շրջակա գյուղերի խոռվարարներին)՝ զինված հրացաններով ու գնդացիներով՝ նախապատրաստվելով ռազմական գործողությունների, նախօրոք տարհանելով իրենց ընտանիքներին և ունեցվածքը<sup>22</sup>:

1919 թ. մարտի 20-ին քննարկվում է մինիստր-նախագահի զեկուցումը Զողի դեպքերի առթիվ: Նախարարների խորհուրդը որոշում է՝ ա) հայտագիր ուղարկել Ադրբեջանի կողմից զինված խմբերի՝ հայկական սահմանն անցնելու առնչությամբ, բ) հանձնարարել զինվորական նախարարին կարգադրել գեներալ Փիրումյանին, որ վերջինս Նոր Բայազետից դուրս գալուց առաջ ուղիղ հեռագրակապով կապվի Երևանի հետ, գ) հանձնարարել արտգործնախարարին Զողի դեպքերի մասին հրապարակում անել մամուլում<sup>23</sup>:

Հարցի որոշ կարևոր մանրամասներ՝ կապված Զողի շրջանում մահմեդական շարժման ակտիվացման հետ, ակնհայտ են դառնում նաև ՀՀ արտաքին գործերի նախարարի 1919 թ. մարտի 22-ի հեռագրից՝ ուղղված Ադրբեջանի արտաքին գործերի նախարարին (պատճենը՝ Բաքվում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին): Դրանում ՀՀ արտգործնախարարը շեշտել էր, որ Զող գյուղի շրջանում սպանել են 4 հայ սպայի և դարաբաղյան երկրորդ հեծյալ դիվիզիոնի ավելի քան 10 զինվորի, ընդգծել, որ կառավարության ուղարկված քննիչ հանձնաժողովին դիմավորել են հրացանային համազարկով, և իշխանություններին ցուցաբերվող դիմադրությանն օժանդակել են Ադրբեջանից ժամանած զինված խմբերը: ՀՀ արտգործնախարարը, միանգամայն անթույլատրելի համարելով զինված խմբերի անցումը Ադրբեջանից

ՀՀ տարածք, ընդգծել էր, որ կառավարության հանձնարարականով ինքը եռանդագին բողոքում է նման գործողությունների դեմ, և խնդրում էր շտապ կարգադրություններ անել, որպեսզի Ադրբեջանի քաղաքացիներին ետ պահեն զինված ելույթներից և Հայաստանի տարածքում կարգը խախտելուց<sup>24</sup>:

Զողյան հանգույցը խնդիրներ էր ստեղծում հայ-ադրբեջանական սահմանի ողջ երկայնքով, վառողալիցք դառնում դիվանագիտական հարաբերություններում մեծացնելով լարվածությունը սահմանային շրջանների ներքին գործերի մարմինների և միլիցիայի աշխատանքներում: Ինչպես պարզվում է գեներալ Բադդասարովի՝ Ղարաքիլիսայից Երևան՝ գլխավոր հրամանատարին ուղարկված 1919 թ. մարտի 21-ի հեռագրից, որը հիմնված էր ստացված գործակալական հետախուզական տվյալների վրա, իրավիճակը վատացել էր նաև Բաշքենդի շրջանում կապված Զողում կատարված սպանությունների հետ: Հեռագրում հաղորդվում էր այն մասին, որ թաթարները նախապատրաստվում են, գյուղերում տեղի են ունենում հավաքներ՝ Զողի իրենց հայրենակիցներին օժանդակելու համար, որ Ադրբեջանի Գեդաբեկի շրջանից ուղարկվել է 200 մարդ, իսկ Զեզամի կիրճով անցկացվել են երկու թնդանոթ և երկու գնդացի, չեն կարողացել տեղափոխել մեկ լեռնային թնդանոթ, որը թողել են Շախթալա գյուղում, և շեշտվում նաև մի հետաքրքիր մանրամաս, որ նշանատուները ռուսներ և վրացիներ են<sup>25</sup>: Մեկ այլ հեռագրից, որի հեղինակը միլիցիոն գնդի հրամանատար շտաբ-կապիտան Մկրտիչյանն էր, հայտնի են դառնում այդ օրերի այլ փաստեր: Այսպես՝ 1919 թ. մարտի 24-ին շտաբ-կապիտան Մկրտիչյանը դիվիզիայի հրամանատարին հղած հեռագրում (պատճենը՝ Քարվանսարայում գտնվող գեներալ Բադդասարովին) հայտնում էր, որ, ստուգված տեղեկությունների համաձայն, թաթարները Շախթալա գյուղ են բերել դաշտային թնդանոթ, իսկ այնտեղ գտնվող լեռնային թնդանոթը Զիլ գյուղով տարել են դեպի Զող: Մկրտիչյանը հեռագրի վերջում նաև ավելացրել էր, որ, առանց թնդանոթների, տեղական ուժերն ի վիճակի չեն դիմադրելու, և խնդրում էր անհապաղ կարգադրություններ անել, թե ինչպես գործել<sup>26</sup>: Հայկական դիվիզիայի հրամանատարին ուղղված 1919 թ. մարտի 27-ի հեռագրում շտաբ-կապիտան Մկրտիչյանը Քարվանսարայից հայտնում էր, որ, ստացված տեղեկությունների համաձայն, Աղստևի աջ վտակ Թարսաչայի (Գետիկ) կիրճի թաթարները ցորեն և գարի են տեղափոխում Զող, և մարտի 25-ին 300 փութ տարվել է Դիլիջանով դեպի Չիրուխու<sup>27</sup>: Այս ընթացքում հայկական թե՛ քաղաքացիական, թե՛ զինվորական և թե՛ ՆԳ մարմինները նախապատրաստություններ են տեսնում, զբաղվում գործի կազմակերպմամբ, համալրում զենքի ու զինամթերքի պակաս պաշարները, լուծում գորակոչային խնդիրներ: 1919 թ. մարտի 18-ին Նոր Բայազետից զինվորական նախարարին ուղարկված հեռագրում Փիրումյանը հայտնում էր, որ ավարտին է մոտենում գորաջոկատի կենտրոնացումը, իսկ համալրումը կավարտվի մարտի 28-ին: Ավելացվում էր,



Քրիստափոր Արարատյան

որ ռազմական հետախուզությանը հաստատվել է, որ Ջոդի շրջանում կուտակվել են մոտ 6 հազար զինված թաթարներ՝ գնդացիներով և հեծելակով, ինչի մասին տվյալները դեռ ստուգվում են<sup>28</sup>։

Նախարարների խորհուրդը 1919 թ. մարտի 22-ի նիստում լսում է զինվորական նախարարի զեկուցումը Նոր Բայազետի գավառում զինվորական դաշտային դատարան հիմնելու մասին։ Որոշվում է, բացառությամբ մահվան պատժի, օրինագիծը հաստատել և ի կատար ածել<sup>29</sup>։

1919 թ. ապրիլի 2-ին Նախարարների խորհուրդը լսում է զինվորական նախարարի զեկույցը Ջոդ գյուղի խնդիրների մասին, և որոշվում է հանձնարարել զինվորական նախարարին կարգադրել գեներալ Փիրումյանին, որ նա գործի գնդապետ Ք. Թեմպերլեյի հետ համերաշխությամբ՝ գործի դնելով բոլոր հնարավոր միջոցները միջադեպը խաղաղ ճանապարհով հարթելու համար՝ խուսափելով, սակայն, ռազմական ուժի գործադրումից։ Միաժամանակ հերքվում է Ադրբեյջանի կառավարության ստահող պնդումը Ջոդ գյուղի ադրբեյջանական պատկանելության մասին՝ հատուկ ընդգծելով, որ այն մտնում է Հայաստանի Հանրապետության կազմի մեջ<sup>30</sup>։ Այս ընթացքում, բնականաբար, հայկական կառավարությունը ձգտում էր օգտագործելու դիվանագիտական բոլոր հնարավոր միջոցները՝ միջադեպը խաղաղ ճանապարհով հարթելու համար։ Միաժամանակ ձեռնարկվում էին ռազմաքաղաքական, ոստիկանական որոշակի միջոցառումներ՝ ամրապնդելու դիրքերը Հայաստանի համար ռազմավարական մեծ նշանակություն ունեցող Սևանա լճի ավազանում և Նոր Բայազետի գավառում, որտեղ և գտնվում էր չարաբաստիկ զոդյան հանգույցը։ Այդ շրջանում գործելու պատվին արժանացած դարաբաղյան հատուկ գումարտակի

ղեկավարությունը վստահվեց գեներալ-մայոր Դանիել քել Փիրումյանին և Սարդարապատի հերոս փոխգրնդապետ Ա. Շնեուրին՝ որպես շտաբի պետի<sup>31</sup>, որը զոդյան օպերացիայի ողջ ընթացքում ղեկավարեց նաև հետախուզական ծառայությունը։ 1918 թ. դեկտեմբերի 31-ից սկսած՝ Ա. Շնեուրը արդեն առանձին դարաբաղյան բրիգադի պետն էր<sup>32</sup>։ Ք. Արարատյանի դիմումագրում ուղղված Մ. Միրիկյանին, ասվում էր, որ, ըստ կապիտան Մեդվեդևի և փոխգնդապետ Ա. Շնեուրի, վարչապետը կարգադրել էր գեներալ Փիրումյանին ապահովել հետաքննիչ հանձնաժողովի մուտքը Ջոդ։ Հեռագրում խնդրվում էր նորից ստուգել ամեն ինչ, և հարցում արվում, թե ինչ անել, եթե հետաքննիչ հանձնաժողովի մուտքը Ջոդ խաղաղ ճանապարհով չհանգեցնի դրական արդյունքների։ Այդ պարագայում գեներալ Փիրումյանին հրահանգվում էր հրամանատարության միջոցով ուղիղ գծով կապվել կառավարության հետ և զինված ուժ չգործադրել մինչև այդ մասին ՀՀ կառավարությունից համապատասխան թույլտվություն ստանալը<sup>33</sup>։ ՀՀ կառավարությունը նորանոր ճշգրտումներ է մտցնում իր հետագա քայլերում, փորձում դուրս գալ ստեղծված ճգնաժամային իրավիճակից։ 1919 թ. ապրիլի 8-ին ՀՀ արտգործնախարարը Ադրբեյջանի արտգործնախարարից հեռագիր է ստանում, որում Ադրբեյջանի ներկայացուցիչը, Ջոդի շրջանը համարելով Ադրբեյջանի տարածք, անթույլատրելի էր համարում հայկական զինված ուժերի առկայությունը Ադրբեյջանի տարածքում և թյուրիմացությունից խուսափելու պատասխանատվությունը դնում ՀՀ կառավարության վրա<sup>34</sup>։

ՀՀ արտգործնախարարը Ադրբեյջանի արտգործնախարարին (պատճենը՝ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին Ադրբեյջանում՝ Ալ. Բեկզադյանին) ուղղված ապրիլի 3-ի հեռագրում ընդգծում էր, որ Ջոդ գյուղում տեղի ունեցած դեպքերը հետաքննելու, մեղավորներին գտնելու և օրինական պատասխանատվության ենթարկելու համար ՀՀ կառավարության կողմից այնտեղ է ուղարկվել արտակարգ քննիչ հանձնաժողով, որին, սակայն, չի հաջողվել դեպքերի վայր հասնել զինված թաթարների դիմադրության պատճառով։ Հայտնում էր, որ ՀՀ կառավարությունը զինվորական ջոկատին հրահանգել է ապահովել արտակարգ հանձնաժողովի մուտքը Ջոդ՝ հետաքննության համար՝ իրագրելով, որ բրիտանական գնդապետ Ք. Թեմպերլեյը գեներալ Վ. Թոմսոնի հանձնարարությամբ մեկնել է Ջոդ՝ նպաստելու արտակարգ քննիչ հանձնաժողովի ժամանմանը Ջոդ և հետաքննության անցկացմանը։ Հեռագրում նշվում էր նաև, որ հայկական կառավարությունը հանձնարարել է բախումը հարթել խաղաղ ճանապարհով, իսկ եթե չհաջողվի, գենքի ուժի չդիմել առանց կառավարության թույլտվության<sup>35</sup>։

Ճարահատյալ գնդապետ Թեմպերլեյը ուղևորվում է Ջոդ։ Այդ մասին ապրիլի 9-ին գեներալ-մայոր Փիրումյանին ուղարկած հեռագրում տեղեկացնում էր գնդապետ Շախանովը։ Ջոդում բրիտանական սպան հանդիպումներ է ունենում բնակչության

հետ, որն այն տեսակետին էր, որ ստեղծված իրավիճակում առավելագույն զիջումը, որին կարող էր համաձայնել տեղական թուրք բնակչությունը, այն էր, որ ապրիլի 11-ից հայկական զորքերը պետք է զբաղեցնեին թաթարական գյուղերը, ինչը միակ պայմանն էր, որի դեպքում նա համաձայն կլինեի շարունակել խոսակցությունը վիճահարույց հարցերի շուրջ: Թուրքերը Թեմպերլեյի հետ համաձայնում են պայմանով, որ զորքերի տեղակայմանը մասնակցի նաև անգլիացի ներկայացուցիչը, հակառակ դեպքում սպառնում էին չնահանջել<sup>36</sup>: Ինչպես պարզվում է գեներալ-մայոր Փիրումյանի հեռագրերից՝ ուղղված դիվիզիայի հրամանատարին, դեպքերի վայր ժամանած գնդապետ Ք. Թեմպերլեյը, Ջոդից վերադառնալով Բասարգեչար, թաթարներին հայտարարել էր, որ ապրիլի 11-ին հայկական զորքերը պետք է զբաղեցնեն այդ գյուղերը, ինչին թաթարները պատասխանել են, որ գյուղերի գրավումը հայկական զորքերի կողմից հնարավոր է միայն բրիտանական ներկայացուցչի անմիջական մասնակցության պայմաններում և նրա կարգադրությամբ: Փիրումյանը զորքերի համարում էր խնդրում՝ ավելացնելով, որ թաթարները շարունակում են զինվել, և, գնդապետ Ք. Թեմպերլեյի հետ պայմանավորվածության համաձայն, իրենց զորքերը ապրիլի 13-ին կարող են սկսել թաթարական Տաշքենդ, Ջոդ, Մեծ Մագրա և Փոքր Մագրա գյուղերի գրավումը՝ թաթարների զինաթափումն իրականացնելով խաղաղ ճանապարհով, իսկ դիմադրելու պարագայում՝ զենքով<sup>37</sup>:

Մահմեդական շարժման ակտիվ գնդապետ Ք. Թեմպերլեյը մի քանի օր մնում է Ջոդում, ապա՝ վերադառնում Բասարգեչար, իսկ մի քանի օր անց՝ ապրիլի 14-ին, Ջոդում հակապետական ելույթների նոր ալիք է բարձրանում:

Մահմեդական շարժման ակտիվացմանը Բասարգեչար-Ջոդի շրջանում Նախարարների խորհուրդը հերթական անգամ անդրադառնում է իր 1919 թ. ապրիլի 14-ի նիստում՝ լսելով զինվորական նախարարի զեկուցումը գեներալ Փիրումյանին Ջոդի դեպքերի վերաբերյալ հրահանգներ տալու մասին: Ըստ այդմ՝ որոշվում է հանձնարարել զինվորական նախարարին հեռագրել Փիրումյանին՝ 1) գործել Ք. Թեմպերլեյի ցուցումներին համաձայն, 2) եթե հարկ լինի զինված ուժ կիրառել, դիմել Ք. Թեմպերլեյին գրավոր առաջարկ ներկայացնելու խնդրանքով, 3) աշխատել չդիմել բռնագրավումների և ձեռք առնել ամենակտրոնկ միջոցները, որպեսզի ազգաբնակչության նկատմամբ բռնություններ չկիրառվեն՝ այդ մասին հայտարարելով ժողովրդին<sup>38</sup>: Նույն օրը ՀՀ արտգործնախարարությունը հատուկ գրությամբ տեղեկացնում է Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին, որ Ադրբեջանի կառավարության բողոքի և Բասարգեչարի շրջանում հայկական զորքերի առկայության առնչությամբ իրենք գտնում են, որ այդ տարածքը չի կարող դիտվել իբրև Ադրբեջանի տարածք, Բասարգեչարի շրջանը ՀՀ տարածքի անբաժանելի մասն է՝ կրկնելով, որ ՀՀ կառավարությունը բողոքում է ադրբեջանական



Հուլիանուսե Հախվերդյան

իշխանությունների կողմից Ադրբեջանի տարածքից ուղարկվող զինված թաթարական խմբերի՝ ՀՀ սահմաններն անցնելու դեմ, որոնք այնտեղ խռովություններ են բարձրացնում և բնակչությանը գրգռում զինված հակամարտության ընդդեմ Հայաստանի իշխանությունների<sup>39</sup>:

Ինչպես պարզվում է գեներալ Սիլիկյանին ուղղված գեներալ-մայոր Փիրումյանի ապրիլի 14-ի հեռագրից, գնդապետ Ք. Թեմպերլեյի առաջարկի համաձայն, ապրիլի 14-ի առավոտյան ժամը 7-ին հայկական զորքերի Նոր Բայազետի զորաջոկատը երկու զորաշարքերով սկսում է հարձակում՝ թաթարական գյուղերը գրավելու համար: Մակայն Մեծ Մագրայի թաթարները հանկարծակի ուժեղ հրացանակրակ են բացում, որին հայկական հետևակը չի պատասխանում՝ շարունակելով իր առաջխաղացումը դեպի գյուղ, և փոխարենը գյուղի վրա մի քանի հրետանագարկ է տրվում, ինչը թաթարներին ստիպում է նահանջել: Այդ ամենից հետո պարզվում է, որ բնակչությունը նախօրոք լքել էր գյուղը՝ իր հետ տանելով այն ամենը, ինչ հնարավոր էր տեղափոխել, իսկ կրակ արձակողները գյուղում մնացած թաթարական խմբերն էին: Նույնը կրկնվում է Հուսեյն Ղարալի, Աղալու, Կոշա Բալաղ, Գալբաշ և Սիրի Աղունի գյուղերի գրավման ժամանակ, իսկ Տաշքենդ գյուղի մերձակայքում տեղի են ունենում մարտեր, որոնցից հետո հայկական զորամասը գրավում է գյուղը, իսկ հակառակորդը փախչում է դեպի սարերը: Ապրիլի 14-ի մարտերում հայերն ունենում են 3 զոհ, վիրավորվում է փոխգնդապետ Իշխանուվը, որը, սակայն, վիրավորվելուց հետո վերադառնում է մարտաշարք: Այնուհետև հայերն ունենում են 15 զոհ և կորցնում 8 ձի: Հատկանշական է, որ բոլոր կարգադրություններն արվել են գնդապետ Ք. Թեմպերլեյի ներկայությամբ և գիտությամբ,

որը մարտերի ընթացքում գորքերի կողմից ոչ մի բռնություն և կողոպուտ չի տեսել: Հայկական բանակի առաջապահ գորամասերը գրավում են Մեծ Մագրան, Հուսեյն Ղում Աղալուն, Գալբաշին և Տաշքենդը<sup>40</sup>: Ապրիլի 15-ին՝ ժամը 7-ին, հայկական կողմը Ջող գյուղ է ուղարկում բանագնացների՝ սպիտակ դրոշակներով, սակայն թաթարները կրակ են բացում նրանց վրա: Հայկական կողմը երկրորդ անգամ է բանագնացներ ուղարկում, որոնք ևս չեն կարողանում գյուղ մտնել, որից հետո միայն դարաբաղյան գումարտակն անցնում է հարձակման և առանց կրակոցի գրավում Ջողը, որտեղից թաթարները փախել էին: Նույնը կատարվում է նաև Սար-Յաղուբ, Ղարա-Գոպլի, Աղքիլիսա և Ջարգիբի գյուղերի գրավման ժամանակ, որոնց բնակիչները նախօրոք լքել էին դրանք՝ դուրս բերելով իրենց ողջ ունեցվածքը: Այդ մարտերի ընթացքում վիրավորվում են 1 սպա, 18 զինվոր և 2 ձի, սպանվում 3 զինվոր և 3 ձի<sup>41</sup>:

Ինչպես պարզվում է գեներալ Միլիկյանին գեներալ-մայոր Փիրումյանի՝ Բասարգեչարից 1919 թ. ապրիլի 16-ին ուղարկած հեռագրից, ապրիլի 15-ին հետախույզներ են ուղարկվել Շորժալու գյուղ, սակայն պարզվել է, որ գյուղում խաղաղ տրամադրություններ չեն իշխել, և հետախույզները ենթարկվել են գնդակոծման: Ապրիլի 16-ին Թաղի-Քենդ գյուղի մատույցները զբաղեցնող գորաջուկատները շարժվել են դեպի Շորժալու՝ դարձյալ գնդակոծվելով այնտեղ դարանակալած թաթարների կողմից: Հրետանակոծելուց հետո հայկական գորամասը կարողացել է մտնել գյուղ և գրավել այն, իսկ փախած թաթարները ապաստանել են մոտակա լեռներում: Ապրիլի 17-ին հայկական գորամասերը զինակալել են խոռվության որջ Ջողը, որտեղից մահմեդական բնակչությունը փախել էր<sup>42</sup>:

Գեներալ-մայոր Փիրումյանի ապրիլի 23-ի հեռագրից՝ ուղղված գեներալ-մայոր Միլիկյանին, տեղեկանում ենք հաջորդ օրերի մարտական գործողությունների ժամանակագրությանը և մանրամասներին: Ապրիլի 18-ին՝ ժամը 16-ին, Շիշկայա գյուղն է ուղարկվել դարաբաղյան գումարտակի մի վաշտ, որը հանդիպել է թաթարների կրակին: Չնայած թաթարների համառ դիմադրությանը՝ գյուղը գրավվել է, որից հետո պարզվել է, որ այնտեղ զգալի ուժեր են եղել՝ մոտ 1000 հետևակ և հեծելակ: Նախօրոք թաթարները գյուղից դուրս էին բերել իրենց ունեցվածքը և ընտանիքները: Այս մարտերի հետևանքով հայկական կողմը ունեցել է 8 վիրավոր, 1 զինվոր սպանվել է, վիրավորվել է նաև պրապորշչիկ Մխիթարյանը<sup>43</sup>:

Այս բոլոր գործողությունների ընթացքում հայադրբեջանական սահմանի ողջ երկայնքով լարվածություն էր իշխում, ադրբեջանցիները դիմում էին բազմաբնույթ խարդավանքների, գորքերի զգալի տեղաշարժերի, բոլորն էլ՝ ակնհայտ հակահայկական ուղղվածության: 1919 թ. ապրիլի 29-ին ՀՀ արտաքին գործերի նախարարին ուղղված հեռագրում Գլխավոր շտաբի պետ գնդապետ Մ. Զինկևիչը հայտնում էր, որ, միլիցիոն գնդի հրամանատարից ստացված տեղեկատվության համաձայն, ապրիլի 23-ին Յաղուբլիով

Զիլի ուղղությամբ գնացել են ադրբեջանական գորքերի խմբեր, և ապրիլի 25-ին սպանվել է ադրբեջանական գորքերի ժամանումը Նովոսարատովկա և Նովոիվանովկա: Զինկևիչը նշում էր, որ միլիցիոն գնդի հրամանատարին կարգադրվել է այդ տեղեկությունները ստուգել և այդ մասին հայտնել իրեն<sup>44</sup>: Սակայն այդ ամենը չի կարողանում խոչընդոտել ու խանգարել հայկական բանակին եզրափակելու Ջողի օպերացիան, դաս տալու մահմեդական ագրեսիվորեն տրամադրված ուժերին, որոնք ձգտում էին Բասարգեչարի շրջանը կտրելու Հայաստանից և կցելու Ադրբեջանին: Հայկական գորամասերը տանում են տպավորիչ հաղթանակ՝ ագատագրելով հայրենի տարածքի մի կարևոր մասը, ընդ որում՝ դրսևորելով լավ ու մարտունակ գորքին հատուկ կարգ ու կանոն, կարգապահություն, զերծ մնալով հափշտակություններից և կողոպուտներից:

Այնուամենայնիվ, ՀՀ կառավարության կողմից Ջողի շրջան գործողված արտակարգ քննիչ հանձնաժողովը փորձեց բացահայտել այն շարժառիթները, որոնք ընկած էին Ջող-Բասարգեչարի մահմեդականների ապստամբական-խոռվարական գործողությունների հիմքում: 1919 թ. ապրիլի 27-ի դրությամբ արվել են հետևյալ եզրակացությունները.

1) Մուսուլմանների շրջանում հետաքննության անցկացման անհնարինության պատճառով հնարավոր չէրավ ճշգրտորեն պարզել Հայաստանի իշխանությունների դեմ մահմեդական ապստամբության շարժառիթները: Ենթադրվում է, որ ոռոմիստր Միլիկյանի՝ չափից ավելի մեծ պահանջները՝ իրենց տրամադրելու ցորեն և գարի, ընդամենը առիթ են հանդիսացել տխուր հանգուցալուծման համար, իսկ մահմեդականների դժգոհությունը իշխանություններից օրեցօր աճել է և վերածվել բախման: Պատճառների դեր կատարել են մի շարք հանգամանքներ:

2) 1918 թ. օգոստոսին ողջ Ջողի շրջանը Ադրբեջանի Հանրապետության կառավարության կողմից ճանաչվել է (կամ ընդունվել) որպես Ադրբեջանի սահմաններում ներառված տարածք և հայտարարվել Ելիզավետպոլի գավառի 9-րդ ոստիկանական տեղամաս, նշանակվել են իրենց կոմիսարները և միլիցիան: Իսկ 1919 թ. հոկտեմբերին այդ շրջանը ենթարկվեց Հայաստանին, մահմեդական բնակիչներն էլ, թեկուզև չկամությամբ, իշխանություններին ենթարկվելու պատրաստակամություն հայտնեցին՝ չխզելով իրենց կապերը Ադրբեջանի հետ:

3) 1918 թ. վերջին Նոր Բայազետի գավառ է գործողվել ոռոմիստր Միլիկյանը՝ դարաբաղյան հեծյալ դիվիզիոն կազմավորելու նպատակով, սակայն դրա համար ոչ մի միջոց պետական գանձարանից բաց չի թողնվել: Միլիկյանին հնարավորություն և իրավունք էր տրվել բռնագրավելու ձիերը, հանդերձանքը, զենք և դիվիզիոնը պահելու համար անհրաժեշտ ամեն ինչ: Բռնագրավումներն անցկացվել էին մի շարք չարաշահումներով՝ անտեսելով այդ նպատակով և այդ դեպքերի համար հանձնաժողովների կողմից սահմանված կարգը, վարկաբեկելով գործի գաղափարը: Դրանով զբաղվել էր ամեն ոք՝ ցան-

կացած սպա, կոմիսար, ուրյադնիկ, միլիցիոներ և այլն: Մեծ մասամբ բռնագրավված ունեցվածքի դիմաց տրվել էին ընդամենը ստացականներ, այդ ընթացքում թույլ էին տրվել այլ չարաշահումներ ևս, գլխավորապես՝ մահմեդական գյուղերում ձիերի բրոնագրավումների ժամանակ, քանզի բռնագրավված ոչ բոլոր ձիերն էին գնում դիվիզիոնի կարիքներին ծառայելու: դրանք պետական գներով վաճառվել էին կողմնակի՝ դիվիզիոնի հետ ոչ մի առնչություն չունեցող անձանց կամ էլ պարզապես իրենց նախկին տերերին, իհարկե՝ ավելի բարձր գներով, բռնագրավված անասնակերը նույնպես վաճառվել էր: Այս ամենը առաջ բերեց մահմեդական բնակչության դժգոհությունը, որին, իհարկե, Հայաստանի օրինական իշխանությունների դեմ ապստամբելու առիթ էր պետք:

4) 1919 թ. հունվարի վերջերին գաղթական հայերը ոմն Նիկոլայ Ավետիսովի գլխավորությամբ հարձակվել են մահմեդական Զագալու, Ղըզըլ-Վանք և Սուրբոտան գյուղական բնակավայրերի վրա ու թալանել դրանք, իսկ գյուղացիները փախել են Զոդի շրջանի մյուս գյուղերը: Նախապատրաստվող հարձակման մասին ժամանակին զգուշացվել է մահմեդական տեղամասային կոմիսարը, սակայն նրա կողմից ոչ մի միջոց չի ձեռնարկվել: Ճիշտ է, այդ գործով անցկացվել է նաև հետաքննություն, և կողոպտված ունեցվածքի մի մասը վերադարձվել է մահմեդականներին և առհասարակ բոլոր նրանց, որոնցից վերցվել էր, սակայն մեղավորները չեն բացահայտվել: Այս կարևոր պատճառներն էլ, ըստ էության, արտակարգ քննիչ հանձնաժողովի նախագահ Փարսաղանովի եզրակացությամբ, առաջ բերեցին մեծ դժգոհություն մահմեդականների շրջանում, որոնք նույնիսկ բացելիքաց հայտարարել էին, որ Հայաստանում ոչ մի իշխանություն էլ չկա, և իրենք չեն ցանկանում ոչ մեկի ենթարկվել: Այդ շարժառիթներով էլ Սիլիկյանների և այլոց սպանությունից մի քանի օր առաջ Զոդ գյուղից հեռացվել էր միլիցիայի պահակակետը: Այս եզրակացության էլ հանգել ՀՀ կառավարության կողմից Զոդ գործուղված արտակարգ քննիչ հանձնաժողովը 1919 թ. ապրիլի 27-ի դրությամբ, իսկ մայիսի 2-ին այն հաստատել է Արդարադատության նախարարության գրասենյակի դիրեկտորը<sup>45</sup>:

1919 թ. մայիսի 5-ին լսելով արդարադատության նախարարի պաշտոնակատարի զեկուցումը կառավարության կողմից Զոդ ուղարկված արտակարգ քննիչ հանձնաժողովի գործունեության մասին (զեկ. 951, մայիսի 2)՝ Նախարարների խորհուրդը հանձնարարում է արդարադատության և ՆԳ նախարարներին օրինական պատասխանատվության ենթարկել մեղավորներին<sup>46</sup>:

Հարցն առաջ բերեց դիվանագիտական-քաղաքական բարդություններ: 1919 թ. ապրիլի 10-ին Նախարարների խորհուրդը կցեց վարչապետի զեկուցումը Թեքինսկու ներկայացրած միջնորդության մասին՝ Զոդի շրջանում գործերը ետ քաշելու և քննիչ հանձնաժողովի աշխատանքներում թուրք ներկայացուցիչ ներգրավելու, և հանձնարարեց

արտգործնախարարին հայտնել Թեքինսկուն, որ ստեղծված պայմաններում գորքը ետ քաշելը ռազմական պատճառներով անհնար է, իսկ արտակարգ քննիչ հանձնաժողովի աշխատանքներին թուրք ներկայացուցչի մասնակցության դեմ առարկություն չկա<sup>47</sup>: Ինչպես տեսնում ենք, Զոդ-Բասարգեզարի շրջանում հայկական իշխանությունները ձգտում էին ելնելու օրինականության որոշակի սկզբունքներից՝ խուսափելով ավելորդ և անտեղի բարդացումներից ու սրացումներից: 1920 թ. ապրիլի 6-ին լսելով ՆԳ նախարարի զեկուցումը Բասարգեզարի հանձնաժողովի «ապօրինի գործողությունների մասին»՝ Նախարարների խորհուրդը, ընդունված որոշման մեջ քննիչ հանձնաժողովի կարգադրությունն անօրինական և պետական շահերի առումով խիստ վնասակար համարելով, ՆԳ նախարարությանը հանձնարարում է բոլոր փաստաթղթերը և նյութերը հանձնել զինվորական դատարանին<sup>48</sup>:

Ստեղծված բարդ իրավիճակում հայկական իշխանությունները, տեղի չտալով մահմեդականների ճնշմանը, օրինական ճանապարհով ապահովեցին ՀՀ անվտանգային շահերը Սևանի ավազանում կանխելով Ադրբեջանի տարածքային-քաղաքական վտանգավոր հավակնությունները, ինչը հեշտ չէր:

Զոդ գյուղի շրջանում հայկական բանակի գործողությունները բարձր գնահատականի արժանացան նույնիսկ բրիտանական ծառայության գնդապետ Ք. Թեմպերլեյի կողմից: Թաթարական գյուղերը մարտով գրավելու ժամանակ գորաջոկատի գործողությունները կարգապահության և սպաների ու զինվորների խիզախության առումով այնքան գերազանց էին, որ գնդապետ Թեմպերլեյը, օպերացիայի ավարտից հետո ժամանելով Երևան, անհրաժեշտ համարեց իր զեկուցում Հայաստանի կառավարության առաջ գովաբանել գորաջոկատին՝ տոկոսության և կարգապահ գործողությունների համար: Նախարարների խորհուրդը, ապրիլի 24-ին լսելով գնդապետ Թեմպերլեյի դրական կարծիքը, շնորհակալություն հայտնեց գեներալ-մայոր Փիրումյանին և բոլոր սպաներին ու զինվորներին՝ Զոդի շրջանում մարտական փայլուն գործողությունների համար: Զինվորական նախարար գեներալ-մայոր Ք. Արարատյանն իրեն երջանիկ համարեց, ի դեմս երիտասարդ հայկական բանակի, շնորհակալություն հայտնելու գեներալ-մայոր Փիրումյանին և նրա շտաբի պետ Շնետրին՝ իրականացված անթերի ռազմական օպերացիայի համար: Նա արժևորեց նրանց ներդրումը Զոդի գործողություններում՝ որպես փառավոր մարտական փորձ ունեցող սպաների, որոնք ստեղծել էին և ոգեկոչել Զոդի ջոկատը, որի իրականացրած գործողությունները առաջին անգամ դրական գնահատականի արժանացան անգամ բրիտանական բանակի ներկայացուցիչ գնդապետ Ք. Թեմպերլեյի կողմից: Զինվորական նախարարը կարգադրեց հատկապես այքի ընկած սպաներին ներկայացնել զինվորական կոչման հերթական աստիճանի, իսկ զինվորների պարգևատրման համար շտաբի պետ Շնետրինն իրահանգեց ի պահ վերցնել Գեորգիևյան 4 խաչեր



յուրաքանչյուր վաշտի, մարտկոցի և հեծելավաշտի համար<sup>49</sup>: Այս օպերացիայից հետո զինվորական գերատեսչության գծով 1919 թ. ապրիլի 28-ի հրամանով առանձին դարաբաղյան բրիգադի պետ Ա. Շնտուրը նշանակվում է Գլխավոր շտաբի բաժնի պետ<sup>50</sup>:

Բասարգեչարի շրջանի Զոդ գյուղի շուրջ ծավալված ռազմաքաղաքական բախումնալից իրադարձություններից հետո այդ տարածաշրջանի մուսուլման բնակչության մեծ մասը արդեն 1919 թ. տեղափոխվեց Ադրբեջանի տարածք, որտեղից նա վերադարձավ միայն խորհրդային իշխանության հաստատմամբ, ինչը պարտադրվեց Հայաստանի խորհրդային հանրապետությանը:

Զոդ-Բասարգեչարի հարցը ՀՀ կառավարությունը այդ պատմափուլում լուծեց հաջողությամբ, որն այդ անգամ արժանացավ բրիտանական բարձր աջակցությանը, ինչը բացառիկ դեպք էր՝ ի տարբերություն Արցախ-Ղարաբաղի հիմնախնդրի, որի դեպքում Մեծ Բրիտանիան և ՀՀ մյուս թվացյալ դաշնակիցները հանուն իրենց նավթային և գաղութային-կայսերապաշտական շահերի բացահայտորեն հովանավորեցին ու աջակցեցին բոլշևիզմի և Ռուսաստանի դեմ պատնեշի դեր կատարող Ադրբեջանին, որն իրեն բռնակցեց հայկական Ղարաբաղը: Այդուհանդերձ, զոդ-բասարգեչարյան խոռվահույզ իրադարձությունների ժամանակ Ադրբեջանին չհաջողվեց անդամահատել Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը Սևանա լճի ավազանում և հարակից շրջաններում, ինչը միանգամայն կարևոր էր նորահռչակ հայկական պետականության առջև ծառայած մարտահրավերների տեսանկյունից: ■

### Հղումներ

1. ՏՆՍ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թթ. 4, 6, 9-10, 15, 34, 44, «Արև», 1919, փետրվարի 11:
2. ՏՆՍ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թթ. 47, 54-55, 60; գ. 294, թ. 77:
3. ՏՆՍ «Кавказское слово», Тифлис, 25 апреля, 1919, N 5; «Единая Россия», Баку, 26 марта, 1919,:
4. ՏՆՍ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 100 (43), թ. 28; գ. 96, թ. 27:
5. Նույն տեղում, գ. 100 (43), թ. 28; գ. 20, թ. 31:
6. ՏՆՍ նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 211, մաս I, թ. 27:
7. ՏՆՍ նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 20, թ. 35:
8. ՏՆՍ Գրիգորյան Ա., Բորոխյան Ա., 2022, Օպերացիա «Զոդ». Ինչպես Հայաստանը 1919-ին պահեց Սոթքի բնագիծը, Երևան, «Նյու Մեք ՍՊԸ», 2022, նշել հրատ., էջ 113, 116-117:
9. ՏՆՍ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 115:
10. ՏՆՍ նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 100 (43), թ. 34; գ. 96, թ. 33; ֆ. 201, ց. 1, գ. 486, մաս I, թ. 58:
11. ՏՆՍ Հարությունյան Հ., Նոր Բայազետի գավառը 1914-1920 թթ., էջ 301:
12. ՏՆՍ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 64, թ. 3:
13. ՏՆՍ նույն տեղում, գ. 27, թ. 85:
14. ՏՆՍ Великая Октябрьская революция и победа Советской

- власти в Армении, Москва, 1957, էջ 256-258.; Деникин А., , Очерки русской смуты, Вооруженные силы Юга России. Т. IV, Париж-Берлин, «Слово», 1925, էջ 147: Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն: Հատոր I. Առաջին Տարին, 1918-1919, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2005, էջ 220-223:
15. ՏՆՍ Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն: Հատոր I, էջ 252, 257:
  16. ՏՆՍ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 64 (48), թ. 2:
  17. ՏՆՍ նույն տեղում, թ. 4:
  18. ՏՆՍ նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 115:
  19. Նույն տեղում, թ. 76:
  20. ՏՆՍ նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 486, մաս I, թ. 69; ֆ. 199, ց. 1, գ. 96, թ. 45:
  21. ՏՆՍ նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 115:
  22. ՏՆՍ նույն տեղում:
  23. ՏՆՍ նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 100 (43), թ. 48:
  24. ՏՆՍ նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 211, մաս I, թ. 62; ֆ. 199, ց. 1, գ. 73, թ. 45:
  25. ՏՆՍ նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 48:
  26. ՏՆՍ նույն տեղում, թ. 55:
  27. ՏՆՍ նույն տեղում, թ. 66:
  28. ՏՆՍ նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 64 (48), թ. 5:
  29. ՏՆՍ նույն տեղում, գ. 100 (43), թ. 51:
  30. ՏՆՍ նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 486, մաս I, թ. 81; ֆ. 199, ց. 1, գ. 100 (43), թ. 54; գ. 96, թ. 58; ֆ. 200, ց. 1, գ. 26, թ. 58:
  31. Սարգսրապատի հերոսամարտը, գրեց Գլխավոր Սպայակոյտի գնդապետ Ալեքսանդր Կ. Շնտուր, Մասնակցողի Յուշեր. Թարգմանեց Ա. Ամուրեան /Աղդեր-Տեր-Ամուրեան/, Ասպարեզ տպարան, հրատարակություն Հ.Կ.Դ.Կեղր. Կոմիտեի, 1967, Ֆրեզնո:
  32. ՏՆՍ նույն տեղում, ֆ. 204, ց. 1, գ. 104, թ. 53; գ. 129, թթ. 6-7, Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, «Բարձրագույն դպրոց» հրատ., 1997, էջ 223:
  33. ՏՆՍ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 59:
  34. ՏՆՍ նույն տեղում, թ. 64:
  35. ՏՆՍ նույն տեղում, թթ. 62, 64:
  36. ՏՆՍ նույն տեղում, թ. 76:
  37. ՏՆՍ նույն տեղում:
  38. ՏՆՍ նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 96, թ. 65; ֆ. 201, ց. 1, գ. 486, մաս I, թ. 96:
  39. ՏՆՍ նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 263, թթ. 79, 82:
  40. ՏՆՍ նույն տեղում, թթ. 86, 86ա; ֆ. 199, ց. 1, գ. 64 (48), թ. 9:
  41. ՏՆՍ նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 89; ֆ. 199, ց. 1, գ. 64 (48), թ. 10:
  42. ՏՆՍ նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 64 (48), թ. 8:
  43. ՏՆՍ նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 263, թ. 97:
  44. ՏՆՍ նույն տեղում, թ. 100:
  45. ՏՆՍ նույն տեղում, թթ. 68-72; ֆ. 199, ց. 1, գ. 64 (48), թթ. 11-15:
  46. ՏՆՍ նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 96, թ. 83; գ. 100 (43), թ. 84:
  47. ՏՆՍ նույն տեղում, գ. 96, թ. 63:
  48. ՏՆՍ նույն տեղում, գ. 146, թ. 56:
  49. ՏՆՍ նույն տեղում, ֆ. 204, ց. 1, գ. 132, թ. 68:
  50. ՏՆՍ նույն տեղում, գ. 131, թ. 24:

# Հայոց աշխարհակալ Տիգրան Մեծ արքայից արքան հռոմեացի սենատոր և ճարտասան Ցիցերոնի գնահատմամբ


Ալբերտ Մուշեղյան

Բան. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի առաջատար գիտաշխատող

Արքայից արքա Տիգրան Մեծի (մ.թ.ա. 95-55 թթ.) արդարամտությունը և արդարասեր բարքը փառաբանվել են փանդոնահար հայ հին գուսանների երգերում ու գրույցներում, որոնցում պատմվում էր Տիգրան Մեծի «արդարադատ կշեռքի» մասին: Այդպիսի մի գրույցից տպավորված՝ Պատմահայրը ևս դիմում է քերթողական արվեստին՝ հայոց մեծ արքայի արդարամտությունը համեմատելով «արդարադատ ու հավասարասեր կշեռքի» հետ, և այնուհետև նրա խոսքը ներբողյանի ոճ ու պերճություն է ստանում, որից նա մշտապես խուսափում էր իր «Պատմությունը» շարադրելիս. «Հայոց մեծ արքան ամեն բանում արդարադատ և հավասարասեր կշեռք ուներ, և իր մտքի լծակով կշռում էր ամեն մեկի կյանքը՝ չէր նախանձում լավագույններին և չէր արհամարհում նվաստներին, այլ ամենքի վրա առհասարակ ջանում էր տարածել իր խնամքի զգեստը» («Արդարադատ և հասարակասեր կշռոս ունեղով յամենայնի՝ զամենայն ուրուք զկենցաղ՝ մտացն լծակաւ կշռէր: Ոչ ընդ լաւագոյնսն խանդայր, և ոչ զնուաստսն արհամարհէր, այլ ամենեցուն հասարակաց հնարէր զխնամոցն իւրոց ի վերայ տարածանել զզգեստս»)¹:

Տիգրան Մեծի արդարադատ կշեռքի մասին այդ սրտառույզ գրույցը մնացել է հայ ժողովրդական բանահյուսության մեջ և հասել մեզ բանավոր ավանդությամբ, որն առաջին անգամ աշխարհաբար գրի է առել հայ նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանը: Իր «Զվարճալի ու կարճ պատմությունք» գրուցարանում, օտար աղբյուրներից հետաքրքիր դրվագներ քաղելով Ֆրիդրիխ Մեծ Փրուսսիո թագավորի, Կոնրադ Գ գերմանացոց թագավորի, ռուսաց թագավոր Պետրոս Մեծի, ֆրանցուզի թագավոր Մեծն Լյուդովիկոսի մասին, Խ. Աբովյանը ցանկացել է ցույց տալ, որ հայ ժողովուրդն էլ ունեցել է հին ժամանակներում մի շատ երևելի թագավոր, որի մեծարտությունը կարող էր հիացնել շատ ազգերի:

«Մեծն Տիգրան, անվանի թագավորն հայոց, մի օր որս անելիս (մատախուղի մեջ) մի քարի վրա սև ուրու տեսավ ու կարծելով, թե արծիվ է, նետը լարեց: Ուրվապատկերը վայր ընկավ, ձին չափ զցեց, որ որսը բռնի, բայց, ավանդ որսի տեղ տեսավ մի ութ տարեկան երեխա՝ արյան մեջ շաղախված: Իսեղճ մայրը, որ մոտը քնած էր եղել, ընկել էր վրան ու իրեն կոտորում էր: Մեծահոգի թագավորի գլխին կրակ վառվեց: Իսկույն ձիուց իջավ կնոջ ոտքերն ընկավ ու հրամայեց, որ մի կշեռք բերեն՝ մի նժարի վրա դնել տվեց երեխային ու իր թուրը, իսկ մյուս նժարին նույն քաշով ոսկի լցնել տվեց ու ասաց. «Թույր իմ, այս թուրն ու քո որդին, այս էլ նրա չափով ոսկին: Երեխայիդ ես սպանեցի անգիտությամբ: Կուզես՝ թուրն առ, վիզս կտրիր,



կուզես ոսկին վերցրու, որ գոնե քո գլուխը պահես: Ես լավ գիտեմ, որ դու քո անգին զավակը աշխարհի հետ չես փոխի, բայց ինչ անեմ, չար ժամի պատահեց մեզ այս բանը: Բայց էլի կամքը քոն է՝ ինչպես կուզես, այնպես արա»:

Ինչ պետք է աներ խեղճ մայրը, ինքն էլ տեսավ, որ թագավորը կամոք չի արել, ընկավ ոտքերը լալով ու ասաց. «Իմ ասողը խավարեց, թագավոր, բայց ինչ անեմ, քո ոտի հողն եմ. էդ մեծարտությունը, որ դու արիր, ինչպես կթողնի, որ ես իմ միակ որդու արյունը քո գլխին մատաղ չանեմ»: Այդ օրից սկսած՝ կինը թագավորի դռնից էլ չհեռացավ»²:

Այս ամենը ոգեշնչել է արվեստագետներին և երգահաններին ստեղծելու հայոց աշխարհակալ Տիգրանի մարդկային և առաքինի կերպարը փառաբանող անվագն քսաներեք օպերա. Տոմագո Ալբինոնի – «Տիգրան արքա Հայաստանի» (1697), Աստոնիո Մ. Բոնոնչիսի – «Տիգրան արքա Հայաստանի» (1710), Ալեսանդրո Սկարլատի – «Տիգրան կամ սեր և հավատարմություն» (1715), Ֆրանչեսկո Գասպարին, Աստոնիո Վիվալդի, Ֆրանչեսկո Կոնտի և Ջուզեպե Օրլանդինի – «Տիգրան» (1719), Յոհան Ադոլֆ Հասսե – «Տիգրան Մեծ» (1723), Աստոնիո Վիվալդի, Ֆրանչեսկո Կոնտի և Ջուզեպե Օրլանդինի – «Տիգրան» (1724), Ջեմինիանո Ջակոմելլի – «Տիգրան» (1733), Ջուզեպե Պագանելլի – «Տիգրան» (1733), Մանտո Լապիս – «Տիգրան» (1738/9), Ջուզեպե Արենս – «Տիգրան» (1741), Քրիստոֆ Վիլիբալդ Գլյուկ – «Տիգրան» (1743), Դանիել Դալ Բարբա – «Տիգրան» (1744), Աստոնիո Պավելլա – «Տիգրան» (1745), Ջովանի Լամպյունիանի – «Տիգրան» (1747), Ջուզեպե Կարկանի – «Տիգրան» (1750), Ջուզեպե Սարտի – «Պոմպեոսը Հայաստանում» (1752), Իգնացիո Սելոնիատ – «Տիգրան» (1757), Նիկոլո Պիչինի – «Տիգրան» (1761), Աստոնիո Տոցցի – «Տիգրան» (1762), Ջուզեպե Կոլլա – «Տիգրան» (1767), Պիետրո Ալեսանդրո Գուլիելմի

– «Տիգրան» (1767), անհայտ հեղինակ – «Տիգրան» (1771), Վինչենցո Ռիգինի – «Տիգրան» (1799):

Ըստ ավանդության՝ Տիգրան Մեծի մասին առաջին պատմական երկը գրել է Մետրոդորոս Սկեպասցին, որն ապրել է Միհրդատ Պոնտացու, իսկ կյանքի վերջին տարիներին՝ նաև Տիգրան Մեծի պալատում (ըստ Պլուտարքոսի՝ մահապատժի է ենթարկվել Միհրդատ Պոնտացու ձեռքով մ.թ.ա. մոտ 70 թ.): Մետրոդորոսի երկից, անշուշտ, պետք է օգտված լինեն ժամանակով նրան ավելի մոտ կանգնած հունահռոմեական պատմիչները:

Տիգրան Բ արքայից արքայի ռազմական արշավանքներն ու պետական գործունեությունը մանրակրկիտ քննարկման առարկա են դարձել հունահռոմեական հին հեղինակների պատմական երկերում ու ֆրագմենտներում՝ Սալուստիոս, Տիտոս Լիվիոս, Պոմպեոս Տրոգոս, Մեմոն, Ապպիանոս, Հովսեփոս, Պլուտարքոս, Դիոն Կասսիոս, Հուստինոս և այլք, մեզանում՝ Փավստոս և Խորենացի, որոնց մեծամասնությունը ապրել է Տիգրան Մեծից երկու-երեք դար հետո: Միակ ամենանշանավոր հեղինակը, որը ժամանակակից է Տիգրան Մեծին, և որի աչքի առաջ ստեղծվել է Տիգրան Մեծի՝ Կուր գետից մինչև Եգիպտոս ձգվող վիթխարածավալ աշխարհակալ տերությունը, անտիկ հռոմեացի հռչակավոր ճարտասան, իրավագետ և սենատոր Մարկոս Տուլիոս Ցիցերոնն է (մ.թ.ա. 106-43 թթ.):

Տիգրան Մեծի ստեղծած պետությունը և նրա մղած պատերազմներն արդեն իսկ անտիկ շրջանում գրավել են հունահռոմեական և այլազգի ականավոր պատմագիրների ուշադրությունը, որոնք երբեմն անաչառ տեղեկատվությամբ, հաճախ էլ փաստերը միտումնավոր խեղաթյուրելով, հարուստ և նույնքան էլ վիճահարույց նյութ են մատակարարել նոր ժամանակի պատմագիտությանը՝ առիթ տալով հակասական եզրակացությունների: Հենց միայն Տիգրանի արքայական խոյրն ու ապարոշը մի քանի տարբեր դրվագների նյութ են ծառայել Պլուտարքոսի, Դիոն Կասսիոսի, Մեմոնի, Փրոնտինոսի համար՝ նսեմացնելու հայոց արքայից արքային: Սակայն այդ դրվագներից որևէ մեկը չի հիշատակվում Ապպիանոսի երկում, ինչը և հիմք է տվել 19-րդ դարի գերմանացի նշանավոր պատմաբան Թեոդոր Մոզգենին իր «Հռոմեական պատմության» մեջ եզրակացնելու դրանց մտացածին լինելը:

Տիգրան Բ-ի և Հռոմի ռազմաքաղաքական հարաբերությունների հարցերով հիմնավորապես զբաղվել են եվրոպացի պատմաբաններ Մոզգենը, Ռեյնաքը, Էկհարդտը և այլք, մեզանում՝ հատկապես Հ. Մանանդյանը<sup>3</sup>, Ն. Ադոնցը, Յ. Աստուրյանը: Ստեղծվել են համաշխարհային հռչակ վայելող հայոց արքայի, պետական գործչի ու զորավարի գործն ու դարաշրջանն ամբողջացնող ուսումնասիրություններ: Բայց վերանայման կարիք ունի մանավանդ Լուկուլլոսի արշավանքների խառնաշփոթ շրջանը, մի զորավարի, որին անտիկ հույն գրող և պատմագիր Պլուտարքոսը (մոտ 45-127 թթ.) և նրանից արտագրած

պատմագիրները վերագրում են անվաստակ փառք ու հաղթանակներ:

Ցիցերոնի՝ աֆորիզմ հիշեցնող դառն հանդիմանությունը, թե «Հռոմեացի զորավարները հաճախ են վերադարձել հաղթանակի նշաններով, բայց ոչ հաղթանակով» («insignia victoriae, non victoriam reportarent»)<sup>4</sup>, պետք է բնաբան ծառայի Լուկուլլոսի և նրա նմանների մասին գրված ու գրվելիք աշխատությունների համար: «Հաղթանակեց Մուլլան Միհրդատի դեմ, հաղթանակեց Մուրենան, երկուսն էլ հույժ խիզախ այրեր ու կարկառուն զորավարներ, բայց միայն այնքան հաջող, որ նա (Միհրդատ Պոնտացին – Ա. Մ.), թեպետև ջարդված ու պարտված, բայց շարունակում է թագավորել<sup>5</sup> /.../ իսկ Լուկուլլոսի մասին ես կխոսեմ մի այլ տեղ, բայց այնպես կխոսեմ, քվիրիտներ, որ ոչ ինքը հուսախաբ լինի իմ ճառից՝ ճշմարիտ գովեստ լսելով, ոչ էլ ուրիշները՝ կեղծ գովեստ հորինելու համար<sup>6</sup>»:

Վերոհիշյալ հին հեղինակները և նոր պատմաբանները, ինչպես հարկն է, չեն գնահատել նույնիսկ Տիգրան Մեծի բացահայտ թշնամի, Հռոմի ինպերատոր (գլխավոր զորավար) Լուկիոս Լուկուլլոսի տված գնահատականը հայոց արքայից արքայի մասին՝ նույնքան բացասական, որքան և մեծարանքի արժանացնող: Իր քաղաքական ընդդիմախոսներին, որոնք մեղադրում էին իրեն Միհրդատի դեմ ուղղված ռազմական գործողությունները ձգձգելու և դանդաղկոտության համար, հռոմեացի գլխավոր զորավար Լուկուլլոսը պատասխանում է. «Դա էլ հենց իմ ուզածն է, ես դիտմամբ եմ դանդաղում, թող արքան (իմա՝ Միհրդատը – Ա.Մ.) նորից ուժ հավաքի և, ինչքան հարկավոր է իրեն, զորք ժողովի պատերազմի համար, մենակ թե մնա իր տեղում և խոյս չտա մեր մոտենալու ժամանակ: Չեք տեսնում ինչ է՝ նրա թիկունքում ինչ անսահման ամայի տարածքներ կան, իսկ կողքին Կովկասն է՝ վիթխարի լեռնային երկիր՝ խորունկ ձորերով, որտեղ կարող են պատսպարվել թեկուզ հազարավոր արքաներ՝ թշնամուց խոյս տվող: Բացի այդ՝ Կաբիրոսից ընդամենը մի քանի օրվա ճանապարհ է մինչև Հայաստան, իսկ Հայաստանում թագավորում է Տիգրանը՝ արքայից արքան, որն իր զորքով փակում է պարթևների ճանապարհը դեպի Փոքր Ասիա, իսկ հունական քաղաքների բնակչությունը գաղթեցնում է Մեդիա: Նա նվաճել է Ասորիքն ու Պաղեստինը, իսկ Սելևկյան տոհմի թագավորներին մահվան է մատնում և գերության տանում նրանց դուստրերին ու կանանց: Եվ այդ մարդը Միհրդատի բարեկամն է և փեսան: Եվ եթե Միհրդատը դիմի նրա պաշտպանությանը, ապա նա Միհրդատին չի թողնի աղետի մեջ և պատերազմ կսկսի մեր դեմ: Չլինի այնպես, որ, շտապելով Միհրդատին դուրս քշել իր տիրույթներից, հանդիպենք Տիգրանին ու փորձանքի գանք: Քանզի նա արդեն վաղուց առիթ է փնտրում մեր դեմ պատերազմելու, իսկ նա ինչ ավելի հարմար առիթ կարող է գտնել, քան նեղության մեջ օգնության գալու իր քեռայր արքային: Ինչո՞ւ ձգտենք դրան, ինչո՞ւ սովորեցնենք Միհրդատին,



Ըստ Ասպիանոսի Տիգրան Մեծի թագավորությունը ձգվում էր Բոս գետից մինչև Եգիպտոսի սահմանը՝ ներառյալ Կիլիկյան

թե ում օգնությանը դիմի մեր դեմ պայքարելիս: Ինչո՞ւ նրան մղել Տիգրանի գիրկը, երբ ինքն այդ չի ուզում և այն համարում է անպատվություն: Ավելի լավ չի լինի, եթե նրան ժամանակ տանք հավաքելու իր սեփական ուժերը և նորից ոգևորվելու: Այնժամ մեզ կմնա կովել կողքիսացոց, տիրաբեհների և կապաղովկացիների դեմ, որոնց մենք քանիցս պարտության ենք մատնել, ոչ թե մեղացիների և հայերի»<sup>7</sup>:

Սակայն քաղաքական ընդդիմախոսների և թևարկու «բարեկամների» սաղարսքները ի վերջո Լուկուլլոսին մղեցին արկածախնդրության, և նա, չունենալով Հռոմի Սենատի համաձայնությունը, մ.թ.ա. 69 և 68 թթ. երկու անգամ ներխուժեց Հայաստան: Եվ այդ չհայտարարված պատերազմի ծանր հետևանքների համար Հռոմի Սենատը 66 թ. ստիպված եղավ Լուկուլլոսին ժամկետից շուտ հեռացնել գլխավոր զորավարի (իմպերատորի) պաշտոնից:

Մարկոս Տուլիոս Ցիցերոնը՝ Տիգրան Մեծի ժամանակակիցը, լույս է սփռում Լուկուլլոսի անհետառես ռազմական գործողությունների հետևանքով Հռոմի համար ստեղծված ծանր կացության վրա: Ցիցերոնի այս ճառը, որին ստորև կանդրադառնամ, ցավոք, ինչպես հարկն է, չի լուսաբանվել և գնահատվել եվրոպական և հայ պատմագիտության մեջ: Տիգրանի աշխարհակալությանը վերաբերող մնացած սկզբնաղբյուրները պատկանում են հիմնականում Պլուտարքոսի, Ասպիանոսի և Դիոն Կասիոսի գրչին, որոնք ապրել են Տիգրան աշխարհակալի վախճանից 150-250 տարի հետո և իրենց հերթին օգտվել են Տիգրանի ժամանակակից լատին պատմագիր Սալլուստիոսից (մ.թ.ա. 86-34), որոշ չափով՝ նաև Տիտոս Լիվիոսից (մ.թ.ա. 59 – մ.թ. 17):

Հանդես գալով Հռոմի Սենատում մ.թ.ա. 66 թ.՝ Տիգրանի և Միհրդատ Պոնտացու (Եվպատորի) համատեղ հակահարձակման հետևանքով ստեղծված իրադրության առիթով՝ Ցիցերոնը դիմում է քվիրիտներին՝ Սենատի անդամներին, հետևյալ տագնապալից խոսքերով. «Ահեղ և վտանգավոր

պատերազմով ձեր դաշնակիցների և հարկատուների դեմ ելան երկու հզորագույն արքաներ՝ Միհրդատը և Տիգրանը: Առաջինը, որ թողնվել էր հանգիստ, և երկրորդը, որ մեր կողմից մարտահրավերնախազգաց, կարծեցին, թե առիթը ներկայացել է գավթելու Ասիան<sup>8</sup>: /.../ Բյութանիայում, որն այժմ ձեր պրովինցիան է, հրկիզվել են շատ գյուղեր<sup>9</sup> ... Իր թագավորությունից վտարված է Արիոբարզան թագավորը<sup>10</sup>, հռոմեական ժողովրդի դաշնակիցն ու բարեկամը: Ողջ Ասիային է սպառնում երկու արքաների ներխուժումը, որոնք ոչ միայն ձեր դիմախոսներն են, այլև ձեր դաշնակիցների և բարեկամների: Մեծագույն վտանգը ստիպում է Ասիայի և Հունաստանի բոլոր քաղաքային համայնքներին դիմել ձեր օգնությանը<sup>11</sup>»:

Գնեսու Պոնպետսին իմպերատոր կարգելու որոշմանը հասնելու համար իր ողջ ճառի ընթացքում Ցիցերոնը շարունակ հիշեցնում է քվիրիտներին նրանց ձեռք բերած տուրքերն ու եկամուտները, որոնցից նրանք կգրկվեին, եթե Հռոմը կորցներ իր դաշնակիցներին և հարկատու երկրները. «Իսկ Ասիան այնքան հարուստ և այնքան պտղաբեր է, որ և՛ իր դաշտերի բերրիությամբ, և՛ բազմատեսակ պտուղներով, և՛ իր ընդարձակ արոտավայրերով, և՛ արտահանվող ապրանքների առատությամբ շատ ավելի գերազանցում է բոլոր մյուս երկրներին»<sup>12</sup>: «Այնուհետև մենք՝ տառապանքով արդեն փորձվածներս, պետք է հաստատապես հիշենք այն, ինչ մեզ սովորեցրին Ասիայում պատերազմի սկզբին նույն այդ Ասիան և նույն Միհրդատը, երբ շատ շատերը Ասիայում մեծ-մեծ փողեր կորցրին. Հռոմում, ինչպես գիտենք, վճարումները դադարեցվեցին, և վարկերն ընկան»<sup>13</sup>: Այնպես որ միանգամայն իմաստագուրկ են դառնում Սենատի անդամներին ուղղված Ցիցերոնի պատվախնդիր կոչերը Հռոմի փառքի և հայրենիքի պատվի մասին, որոնցով նա փորձում էր հայրենասիրության շղարշով քողազարդել քվիրիտների փողի պարկերը. «Խնդիրը վերաբերում է հռոմեական ժողովրդի փառքին, որ ավանդել են ձեզ նախնիները, վեհ՝ բոլոր իմաստներով, բայց ամենից ավելի՝ ռազմի գործում: ... Խնդիրը վերաբերում է հռոմեական ժողովրդի ամենակայուն և առավելագույն եկամուտներին, որոնց կորստով կնվազեն խաղաղությունը գեղեցիկ դարձնելու և պատերազմը վարկավորելու միջոցները<sup>14</sup>»:

Ցիցերոնը հաղորդում է ռազմաքաղաքական բնույթի կարևոր տվյալներ, որոնք՝ իբրև դեպքերին ժամանակակից Հռոմի Սենատի երևելի անդամի վկայություններ, փշրում են հետագա պատմագրության մեջ ստեղծված կարծրատիպերը: Այն, որ հռոմեացի զորավար Լուկիոս Լուկուլլոսը հաղթարշավով անցել է Հայաստանով, իսկ Փոքր Ասիայում պարտություն են կրել միայն աննշան լեգատներ<sup>15</sup> Տրիարիոսը և նրա նմանները, բայց ոչ ինքը՝ Լուկուլլոսը, բացահայտվում է իբրև սովորական մեծապետական սնամեջ կեղծիք, որովհետև Հռոմի իմպերատորի, այսինքն՝ գլխավոր զորավարի կրած պարտությունը կարող էր դիտվել իբրև Հռոմի պարտություն, որի անսպարտելիության

վարկը պետք է անձեռնմխելի մնար պատմագրության, հետևաբար և պատմության մեջ:

Հիշենք, որ 244-245 թթ. Մասանյան Շապուհ I-ից Հռոմի կրած խայտառակ պարտությունը միայն 5-րդ դարում բյուզանդացի պատմագիր Ջոսիմոսն էր, որ անվանեց «ամենաամոթալի պարտություն»: Մինչդեռ Յիցերոնը ներկայացնում է Սենատին Փոքր Ասիայում և ապա Հայաստանում անձամբ Լուկուլլոսի վարած ռազմական գործողությունների անսքող պատկերը և իրական հաջորդականությունը: Ըստ Հ. Մանանդյանի՝ մ.թ.ա. 70 թ. գարնանը հռոմայեցիները երկար պաշարումից հետո գրավեցին Պոնտոսի թագավորությունից Հերակլեան և Մինոպը, իսկ աշնանը՝ նաև Ամիսոսը<sup>16</sup>: Լուկուլլոսի այս արշավանքի մասին Յիցերոնն իր ճառում հայտնում է. «Ժամանելուն պես Լուկուլլոսը գրավեց Մինոպն ու Ամիսոսը, որտեղ կային արքայական ապարանքներ՝ շքեղ զարդարված և լեվի-լեցուն ամեն տեսակ գանձերով, և Պոնտոսի ու Կապադովկիայի շատ ու շատ ուրիշ քաղաքներ, իսկ արքան (Միհրդատը – Ա. Մ.), գրկվելով իր հոր և պապերի թագավորությունից, մուրացկանի պես դիմեց ուրիշ թագավորությունների և ուրիշ ժողովուրդների, և այս բոլոր սխրանքները կատարվեցին առանց դաշնակիցներին փասա հասցնելու և առանց մուտքերի ու տուրքերի նվազանս<sup>17</sup>»: Այնուհետև Յիցերոնի խոսքից պարզվում է, թե ում օգնությանն էր մուրացկանի պես դիմել պարտված Միհրդատը. դա Հայաստանի արքա Տիգրանն էր. «Սարսափահար փախած Միհրդատը ապաստան գտավ Տիգրանի՝ Հայաստանի արքայի մոտ, որը բարձրացրեց նրա ընկած ոգին, վերադարձրեց նրա կորցրած առույգությունը և կենդանացրեց նրա նախկին հույսերը<sup>18</sup>»:

Պոնտոսը և Կապադովկիան գրավելուց հետո, ըստ Պլուտարքոսի, Լուկուլլոսը դեսպան է ուղարկում Ասորիք՝ Տիգրան արքայի մոտ, և պահանջում իր ձեռքը հանձնել Միհրդատին: Կտրուկ մերժում ստանալով՝ Լուկուլլոսը 12.000 հետևակով և 3.000 հեծյալով վճռում է ներխուժել Հայաստան: Գրեթե 150 տարի հետո այս արշավանքը նկարագրող Պլուտարքոսը, պատկերելով Լուկուլլոսի գործի ընթացքը Կապադովկիայով դեպի Եփրատ գետը, արշավանքի աղետալի վախճանին տեղյակ ու ինքնակի դառն պարսավանքով մատնում է մոտապուտ ապագայում Լուկուլլոսին Հայաստանում սպասվող ահավոր պարտությունը: Հայաստանի դեմ ձեռնարկվելիք այս պատերազմը Պլուտարքոսն անվանում է «խելահեղ անստություն». «Կարող է թվալ, նկատում է նա, թե ինչ-որ վայրագ, ողջամտությամբ թշնամի մի մոլուցք մղում էր նրան ռազմատենչ ցեղերի կենտրոնատեղին՝ նրանց անթիվ-անհամար այրուձիով, դեպի անձայրածիր մի երկիր, որ ամեն կողմից շրջապատված է խորունկ գետերով և հավերժական ձյունով ծածկված լեռներով<sup>19</sup>»: Պլուտարքոսի այս չարագուշակ վկայությունը ահագանգն է այն ծանր պարտության, որ կրելու էր Լուկուլլոսի գործը Տիգրանի մեծաքանակ հեծելազորից, որի հետ

բախվելը հույն հեղինակը խելահեղ անստություն է համարում: Մյուս կողմից, կարծես հիմնավորելով Լուկուլլոսի արշավանքի ձախողումը, Պլուտարքոսը մեջտեղ է բերում հռոմեական գործի շրջանում տիրող բացահայտ տրտուսը. զինվորները, որոնք առանց այդ էլ աչքի չէին ընկնում հնազանդությամբ, արշավանքի էին գնում դժգոհությամբ, բացահայտ արտահայտելով իրենց դժգոհությունը: Նույն այդ ժամանակ, ըստ Պլուտարքոսի, «Հռոմում ժողովրդական առաջնորդները հանդես էին գալիս աղմկահույզ կշտամբանքներով ու մեղադրանքներով Լուկուլլոսի հասցեին, թե նա մի պատերազմից մյուսն է նետվում, թեև պետությունը դրա անհրաժեշտությունը չունի, միայն թե ինքը մնա իմպերատոր և առաջվա նման օգուտ քաղի այն աղետներից, որոնց մեջ նա ներքաշում է հայրենիքը<sup>20</sup>»:

Լուկուլլոսի գործը Կապադովկիայից Հայաստան անցնելու համար պետք է կտրեր վարարած Եփրատ գետը: Ամենայն հավանականությամբ, անցումը տեղի է ունեցել Մելիտենեի մոտ՝ Արածանի և Եփրատ գետերի միախառնման վայրից հարավ-արևմուտք: Դա դժվար չէ ենթադրել Պլուտարքոսի պատմածից: Վարարած Եփրատը տեսնելով՝ Լուկուլլոսը տարակուսանքի մեջ ընկավ: Բայց երեկոյան դեմ ջուրն սկսեց նվազել, իսկ գիշերը գետն այնքան իջավ, որ լուսաբացին գործը հաջողությամբ անցավ մյուս ափը: Եվ այստեղ, ըստ Պլուտարքոսի պատմածի, Լուկուլլոսը հանկարծ նկատում է «այդ վայրերում արձակ արածող երինջներին, որոնք նվիրված էին պարսկական Արտեմիսին (Ἄρτεμις Ἀρτέμιδος)<sup>21</sup>. այդ դիցուհուն Եփրատի մյուս կողմում բնակվող բարբարոսները բոլոր աստվածներից առավել էին պատվում, իսկ երինջները միայն զոհելու համար էին և խարանված էին դիցուհու ջահի նշանով, բայց նրանց հեշտ չէր որսալ և զոհաբերել: Դրանցից մեկը բարձրացավ դիցուհուն նվիրված մի ժայռի վրա և գլուխն այնպես խոնարհեց, կարծես պարանոցը փոկով ձգեին, և ինքն իրեն նվեր էր մատուցում Լուկուլլոսին՝ զոհելու համար<sup>22</sup>»: Այս բարեգուշակ նշանը տեսնելով՝ իմպերատորը երինջի հետ մի ցուլ ևս զոհաբերեց Եփրատը բարեհաջող անցնելու համար:

Ջարմանալի է, որ Պլուտարքոսը Ծուփքում տեսած երինջներին պարսկական Արտեմիսի հետ է կապում, մինչդեռ նրան հաջորդած հռոմեացի պատմագիր Դիոն Կասսիոսը (2-րդ դարի վերջ – 3-րդ դարի սկիզբ) քաջ տեղյակ է, որ այդտեղից ոչ հեռու՝ Եկեղյաց գավառում էր գտնվում հայոց Անահիտ դիցուհու մեհյանը, և այդ պատճառով նույն Եկեղյաց գավառն անվանում է «**την Αναίτιον χώραν**»<sup>23</sup>: Անահիտական գավառ: Այդ մեհյանը հիշատակվում է նույնիսկ 293 թ. փորագրված Պայկուլիի արձանագրության մեջ<sup>24</sup>՝ միջին պարսկերեն և պահլավերեն զուգահեռ բնագրերով, որում Հայաստան ժամանած պարսից արքունի նվիրակները հաղորդում են. «...երբ մենք տեսանք հրովարտակը (PRW[RT]K), որ տրված էր Արամագրի և բոլոր աստվածների և Անահիտ տիկնոջ

անունից (NH[T]YE MRATY ŠME), Հայաստանով (MN 'RMNY) վերադարձանք Էրանշահր ('YR'N-[H]ŠTR)»<sup>25</sup>: Այստեղից հստակ երևում է, թե որքան մեծ համբավ ուներ հայոց Անահիտի մեծիանը Իրանի արքունիքում, որտեղ մեծ անհամբերությամբ էին սպասում հայոց քրմապետի հրովարտակին:

Անահիտի մեծիանը մեծ հռչակ էր վայելում նաև հելլենիստական երկրներում: Հեթանոս Տրդատ թագավորը, սաստիկ հանդիմանելով Գրիգոր Լուսավորչին հեթանոս աստվածներին անարգելու համար, ասում է. «Մանավանդ այս մեծ Անահիտ տիկնոջը, որը մեր ազգի փառքն է ու կենսատուն, որին բոլոր թագավորներն են պաշտում, մանավանդ հունաց թագավորը: Նա է բոլոր զգաստությունների մայրը, բարերարը ամբողջ մարդկային բնության և դուստրը՝ մեծ, քաջ Արամազդի»<sup>26</sup>:

«Այդ օրը գորքը դադար առավ, իսկ հաջորդ օրը բացվելուն պես Լուկուլոսը սկսեց շարժվել Ծովքով (ինձ՝ դեպի հարավ – Ա. Մ.) ... Երբ զինվորները ցանկություն հայտնեցին գրավելու ամրոցը, որտեղ, ըստ լուրերի, պահվում էին մեծաթիվ գանձեր»<sup>27</sup>, Լուկուլոսը պատասխանեց. «Ավելի լավ է գրավեք հրեն այն ամրոցը, - ցույց տվեց Տավրոսի հեռավոր լեռների կողմը, - իսկ այս բոլորը առանց այդ էլ կհասնեն հաղթողներին»: Հապճեպ շարունակելով ճանապարհը՝ նա անցավ Տիգրիսը և ոտք դրեց Հայաստան»<sup>28</sup>: Այստեղ Լուկուլոսը պաշարում է Տիգրանակերտը, որի պաշտպանները հերոսաբար դիմադրում են նրան, և Լուկուլոսը տիրում է քաղաքին միայն այնտեղ բնակվող մեծաթիվ օտարազգիների, հատկապես այն 300.000 հույների դավադրության հետևանքով, որոնց այդտեղ էր վերաբնակեցրել Տիգրանը Միհրդատ Պոնտացու խորհրդով<sup>29</sup> 12 հելլենական քաղաքներից, ինչպես և Կիլիկիայի Մաժաք քաղաքից (Ստրաբոն): Այսպես Տիգրանակերտը Լուկուլոսին հանձնվեց այնտեղ վերաբնակված հելլենների ձեռքով, որոնք ապերախտորեն վատ ծառայություն մատուցեցին արքայից արքա Տիգրանի հելլենասիրությանը:

68 թ. գարնանը Լուկուլոսը, դուրս գալով Կորդոբից, որտեղ նրա գորքը հանգստացել և կազդուրվել էր ձմռան ընթացքում, ձեռնարկում է մի նոր արշավանք դեպի Հայաստան: Նա գորքով Տավրոսից իջնում է Մշո դաշտ և հայկական ուժերի հետ երկու-երեք անգամ ընդհարվելուց հետո, Պլուտարքոսի վկայությամբ, ամռանը շտապում է հասնելու Արտաշատ մայրաքաղաք՝ գերելու արքունիքում գտնվող Տիգրանի կանանց և մանկահասակ զավակներին: Պլուտարքոսի վկայությամբ՝ Արտաշատ նոր մայրաքաղաքը կառուցվել էր Կարթագենի հայտնի զորավար Հաննիբալի խորհրդով, որը Կարթագենի պարտությունից հետո սպաստան էր գտել Հայաստանի Արտաշես 1-ին արքայի պալատում: Լուկուլոսի և Տիգրանի միջև ճակատամարտը, որ պատմագիտության մեջ հայտնի է Եփրատ-Արածանիի ճակատամարտ անունով, հավանորեն տեղի է ունեցել Բագավանի դաշտում՝ Նպատ լեռան



Ցիցերոն

ստորոտում՝ ճիշտ այնտեղ, որտեղ ուղիղ 4 դար հետո՝ 371 թ., տեղի ունեցավ Ջիրավի ճակատամարտը, երբ հայ-հունական զորքերը սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ ջախջախեցին պարսից Շապուհ II արքայից արքայի բանակը<sup>30</sup>:

Եփրատ-Արածանիի նշանավոր ճակատամարտը տարբեր կերպ է նկարագրվել հռոմեացի և հույն հեղինակների կողմից, որոնք և իրենց հերթին տեղիք են տվել ամենատարբեր, նույնիսկ իրարամերժ մեկնաբանությունների:

«Երբ Լուկուլոսը հասել էր Արածանի գետի ափը, - ինչպես վկայում է Պլուտարքոսը, - Տիգրանը ևս հանգիստ չմտած, ամբողջ զորությամբ առաջ խաղաց և, հասնելով այստեղ չորրորդ օրը, բանակ դրեց հռոմեացիների դեմուդեմ՝ մեջտեղում ունենալով Արածանի գետը»: Եվ հասկանալի չէ, թե այս պարագայում Լուկուլոսն ինչպես կարողացավ իր տասներկու կոհորտները (զնդերը) անցկացնել գետի մյուս ափը, երբ նրա դիմաց՝ հանդիպակաց ափին, կանգնած էր Տիգրանի բազմաքանակ ընտիր այրուձին: Հույն հեղինակը դա բացատրում է այսպես. «Տիգրանի գորքի առաջապահն էին հեծյալ աղեղնավոր մարդերը»<sup>31</sup> և նիզակավոր իբերները (վրացիք), որոնց կորովի և քաջության վրա Տիգրանը շատ վստահ էր, բայց նրանք ոչ մի քաջագործություն ցույց չտվեցին, այլ մի պահ միայն դիմակայեցին հռոմեացոց հեծելագորին, իսկ երբ առաջ խուժեցին վահանավոր հետևակները, նրանք ցիրուցան եղան ու փախուստի դիմեցին, և Լուկուլոսի հեծելագորն իսկույն ընկավ նրանց հետևից: Այս տեսնելով՝ Տիգրանն առաջ շարժեց իր հիմնական այրուձին, որի բազմությունից, զենքերի փայլից ու շողքից Լուկուլոսը սարսափի մեջ ընկավ և անմիջապես ձայն տվեց ետ դարձնել հետապնդման ուղարկած հեծելագորը»<sup>32</sup> («այրուձի այլ յառաջ խաղացուցեալ Տիգրանայ, ի փայլին ի շողին բազմութեանն գահի հարեալ Լուկուլոդեայ՝ ձայն տայր դարձի հետամուտ այրուձիոյ»<sup>33</sup>):

Պլուտարքոսի այս դրվագին անդրադարձել է նաև Մովսես Խորենացին «Պատմություն Հայոց»-ի առաջին գրքում. «Որոց ի մի վայր հասելոց բառական էր տեսիլն միայն, և որ ի նոցայն պահպանակաց և զինուց փայլմունք և շողիւնք՝ զթշամիսն արտահալածել»<sup>34</sup> («Եվ երբ նրանք հայտնվում էին մի վայրում, բավական էին միայն նրանց տեսքը և նրանց պահպանակների ու զենքերի փայլն ու շողը՝ թշամիսներին հալածելու»): Այս գրեթե բառացի քաղազրությունը, որ առաջին անգամ եմ մատնանշում, հստակորեն ցույց է տալիս, որ Խորենացին անձամբ կարդացել է Պլուտարքոսի «Լուկուլոս» կենսագրականը և ցանկացել հունարեն գրավոր աղբյուրով ևս հաստատել աշխարհակալ Տիգրան Մեծի զորավարական տաղանդը, որը փանդոսահար վիպասանները իրենց ավանդած վիպերգության մեջ զգալի չափով վերագրել են մ.թ.ա. 6-րդ դարում գործած Տիգրան Երվանդյանի վիպական կերպարին: Թեև Պատմահայրը այստեղ Լուկուլոսի անունը չի տալիս, բայց այդ հատվածը չափազանց արժեքավոր է նրա շարադրանքի, այսպես կոչված, միջբնագրային (ինտերտեքստուալ) քննության տեսանկյունից՝ ոչ միայն հունարեն բնագիրը հարազատորեն վերարտադրելու առումով, այլև իբրև թանկագին մատուց, որ հաստատում է հունական սկզբնաղբյուրից անձամբ օգտվելու փաստը, որի համար մեր դարում Խորենացին աղքատիմաց հավակնոտների վեճի առարկա է դառնում ոչ սակավ: Մինչդեռ Պլուտարքոսը «Լուկուլոս» կենսագրականում, հակառակ հռոմեացի զորավարին համակած սարսափի, նույն ոգով շարունակում է, իբր «նա քաջաբար դեմ դուրս եկավ ատրպատականցիներին, որոնք առաջ խաղացին ընտիր քաջերով՝ ասատիկ ահ ձգելով իրենց տեսքով, բայց, մարտի մեջ մտնելով, Լուկուլոսը փախուստի մատնեց նրանց»<sup>35</sup>: Ակներև է, որ այս ամենն ընթերցողին հավատացնելու համար Պլուտարքոսը վկայակոչում է հռոմեացի պատմագիր Լիվիոսին, ըստ որի՝ «առաջին մարտում թշամիսների մեջ բազմաթիվ էին ընկածներն ու գերիները, իսկ վերջում՝ նրանց ավագ իշխանները»<sup>36</sup>:

Անդրադառնալով Պլուտարքոսի նկարագրած այս ճակատամարտին՝ պետք է ընդգծենք, որ Տիգրանի այրուձիի առաջապահ հեծյալների (մարդերի և իբերների) անակնկալ ցրիվ գալու և փախչելու մեջ Պլուտարքոսը և որոշ այլ պատմագիրներ չեն հասկացել Տիգրան արքայի հեծելագործի կեղծ նահանջի և ապա հարձակման հնուտ ու խելամիտ նոր մարտավարությունը, այրուձի, որ գերազանցում էր Լուկուլոսի հեծելագործին: Մովսես Խորենացին վկայում է, որ Նպատ լեռան դեմ փոված Ձիրավի դաշտում հայոց Մուշեղ սպարապետի և հունաց զորքի համատեղ մղած ճակատամարտում պարսից Շապուհ II թագավորի զորքի հարձակման ժամանակ, երբ մերոնք նահանջում էին, մեր հեծյալները իրենց ձիերով պատսպարվում էին հունաց ասպարակիրների վահանափակի մեջ, կարծես մի ամուր քաղաք մտնելին՝ առանց որևէ վնաս կրելու:

Այդպես իր վահանակիրների հետ հետևակ զորքի իշխան Գորգոնոսը վահաններով, ինչպես պարսպով, պատում էր Պապ թագավորի ճակատը<sup>37</sup>:

Մ.թ.ա. 68 թ. Արածանիի առափնյա դաշտում Լուկուլոսի հեծյալներին և զինվորներին Տիգրան Մեծը այս նույն եղանակով էր ստիպում հարձակման անցնել և այդպիսով լքել հռոմեացի վահանակիրների ապահով թաքստոցը: Եվ սա այն նոր մարտավարությունն էր, որ Խորենացու նկարագրած Ձիրավի ճակատամարտից գրեթե չորսուկես դար առաջ առաջին անգամ գործադրում էր հայոց մեծ աշխարհակալը: Այս մարտավարությամբ պետք է բացատրել նաև հենց մարդերի և իբերների առաջապահ ջոկատի այն կեղծ «սարսափահար փախուստը», որ ճակատամարտի սկզբում նկարագրում էր Պլուտարքոսը՝ այն համարելով «ճակատը լքելու ամոթալի փախուստ»:

Այս մարտավարությունը միայն 250 տարի հետո կրահել է հռոմեացի պատմագիր Դիոն Կասսիոսը: Վերջինս, հակառակ Պլուտարքոսի նկարագրած «հաղթական» դրվագների, նույն ճակատամարտի իր նկարագրության մեջ ավելի անաչառորեն է ներկայացնում իրականությունը. «Լուկուլոսը արդեն ամռան կեսին սկսեց արշավանքը, քանզի ցրտերի պատճառով անկարելի էր զարնանը ներխուժել թշամու երկիրը, և ավերեց երկրի որոշ մասերը, որպեսզի բարբարոսները, պաշտպանելով այն, ներքաշվեն պատերազմի մեջ, բայց քանի որ նրանք դարձյալ չարժվեցին, ինքն արշավեց նրանց վրա: Եվ այս ընդհարման ժամանակ հռոմայեցի հեծյալներին թշամու հեծելագործը դժվար դրության մատնեց, իսկ հետևակի հետ նրանցից ոչ մեկը ձեռնամարտի դուրս չեկավ, այլ նրանք փախչում էին ամեն անգամ, երբ Լուկուլոսի վահանակիրները օգնության էին հասնում հեծելագործին: Այսուհանդերձ, թշամիները որևէ վնաս չկրեցին, այլ նրանք, ետ դառնալով և հետապնդողներին նետահարելով, շատերին իսկույն սպանեցին, իսկ շատ շատերին էլ վիրավորեցին»<sup>38</sup>:

Դիոն Կասսիոսի այս նկարագրության մեջ դրսևորվել է ռազմական այն նոր մարտավարությունը, որն անձանթ էր Լուկուլոսին: Քանի որ հռոմեական զորքի վահանակիրներն իրենց կիցառակից վահաններով պատսպարում և անխոցելի էին դարձնում Լուկուլոսի հեծյալներին, այդ պատճառով Տիգրանն առաջապահ զորախմբերի կեղծ փախուստով ստիպում էր հռոմեացի վահանակիրներին հարձակման անցնել և բացազատվել: Ապա հիմնական այրուձին սրընթաց առաջ էր նետվում, և հենց ձիերի թամբերից դիպուկահար աղեղնավորները, Խորենացու խոսքով՝ «դիպաղեղունք», մինչ այդ չտեսնված երկծայր նետերով խոցոտում էին թշամու զինվորներին ու հեծյալներին:

«Վերքերը ծանր էին և դժվարբուժելի, շարունակում է Դիոն Կասսիոսը, քանզի նրանք (ինձ՝ հայ նետաձիգները – Ա.Մ.) գործածում էին երկծայր նետեր, և ծայրերը այնպես էին իրար ազուցված, որ նետերը թե՛ մարմնի որևէ մասում մտնելու և թե՛

դուրս քաշվելու դեպքում արագորեն սպանում էին, որովհետև երկաթյա ծայրերից մեկը, որը չէր ամրացված, մնում էր վերքի մեջ»<sup>39</sup>: Այսպես, մեծ կորուստներ պատճառելով, Տիգրանի դիպուկահար նետաձիգները մաշում էին հռոմեական բանակը:

Այս նոր մարտավարության մասին նշում է և Հ. Մանանդյանը. «Տիգրանի հեծելազորի փախուստը պարզապես կեղծ փախուստ էր, որի միջոցին նրա նետաձիգ արագաշարժ ձիավորները նոր ջարդ էին տալիս թշնամուն: Կովելու արևելյան այդ ձևը գործադրել էին, ինչպես հայտնի է, նաև պարթևները Կրասսոսի դեմ, որը կատարյալ պարտություն էր կրել 53 թվին»<sup>40</sup>: Մակայն անվանի պատմաբանի վերջին դիտողությունը պարզապես անուշադրության հետևանք է, որովհետև 53 թվին Կրասսոսի դեմ պարթևների տարած հաղթությունը Լուկուլլոսի դեմ Տիգրանի հաղթանակից 15 տարի հետո էր: Ուրեմն պարթևներն էին ընդօրինակել Տիգրան Մեծի խաբուսիկ նահանջի նոր մարտավարությունը, ոչ թե հակառակը:

### *Լուկուլլոսի ենթադրյալ արշավանքը դեպի Ելիմայիսի փաճարը և դրա հերքումը*

Դեպքերին ժամանակակից Ցիցերոնը Լուկուլլոսի՝ 68 թ. Հայաստան ներխուժելու առթիվ մատնանշում է այլ հետաքրքիր մանրամասներ, որոնք բացակայում են ավելի ուշ ապրած հեղինակների աշխատություններում. «Այնուհետև, երբ Լուկիոս Լուկուլլոսը գորքով մտավ նրա (Տիգրանի – Ա. Մ.) տերության սահմանները, բազմաթիվ ազնվական տոհմեր (plures etiam gentes) դուրս եկան մեր իմպերատորի դեմ, քանզի երկյուղ էին ներշնչել այդ ազգերին (nationibus), որոնց հռոմեացի ժողովուրդը երբևիցե մտադիր չի եղել անհանգստացնել ոչ պատերազմով և ոչ այլ փորձությամբ: Բարբարոսների մեջ սարսափազդու լուր էին տարածել, որ սաստիկ պեկոճել էր նրանց, թե իբր մեր գորքը մտցվել է այդ երկիրը՝ նրանց ամենահարուստ և ամենապաշտելի տաճարը կողոպտելու: Եվ ահա բոլոր ուժեղ ցեղերը ոտքի ելան՝ համակված անասելի ահով ու սարսափով»<sup>41</sup>:

Պատմագիտության մեջ տարբեր կարծիքներ են արտահայտվել, թե որտեղ է գտնվել Ցիցերոնի նշած հռչակավոր տաճարը: Ըստ Մոմզենի՝ դա պարսկական Նանեայի կամ Անահիտի տաճարն է Ելիմայիսում՝ ներկայիս Լուրիստանում<sup>42</sup>: Ցիցերոնի ճառերի ռուսերեն թարգմանիչներ Վ. Օ. Գորնշտեյնը և Մ. Ե. Գրաբար-Պասեկը այդ տաճարը տեղադրում են Բարիդում՝ Արտաշատից Եկբատան տանող ճանապարհին : Ինչպես նշում է Հ. Մանանդյանը, 68 թ. հռոմեա-հայկական պատերազմը Մոմզենը և Ռեյնաքը բնորոշել են իբրև միացյալ Արևելքի ազգային և կրոնական պատերազմ ընդդեմ Արևմուտքի : Ըստ Մոմզենի՝ կարելի էր հեշտությամբ այդ պատերազմը դարձնել նաև կրոնական և տարածել լուր, որ Լուկուլլոսի արշավանքի նպատակն

է պարսկական Նանեայի կամ Անահիտի տաճարի գրավումը Ելիմայիսում: Այդ տաճարն ամենից շատ մեծարված և հարուստ սրբավայրն էր Եփրատ գետի ամբողջ առափնյա շրջանում: Ասիացիները խմբերով հավաքվում էին մոտ շրջաններից և հեռվից թագավորների դրոշների տակ, որոնք նրանց կանչել էին պաշտպանելու Արևելքը և նրա աստվածներին անաստված օտարերկրացիներից :

Բանաստեղծական ազատություն տալով իր երևակայությանը՝ գերմանացի պատմաբանը նոր ժամանակների կրոնական մոլեռանդությունը փորձում է տարածել անտիկ ժամանակների վրա, երբ, չնայած իշխող բազմաստվածությանը, ժողովուրդների մեջ համընդհանուր սովորություն կար նույնացնելու տարբեր անուններ ունեցող աստվածներին, որոնք բնության նույն երևույթներն ու նույն պաշտամունքն էին մարմնավորում իրենց պատկերացումներում:

Մոմզենի այս կարծիքի դեմ վճռաբար հանդես եկան գերմանացի պատմաբան Կուրտ Էքհարդը և ակադ. Հակոբ Մանանդյանը: Էքհարդը դատապարտում է «իսլամի սրբազան պատերազմի գաղափարը» անտիկ աշխարհին վերագրելու միտումը՝ շեշտելով, որ այն ժամանակ ամեն մի գավառ ուներ իր սեփական կրոնական կենտրոնատեղին<sup>46</sup>: Բարձր գնահատելով «Լուկուլլոսի հայկական արշավանքները» ուսումնասիրության մեջ Էքհարդի դրսևորած միանգամայն անաչառ դիրքորոշումը՝ Հ. Մանանդյանը հատկապես ընդգծում է նրա այն միտքը, որ «68 թվին հայերը պատերազմում էին հռոմայեցիների դեմ, գլխավորապես, իրենց սեփական ուժերով և ունեին իրենց հետ համեմատաբար ավելի քիչ դաշնակիցներ, քան 69 թվին...»<sup>47</sup>: Եվ դա հաստատում է Պլուտարքոսը, ըստ որի՝ Արածանիի ճակատամարտում Տիգրան Մեծի զինակիցներն էին միայն նրա աները՝ Միհրդատ Պոնտացին, և փեսան՝ Ատրպատականի թագավոր Միհրդատը:

Վիճարկելով անտիկ աշխարհում արևելյան ազգերի մեջ իբր գոյություն ունեցած «կրոնական սրբազան պատերազմի» գաղափարը՝ այսուհանդերձ հարկ է նշել, որ Կուրտ Էքհարդը, Հակոբ Մանանդյանը և այլք հետամուտ չեն եղել, թե ինչի հիման վրա է Թեոդոր Մոմզենը Լուրիստանում գտնվող Անահիտի տաճարը կապել Լուկուլլոսի հայկական արշավանքների հետ: Երևի Մոմզենին թյուրիմացության մեջ է գցել Պլուտարքոսի հիշատակած **պարսկական Արտեմիսի** (Ἐρστίας Ἀρτέμιδος) գաղափարը:

Միանգամայն անտեղի են համարում այդ տաճարը որոնել պարսկական Ելիմայիսում կամ Բարիդում, որքան էլ տեղանքի այդպիսի ընտրությունը հարմար է Արևելքի ժողովուրդների ենթադրյալ կրոնական պատերազմի պատրանքին: Ըստ իս՝ Ելիմայիսի տաճարի մասին իր տեղեկությունը Թ. Մոմզենը պետք է քաղած լինի Հովսեփոս Փլավիոսի «Հրեական հնախոսություն»-ից: Այս պատմական երկում Հովսեփոսը նկարագրում է սելևկյան տոմարի 149-րդ տարում (մ.թ.ա. 164-163) Անտիոքոս



Եպիփանես թագավորի ձեռնարկած արշավանքը դեպի Պարսկաստանի Ելիմայիս քաղաք՝ կողոպտելու այնտեղի Արտեմիսի (Անահիտի) տաճարի ճոխ գանձերը, երբ պաշարված քաղաքի բնակիչները քաջաբար դիմադրեցին նրան և, պարիսպներից դուրս գալով, հալածեցին մինչև Բաբելոն<sup>48</sup>:

Անտիոքոսի արշավանքի իրողությունը Մոմզենը բանաստեղծական երևակայությամբ պարզապես փոխադրել է Տիգրան Մեծի ժամանակները և գրեթե մեկ դար հետո կրկնում է այդ իրադարձությունը Լուկուլլոսի արշավանքի տեսքով:

Անակնկալ գրոհ դեպի Անահիտ դիցուհու մեծանը Իրավացի չէ Հ. Մանանդյանը՝ եզրակացնելով, թե իբր կրոնական պատերազմի մասին «Մոմզենի և Ռեյնաքի սխալ այդ դիտողությունները հիմնված են, իրավի, բացառապես միայն մի վիճելի հատվածի վրա Կիկերոնի ճառից»<sup>49</sup>: Իրականում Մանանդյանի սխալ մեկնաբանությունը նաև հետևանք է Տիգրանի ճառի իր իսկ սխալ թարգմանության: Ահա այդ թարգմանությունը. «Երբ Լուկուլլոսը, - վկայում է Կիկերոնը, - մտավ իր գործով նրա [Տիգրանի] թագավորությունը՝ շատ ցեղեր արդեն զբոսած էին մեր հրամանատարի դեմ: Մեկ կողմից՝ ահով լցվել էին այն ցեղերը, որոնց երբեք հռոմեական ժողովուրդը մտադիր չէ եղել անհանգստացնել կամ պատերազմի միջոցով նվաճել: Իսկ մյուս կողմից՝ բարբարոս ցեղերի մեջ մի դաժան ու գրգռիչ կարծիք էր ստեղծվել և տարածվել, որ իբր թե մեր գործը եկել էր այդ երկրները, որպեսզի կողոպտե ամենահարուստ ու ամենանվիրական սրբատեղին: Այսպիսով բազմաթիվ և մեծ ցեղեր գրգռվել էին և նորից մատնվել ահ ու սարսափի»<sup>50</sup>:

Ջարմանալի է, որ Մանանդյանը Տիգրանի այս խոսքերի հետևանքն է համարում Մոմզենի և Ռեյնաքի՝ «արևելյան ցեղերի հայտարարած կրոնական պատերազմի» գաղափարը, թեև այս թարգմանության մեջ «արևելյան ցեղերի կրոնական պատերազմ» արտահայտությունն իսպառ բացակայում է: Այդ դեպքում ինչ իմաստ ունի Տիգրանին վերագրել մի գաղափար և ապա խոստովանել, թե Տիգրանից «...մեջ բերված հատվածի բովանդակությունից և ս դժվար է եզրակացնել, որ իբր թե 68 թվի պատերազմը եղել էր կրոնական և ընդհանուր արևելյան»<sup>51</sup>:

Այստեղ իմ թարգմանությամբ բերում եմ Տիգրանի ճառի այն հատվածը, որ տարակուսանքի մեջ է գցել Մանանդյանին. «Այնուհետև, երբ Լուկիոս Լուկուլլոսը գործով մտավ նրա (Տիգրանի - Ա. Մ.) տերության սահմանները, բազմաթիվ ազնվական տոհմեր (plures etiam gentes) դուրս եկան մեր իմպերատորի դեմ, քանզի երկյուղ էին ներշնչել այդ ազգերին (nationibus), որոնց հռոմեացի ժողովուրդը երբևիցե մտադիր չի եղել անհանգստացնել ոչ պատերազմով և ոչ այլ փորձությամբ: Բարբարոսների մեջ սարսափազդու լուր էին տարածել, որ սաստիկ պլեկոծել էր նրանց, թե իբր մեր գործը մտցվել է այդ երկիրը՝ նրանց ամենահարուստ և ամենապաշտելի տաճարը կողոպտելու: Եվ ահա բոլոր ուժերը ցեղերը ոտքի ելան՝

համակված անասելի ահով ու սարսափով»<sup>52</sup>:

Հ. Մանանդյանն իր թարգմանության մեջ, ինչպես ընդգծել եմ, չորս անգամ «ցեղեր» է անվանում Տիգրանի լատիներեն բնագրում հայ ժողովրդի տարբեր խավերին: Տիգրանը «Gentes» ասելով նկատի ունի Հայաստանի ազնվական արտոնյալ տոհմերը, այսինքն՝ նախարարական տները: Տիգրան Մեծի ժամանակ գոյություն ունեցած հայոց նախարարական տների (Բագրատունի, Մեիրուծան-Միթրոբարզանեսի, Մանկայոսի և այլոց) հարցին անդրադարձել է Նիկողայոս Ադոնցն իր «Армения в эпоху Юстиниана» աշխատության մեջ: Վերջին Մանկայոսին Ն. Ադոնցը համարում է հետագայում շատ հայտնի Մամիկոնյան քաջարի տոհմի հիմնադիրը: Ադոնցին հետևելով՝ բոլոր այդ տոհմերը Հ. Մանանդյանը ներկայացրել է իր «Տիգրան Բ և Հոմեր» երկում:

Ստորև կտեսնենք, թե ինչ սրբատեղի նկատի ունի Տիգրանը իր ճառում: Տիգրանի հեծելազորից կրած պարտությունից գլուխը կորցրած Լուկուլլոսը, որ նախապես մտադրվել էր արշավել Հայաստանի մայրաքաղաք Արտաշատ՝ գերելու Տիգրանի կանանց և գավակներին, կեսճանապարհին հրաժարվելով այդ մտքից, որոշեց արշավել դեպի Հայաստանի Վերնագավառը: Ինչպես տեսնում ենք, խոսքը ամենևին էլ Ելիմայիսի տաճարին չի վերաբերում: Իմ համոզմամբ՝ Տիգրանը նկատի ունի Հայաստանի Եկեղյաց գավառի Երեզ ավանում գտնվող Անահիտի հռչակավոր մեծանը, որը հեթանոս հայերի թերևս ամենապաշտելի սրբավայրն էր, և հայ ժողովուրդն էլ իսկապես կարող էր տագնապել, որ Փոքր Ասիայում Պոնտոսի և Ամիսոսի արքայական ճոխ ապարանքները կողոպտած Լուկուլլոսը և նրա գործը կարող էին նույն վայրագությամբ կողոպտել իր նվիրական տաճարի հարուստ գանձերը:

Իսկ որ Տիգրանի խոսքն իսկապես Եկեղյաց գավառի Անահիտի մեծանի մասին է, հաստատում է և Պլուտարքոսը՝ նշելով, որ Լուկուլլոսը մտադիր էր առաջանալ դեպի Վերնագավառ և իսպառ վերացնել բարբարոսներին, որի վկայությամբ ցարդ ուշադրություն չեն դարձրել «Լուկուլլոսի հայկական արշավանքները» ուսումնասիրած պատմաբանները. «Խորհէր (Լուկուլլոս) ի Վերնագավառ անդր յառաջ խաղալ, և ՚ի սպառ զբարբարոսս վանել»<sup>53</sup> («*αὐτὸς προάγειν διενόητο καὶ καταστρέφεισθαι τὴν βάρβαρον*»<sup>54</sup>): Ըստ երևույթին, Պլուտարքոսի հայ թարգմանիչ Եղիա վարդապետ Թոմաճանը Վերնագավառ բառը գործածել է այստեղ ոչ պատահաբար: Փավստոսը «Հայոց պատմության» մեջ Վերնագավառը է անվանում Հայաստանի հյուսիսային գավառները ոչ թե սուկ «վերին գավառներ» իմաստով, այլ հենց Բարձր Հայք անվան փոխարեն, ինչի մասին է վկայում հայ պատմիչը՝ անմիջապես հիշելով նաև ստորին գավառը արտահայտությունը՝ նկատի ունենալով Ստորին Հայքը, որտեղ և գտնվում էր Անգեղոտուն գավառը<sup>55</sup>: Ուրեմն հռոմեացի ճարտասանը և հույն պատմագիրը ճիշտ պատկերացում ունեին Անահիտ

դիցուի մեխանի և Եկեղյաց գավառի մասին, որը, ինչպես տեսանք, հռոմեացի պատմագիր Դիոն Կասիոսը Ասահտական գավառ է անվանում:

Եվ անհա բոլոր հայ նախարարական տների առաջնորդներն իրենց գորքերով՝ Տիգրան Մեծի գլխավորությամբ, ոտքի ելան և հուժկու հարված հասցրին Լուկուլոսին, որը Մոմզենի և Ռեյնաքի երևակայության մեջ տպավորվել է իբրև Արևելքի ժողովուրդների կրոնական մոլեռանդ պատերազմ ընդդեմ Արևմուտքի:

Ցիցերոնի ճառում տեղ գտած այն սենտիմենտալ պատճառաբանությունը, թե իբր Հայաստան ներխուժած հռոմեացի զինվորները հանկարծ ան զգացին այդ վայրերի չափազանց մեծ հեռավորությունից՝ կարոտելով իրենց հարազատներին, և, փոխանակ առաջ շարժվելու, պահանջեցին անմիջապես ետ նահանջել, անտարակույս պատկանում է իրեն՝ Լուկուլոսին, որն այդ կերպ արդարացնում էր Հայաստանում իր կրած պարտությունը. «Իսկ մեր գորքը, թեև մի քաղաք<sup>56</sup> էր գրավել Տիգրանի թագավորության մեջ, շարունակում է Ցիցերոնը, և մղել հաջող ճակատամարտեր, այսուհանդերձ սկսեց տրտնջալ այդ վայրերի չափազանց մեծ հեռավորության պատճառով՝ կարոտելով իր հարազատներին: Այլևս այս մասին չեմ խոսի. բանը վերջացավ նրանով, որ մեր զինվորները առաջ շարժվելու փոխարեն պահանջեցին անմիջապես ետ նահանջել»<sup>57</sup>:

Պլուտարքոսն առհասարակ նշանակություն չի տվել հռոմեացի զինվորների սենտիմենտալ կարոտախտին և Լուկուլոսին հասած աղետը բացատրում է ոչ թե նրանց քմահաճույքով, այլ Հայաստանի բնության արհավիրքներով, թե իբր մ.թ.ա. 68 թվի սեպտեմբերի 21-ի գիշերահավասարին տեղացած անսպասելի ձյունը և սառնամանիքները ստիպեցին Լուկուլոսին հեռանալ դեպի հարավ: Վրա հասած սառնամանիքից ձիերի սմբակների ջլերը կտրվում էին սառցակալած ջրերում: Այս կերպ ձիերից գրկված հռոմեական հեծելազորը փաստորեն դարձել էր հետևակ, և, ըստ Պլուտարքոսի, զինվորները սառչում էին մութ ու խոնավ ծմակներում ու թավուտներում: Այնուհայտ է, որ Տիգրանի հեծելազորի հարվածների տակ Լուկուլոսի գորքի մնացորդները թաքնվել էին անտառներում, որտեղ, ըստ Պլուտարքոսի, նրանց տրտունջները սպառնալիքի և ըմբոստության հասան:

Այսպիսով՝ Լուկուլոսի պարտության պատճառը ոչ թե անակնկալ վրա հասած սեպտեմբերյան սառնամանիքն էր, այլ Տիգրանի հեծելազորից կրած ջախջախիչ հարվածը: Հենց այդ այրուձին է ակնարկում Պլուտարքոսը Լուկուլոսի արշավանքի նախաբանում, որ բերեցի վերևում, երբ դեռ նրա գորքը գտնվում էր Կասպաղովկիայում. «Կարող է թվալ, թե ինչ-որ վայրագ, ողջամտությանը թշնամի մի մոլուցք մղում էր նրան ռազմատենչ ցեղերի կենտրոնատեղին՝ նրանց անթիվ-անհամար այրուձիով, դեպի անձայրածիր մի երկիր, որ ամեն կողմից շրջապատված է խորունկ գետերով և

լեռներով՝ ծածկված հավերժական ձյունով»:

Այն ժամանակ Լուկուլոսը բազում աղերսանքներով և քաջալերանքով զինվորներին համոզում էր համբերել, «մինչև զԿարքեդոնն Հայոց հիմն ի վեր քանդեցեն» («մինչև հիմքից քանդեն այն ձեռակերտը, որ հիմնել էր իրենց ոլներին թշնամի Հաննիբալը»), բայց քանի որ չկարողացավ նրանց հանդարտեցնել, առաջ շարժվեց նրանց հետ և, Տավրոսի բարձունքն անցնելով, մի այլ ճանապարհով քաշվեց դեպի Մյուզոնիա՝ պտղաբեր և արևահայաց մի գավառ, որտեղ ընդարձակ և բազմամարդ քաղաքն էր, որ բարբարոսները կոչում էին Մծբին, իսկ հելլենները՝ Մյուզոնյան Անտիոք:

Տիգրան Մեծի հարազատ եղբայր Գուրասը (հայերեն՝ Գոռ – Ա. Մ.) «պաշտպանում էր Նիսիբիս (հայերեն՝ Մծբին) քաղաքը Լուկուլոսից, երբ նա, Արտաշատից ետ մղվելով, անցավ Տավրոսը և պաշարեց այդ կարևոր ռազմավարական կետը»<sup>58</sup>: Այստեղ Ադոնցը բաց է թողել Գուրասին առնչվող կարևոր շարունակությունը, որ նշում է Պլուտարքոսը. «Ըստ ավագության կարգի՝ քաղաքին իշխում էր Տիգրանի եղբայր Գուրասը, իսկ բազմավորձ մեքենական հմտությամբ՝ Կալլիմաքոսը, որը Ամիսոսի պաշարման ժամանակ մեծ նեղություն էր պատճառել Լուկուլոսին: Այժմ իր հնարագիտությամբ գորքով պաշարելով քաղաքը՝ Լուկուլոսը կարճ միջոցում գրավեց այն: Ապա մեծ մարդասիրություն ցուցաբերեց Գուրասի հանդեպ, որ անձնատուր եղավ նրան, բայց չխնայեց Կալլիմաքոսին, թեպետ և խոստացել էր բաժին հանել նրան թաքնված մեծամեծ գանձերից, այլ հրամայեց գելարանի մեջ պրկել»<sup>59</sup> նրան որպես վրեժ նախկինում Փոքր Ասիայում Ամիսոս քաղաքի պաշարման ժամանակ Կալլիմաքոսի հարուցած հրդեհի և ավերածության»<sup>60</sup>:

Նկատի առնելով Լուկուլոսի այս անգիջում հիշաչարությունը Կալլիմաքոսի հանդեպ և նրա վրեժխնդրությունը Մծբինը գրավելու ժամանակ՝ Գուրասի նկատմամբ տաժած նրա «բազում մարդասիրութիւն»-ը պետք է բացատրել սոսկ նրանով, որ Տիգրան արքայից արքան իրապես չհետապնդեց Լուկուլոսին և մեծահոգաբար թույլ տվեց, որ անվտանգ հեռանա Հայաստանից:

Հույն հեղինակները մեկ անգամ չէ, որ շինծու մեծահոգություն են վերագրում Լուկուլոսին Տիգրան Մեծի հանդեպ, ինչպես Դիոն Կասիոսը, որը միանգամայն անհիմն հետևության է հանգում կամ գիտակցաբար թաքցնում է իրողությունը՝ մտացածին պատճառ բերելով, թե իբր Լուկուլոսը Տիգրանին չհետապնդեց, այլ թույլ տվեց նրան ազատորեն փրկվել: Եվ իբր այս պատճառով էլ Լուկուլոսը «քաղաքացիների և մյուսների» (հասկանալի չէ, թե էլ ում) կողմից պաշտոնանկ արվեց<sup>61</sup>: Դիոն Կասիոսի այս հաղորդումը նպատակ ունի Լուկուլոս իմպերատորի պաշտոնանկության պատճառ համարելու նրա շինծու վեհանձնությունը: Նման մեկնաբանությունը հակասում է Ցիցերոնի հաղորդած տեղեկությանը, որը թեև խիստ ժլատ է

իր պերճախոսության մեջ Հռոմի հանրային գործերը հրապարակավ քննելիս, բայց և ստիպված է Մենատի անդամներին հիշեցնել Լուկուլլոսին «խմպերիումից» զրկելու և ետ կանչելու իրական պատճառները, որոնք ոչ մի կապ չունեն երկու դար հետո Դիոն Կասսիոսի հորինած փաստարկումների հետ:

Լուկուլլոսին պաշտոնանկ են արել ոչ թե Հռոմի քաղաքացիները իբր Տիգրան Մեծի նկատմամբ ցուցաբերած մեծահոգության և վեհանձնության համար, այլ Հռոմի Մենատը՝ 68 թ. առանց Մենատի թոյլտվության Հայաստան ներխուժելու պատճառով, երբ, Յիգերոնի վկայությամբ, Հայաստանում «բազմաթիվ ցեղեր դուրս եկան մեր իմպերատորի դեմ, քանզի երկյուղ էին ներշնչել այդ ազգերին (nationibus), որոնց հռոմեացի ժողովուրդը երբևիցե մտադիր չի եղել անհանգստացնել ո՛չ պատերազմով և ո՛չ այլ փորձությամբ»<sup>62</sup>: Յիգերոնի այս խոսքերը, որ, հավանաբար, Հռոմի Մենատի ընդունած որոշումից են քաղված, վկայում են, որ Լուկուլլոսը Մենատից լիազորություն չի ունեցել Հայաստանի դեմ պատերազմ սկսելու և Տիգրանի երկիրը ներխուժելու, որովհետև Հռոմում չէին ցանկանում ռազմական բախման մեջ մտնել միաժամանակ «երկու հզորագույն արքաների՝ Միհրդատի և Տիգրանի հետ (a duobus potentissimis regibus infertur, Mithridate et Tigrae)»<sup>63</sup>, ինչպես բազմիցս նշում է Յիգերոնը:

Հակառակ հետագա պատմագրության հնարովի, բայց ոչ հնարամիտ մեկնաբանություններին՝ Յիգերոնը թերևս միակն է և դեպքերի ժամանակակիցը, որ համարձակվում է իրերը կոչել իրենց անուններով և խոստովանել Լուկիոս Լուկուլլոսի «կրած ծանրագույն ռազմական պարտությունը» (իր բառերն են՝ «gravissima belli offensione»): Ոչ պակաս կարևոր է և Յիգերոնի մյուս վկայությունը, որ այդ ծանրագույն պարտությունը Հռոմի իմպերատորը կրել է «երկու հզորագույն արքաների՝ Տիգրանի և Միհրդատի դեմ մղած ծանր պատերազմում»: Սրանով նա ցանկանում էր ինչ-որ չափով թեթևացնել Լուկուլլոսի մեղքը: Իսկ թե որքան ծանր է եղել այդ պարտությունը, երևում է Յիգերոնի հետևյալ խոսքերից. «Թո՛ղ տվեք այստեղ, քվիրիտներ, Հռոմի պատմությունը շարադրող բանաստեղծների»<sup>64</sup> օրինակով լռել մեզ հասած դժբախտության մասին, որ այնքան ծանր եղավ, որ իմպերատորին այդ լուրը հասցրեց ոչ թե ռազմադաշտից եկած սուրհանդակը, այլ տարածված համբավը: ...ես դիտմամբ լուրջան են տալիս շատ ուրիշ հանգամանքներ, բայց ինքներդ կռահում եք դրանց մասին և հասկանում, թե որքան բարդ պիտի լինի մի պատերազմ, որը միացյալ ուժերով մղում են հզորագույն արքաները (reges potentissimi), շարունակում մեր դեմ արդեն ապստամբած ժողովուրդները<sup>65</sup>, սկսում դեռևս կովին չխառնված ցեղերը...»<sup>66</sup>:

Իր ճառում Յիգերոնը հիշատակում է նաև Մենատի ընդունած այդ վճիռը. «Ձեր հրամանի համաձայն, հիշեցնում է նա քվիրիտներին, քանի որ դուք, հետևելով հինավուրց ավանդությանը, անհրաժեշտ համարեցիք կարճել նրա իմպերիումի տևողությունը,

նա արձակեց այն զինվորներին, որոնց ծառայության ժամկետը լրացել էր, իսկ մնացյալին հանձնեց Մանիոս Գլաբրիոսին»<sup>67</sup>: Վերջինս Լուկուլլոսից հետո նշանակված նոր իմպերատորն էր, որի անգործության պատճառով Յիգերոնի առաջարկով Մենատը իմպերատոր նշանակեց Գնետո Պոմպեոսին: Այս ամենից հետո հասկանալի է դառնում հաջորդ իմպերատոր Գնետո Պոմպեոսի ընդգծված հարգալից վերաբերմունքը Հայաստանի ալեգարդ արքա Տիգրան Մեծի նկատմամբ, ինչը պայմանավորված էր Լուկուլլոսի վերաբերյալ Մենատի ընդունած խիստ որոշմամբ և նոր իմպերատորին տրված հանձնարարությամբ՝ ամեն կերպ բարելավելու Հռոմի հարաբերությունները հայոց արքայից արքայի հետ:

Կյանքի վերջին տարիներին՝ 55 տարեկան հասակում՝ մ.թ.ա. 51 թ., Յիգերոնը վիճակահանությամբ նշանակվեց Կիլիկիայի փոխարքա: Նա հաջող կառավարում էր և ճնշեց կապադովկիացիների խռովությունը՝ առանց գեներալի դիմելու, ինչպես և պարտության մատնեց Ամանոսի լեռան ելուզակ ցեղերին, ինչի համար ստացավ իմպերատորի տիտղոս: Յիգերոնը սևեռուն ուշադրությամբ հետևում էր Հռոմում հանրապետականների և կայսերականների քաղաքական պայքարին և իբրև հանրապետականների առաջնորդ՝ իր համարձակ ելույթներով վտանգի էր ենթարկում իր անձը, հատկապես այն ժամանակ, երբ թվում էր, թե Օկտավիանոսը, Աստոնիոսը և Մարկ Էմիլիյ Լեպիդոսը պարտված են և չեն կարող միասնություն կազմել: Սակայն 43 թ. աշնանը տեղի ունեցավ անսպասելին, և Հուլիոս Կեսարի եռապետությունից հետո նրանք կազմեցին երկրորդ եռապետությունը: Եռապետների զորքը գրավեց Հռոմը, և Աստոնիոսը կարողացավ Յիգերոնի անունը մտցնել «ժողովրդի թշնամիների» ցուցակի մեջ, որը նրանք հրապարակեցին իրենց միության կայացումից անմիջապես հետո, և այս կերպ Յիգերոնը դատապարտվեց մահապատժի: Նա փորձեց փախչել Հունաստան, բայց դահիճները հետապնդեցին, և երբ նա նկատեց, որ դահիճները հասնում են իր դեսպակին, հրամայեց ստրուկներին ցած դնել դեսպակը և վարագույրի ետևից իր պարանոցը մեկնեց կենտրոնի: Հերենիոսը կտրեց նրա կոկորդը, ապա Աստոնիոսի հրամանով՝ գլուխն ու ձեռքերը: Յիգերոնը սպանվեց 43 թ. դեկտեմբերի 7-ին՝ 64 տարեկան հասակում: Պլուտարքոսը պատմում է, որ Յիգերոնի գլուխն ու ձեռքերը ցուցադրել էին հռետորների ամբիոնին՝ ի սարսափ հռոմեացիների, որոնք այս ամենի մեջ տեսնում էին ոչ թե Յիգերոնի դեմքը, այլ Աստոնիոսի հոգու պատկերը:

Աստոնիոսի այս դաժանությունը սոսկ անձնական վրեժխնդրության հետևանք էր, և դա անվրեպ կարելի է գուշակել Մովսես Խորենացու օգնությամբ, որը նույնպես ծաղրանքի առարկա է դարձրել Մարկոս Աստոնիոսին՝ գրելով. «Աստոնիոս՝ ինքն ի ձմերոց գնայ յԵգիպտոս: Փութայր հասանել ըստ շամբշութեան առն կնամուլոյ, ցանկութեամբ վառեալ ի

Կոլոպատրայ դշխոյն Եգիպտացոց»<sup>68</sup> («Անտոնիոսն ինքը ձմեռանոց է գնում Եգիպտոս: Նա շտապում էր այնտեղ հասնելու կնամոլ մարդու վավաշտությամբ, վառված ցանկությամբ դեպի Կլեոպատրան՝ եգիպտացիների թագուհին»):

Եթե երբևէ ստեղծվի արքայից արքա Տիգրան Մեծի աշխարհակալությանը և միաժամանակ մարդկային վեհությանը արժանի մոնումենտալ հուշարձան, ապա նրա պատվանդանին պետք է փորագրվեն Պատմա-հոր հետևյալ խոսքերը, որոնք թեև վերաբերում են Կյուրոս Մեծի աջակից Տիգրան Երվանդյանին, բայց, ըստ էության, ձևաված են Տիգրան Մեծի հավաքական կերպարին. «Քանզի սա ամենեցունց թագաւորացն մերոց հարստագոյն և խոհեմագոյն, և արանցն այնոցիկ և ամենեցունց քաջ: Որ և Կիրոսի աջակցեալ, զՄարացն ի բաց բառնալով զիշխանութիւնն, և զՅոյնս ոչ սակաւ ժամանակս ընդ իրեաւ նուաճեալ հնազանդէր: Եւ զսահմանս մերոյ բնակութեանս ընդարձակեալ՝ ի հինսն մեր հասուցանէր յեզերս

ծայրից բնակութեան, և ամենեցունց որ առ իրովքն էին ժամանակօք՝ նախանձելի, և զկնեսցս ըղձալի ինքն և ժամանակ իր: Զի ո՞ր ի ճշմարիտ արանց, և որոց ի բարս արութեան և խոհականութեան սիրելութիւն կայցէ, սորա յիշատակօքն ոչ զուարճացի, և յորդորեցի այսպիսի այր լինել»<sup>69</sup> («Որովհետև սա մեր թագավորներից ամենահզորը և ամենախոհեմն էր և նրանց բոլորից քաջ: Նա Կյուրոսին աջակից եղավ Մարաց իշխանությունը տապալելու, հույներին էլ ոչ քիչ ժամանակ նվաճելով իրեն հնազանդեցրեց, և մեր բնակության սահմաններն ընդարձակելով հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը. բոլոր իր ժամանակակիցներին նախանձելի եղավ, իսկ հետո եկողներին ցանկալի թե՛ ինքը և թե՛ իր ժամանակը: Եվ ո՞ր իսկական մարդը, որ սիրում է արիության բարբըր և խոհականությունը, չի հրճվի սրա հիշատակով և չի ձգտի նրա նման մարդ լինել»<sup>70</sup>): ■

### Ֆոտոմներ

1. Մովսիսի Խորենացու Պատմություն Հայոց, Տիգրիս, 1913, Ա, ԻԴ(ԻԵ), էջ 73: Հովհաննես Դրասխանակերտցին, որ մեծապես օգտվել է Մովսես Խորենացու ոճական գանձարանից, Տիգրան Մեծին բնորոշող այս հատկանիշները նույնությամբ վերագրում է Տիգրան Երվանդյանին. «...յետ սորա (Հայկակայ – Ա.Մ.) Երուանդ, որ փոքր ինչ ՚ի նահապետութեան կեցեալ՝ ծնանի գմեծն Տիգրան: ... Բայց Տիգրանայ առաւել ևս քան զբնաւ թագաւորս մեր իմաստայեղ հարստութեամբ խոհեմամիտ երևեալ՝ անցեալ զանցեալ՝ զամենեքումք լինէր: Սա յետ բազում առաքինի քաջութեան և զբազում գործս քաղաքականս յարդարելոյ զՄարացն ՚ի բաց բարձեալ զիշխանութիւն՝ պայազատէր գնաւ. և զՅոյնս ոչ սակաւ ժամանակս ինչ ընդ իրեաւ հնազանդեալ նուաճէր. զԱթդահակ սպանեալ՝ զարքունիս նորա ՚ի գերութիւն վարէր, և օժանդակեալ ևս յԱնուշ մօրէն Վիշապաց և կալեալ զԿիրոսս՝ յինքն զիշխանութիւնս Մարաց և Պարսից գրաւեալ յանգուցանէր. և զսահմանս հայրենի գրոհին ՚ի հինս մեր հասուցանէր՝ յեզերս ծայրից բնակութեանց, և զազգս մեր ևս քան զնս բարձրացուցանէր ճոխացուցեալ. և որք ընդ լծով հարկի այլոց ոմանց էին կացեալք՝ ամենեցունց նոցա լծադիր և հարկապահանջ լինէր: Եւ ՚ի սմանէլ սսեն լինել զՈստանիկ ազատութիւն բարձին, որ այժմ դէռ ևս կայ և պահի անուամբ իբր թագաւորական իմն զարմ գնոսա իմացեալ: Այսպէս էր սա մեծիմաստ և պարկեշտ և մեծաջան և նազելի ՚ի գնացս և ՚ի գործս զկեանս իր էր քաղաքավարեալ. Այլն ՚ի հաւասարասիրութիւնս առ ամենեսեան զինքն կշտադատեալ՝ այսպէս և անդր ևս քան զայլս լցեալ էր սորա բարի մրցանաց հանդէքս. և բան զովեստից սորա բազում ճառից պիտոյ է, այլ շտապ տագնապի տարակուսանաց ոչ ներէլ ինձ ծախել զժամանակս ՚ի ներբողումս սորա քան թէ փութալ յայլ ինչ, որ առաջի կայ» (Յովհաննես Կաթողիկոսի Դրասխանակերտցույ Պատմություն Հայոց, Երևան, 1996, էջ 24):
2. Արովյան Խ., Երկերի ժողովածու, հ. IV, Երևան, 1947, էջ 92: Զրոյցը բերում են որոշ ուղղումներով:
3. Տեն Մանանդյան Հ., Տիգրան Բ և Հռոմը, Երևան, 1940, էջ 154:
4. Յիցերոսի ատյոթները Տիգրան Արմենի մասին քաղում են հիմնականում Գնեստ Պոմպեոսին իմպերատոր կարգելու մասին նրա ճառից՝ ուղղված քվիրիտներին (այդպես կոչվում էին Հռոմի Սենատի անդամները): Այդ ճառը տես Cicero Staatsreden, Erster Teil: De Imperio Gnaei Pompei Ad Quirites Oratio. Lateinisch und Deutsch von Helmut Kasten, Akademie-Verlag, Berlin, 1969, էջ 36-71: Լատիներեն քաղվածքը տես III, 8, էջ 38: Այսուհետ՝ Cicero:
5. Cicero. III, 8.
6. Cicero. IV, 10.
7. Plutarchi Vitae Parallelae. Iterum recognovit Carolus Sintenis. Vol. II. Lipsiae, in aedibus B.G. Teubneri. MDCCCLXXIX, Lūcullus (այսուհետ՝ Plutarch, Lūcullus), XIV, էջ 512-513: Պլուտարքեայ Քերոլվսացույ Զուգակշիռք, թարգմանեալ ի բնագրէն Հ. Եղիայ վարդապետի Թումանյան ի Մխիթարեան ուխտէն, ի Վենետիկ ի տպարանի սրբոյն Ղազարու, ՌՄՁԲ, հ. Գ, Լուկուլոզոս, էջ 539-540; Плутарх. Сравнительные жизнеописания, М., Изд. «Наука» РАН, 1994, Т. I. Издание подготовили С.С. Аверинцев, М.Л. Гаспаров, С.П. Маркиш, Лукулл, 14.
8. Նկատի ունի Փոքր Ասիան՝ Եփրատը Մեծ Հայքից բաժանող արևմտյան տարածքը, որ Պտղոմեոսն անվանում է Անատոլիա:
9. Cicero. II, 4-5.
10. Արիոբարզան Ա (Հռոմեասեր) – Կապադոկիայի թագավոր մ.թ.ա. 99-63 թթ.:
11. Cicero. V, 12.
12. Cicero. VI, 14.
13. Cicero. VII, 19.
14. Cicero. II, 6.
15. Legatus (լատ.) – Հին Հռոմում Սենատի հատուկ հանձնարարությամբ նշանակված նվիրակ կամ լիազոր:
16. Տեն Մանանդյան Հ., Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 187:
17. Cicero. VIII, 21.
18. Cicero. IX, 23.
19. Plutarch, Lucullus, XXIV, Պլուտարքեայ Քերոլվսացույ Զուգակշիռք, էջ 561:
20. Plutarch, Lucullus, XXIV, Պլուտարքեայ Քերոլվսացույ Զուգակշիռք, էջ 561:
21. Հռոմեացի պատմագիր Տակիտոսը (մ.թ. շուրջ 50-120 թթ.) Արտեմիս դիցուհուն լատիներեն անվանում է «պարսկական Դիանա» (Persian Diana) (տես Annales ab excessu divi Augusti. Cornelius Tacitus. Charles Dennis Fisher. Clarendon Press. Oxford. 1906. III, էջ 61-62):

## Հղումներ

- Դիանա անունը շրջուն կարդալիս ստացվում է Անաիր:
22. Plutarch, Lucullus, XXIV.
  23. Տե՛ս Cassii Dionis Cocceiani, Historiarum Romanarum quae supersunt, Berlin, pub. Weidmann, 1895, liber 36. 48.1:
  24. Վիմագիր արձանագրությունը բարբարոսաբար փշրված է եղել, և այն վերականգնելու համար մեծ ջանք է գործադրել պրոֆեսոր Էռնեստ Էմիլ Հերցֆելդը, որը գործնական մասնակցություն է ունեցել նաև Աքեմենյան մայրաքաղաքներ (Կյուրոս Մեծի օրոք) Պասարգադայի և Պերսեպոլիսի պեղումների ժամանակ:
  25. Herzfeld E., Paikuli. The Monument and Inscription of the History of Sassanian Empire, Berlin, 1924, §19, p. 35.
  26. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ.՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, էջ 41:
  27. Փավստոս Բուզանդը ևս վկայում է 4-րդ դ. կեսերին՝ Արշակ Բ թագավորի օրոք, Ծովագ աշխարհում կամ Մեծ Ծովքում եղած մի քանի բերդերի մասին՝ Անգղ, Բնաբեղ և այլն, որտեղ պահվում էին արքունի գանձեր՝ ներքինի Դրաստամատի մարդակերության ներքո (տե՛ս Փաստոսի Բիզանդացույ Պատմություն Հայոց, Երևան, 1987, Ե, է): Պլուտարքոսի հիշատակած ամբողջ թերևս Անգղ բերդն է:
  28. Plutarch, Lucullus, XXIV. Պլուտարքոսը տեղյակ էր, որ մ.թ.ա. 189 թ., երբ Արտաշես I-ը հռչակվեց Մեծ Հայքի թագավոր, Ծովքի թագավոր հռչակվեց Ջարեհը, այդ պատճառով Ծովքը Մեծ Հայքի մաս չի համարում:
  29. Տե՛ս Appiani Historia Romana, Vol. I, Mithridatica, Lipsiae, ed. Teubner, 1939, §67:
  30. Տե՛ս Փաստոսի Բիզանդացույ Պատմություն Հայոց, Ե, Դ, էջ 294:
  31. Թոմսոնը սխալ է կշռում՝ «Մարք» (մարեր, մեղացիներ) (տե՛ս Պլուտարքեայ Քերովսացույ Զուգակշիռը, էջ 581):
  32. Plutarch, Lucullus, XXXI.
  33. Պլուտարքեայ Քերովսացույ Զուգակշիռը, էջ 581:
  34. Մովսիս Խորենացույ Պատմություն Հայոց, Ա, ԻԴ (ԻԵ), էջ 72:
  35. Plutarch, Lucullus, XXXI. Թոմսոնն այստեղ բաց է թողել «արքայատականցիներին» բառը, լրացնում են ըստ Պլուտարքոսի՝ «τοῖς Ἀτροπατηνοῖς»:
  36. Նույն տեղում:
  37. «...որժամ պարսիկքն գմերն շրջէին՝ նոքա ի վահանափակն Յունաց իբր յամուր քաղաք մտանէին, առ ոչ ինչ վսասելոյ: Քանզի այնպէս արար Գորգոնոս իշխան հետևակ զօրում, իբր պարսպա պատեաց վահանօք զճակատն Պապայ» (Մովսիս Խորենացույ Պատմություն Հայոց, Գ, ԼԷ, էջ 303):
  38. Դիոն Կասիոս, Հռոմեական պատմություն, թարգմ. հուն. բնագրից՝ Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1976, գիրք XXXVI, էջ 127-128; Cassii Dionis Cocceiani. Historiarum Romanorum quae supersunt. Ed. Boissevain. Berolini. 1895. XXXVI. 5. 2:
  39. Նույն տեղում:
  40. Մանանդյան Հ., Տիգրան Բ և Հռոմը, էջ 154:
  41. Cicero. IX, 23.
  42. «der persischen Nanaea oder Anaitis in Elymais oder dem heutigen Luristan, des gefeiertsten und reichsten Heiligthums der ganzen Euphratlandschaft» (Theodor Mommsen. Römische Geschichte. Berlin, Weidmannsche Buchhandlung, Band III, Kap. 2, էջ 72:
  43. Տե՛ս Цицерон, Речь (в двух томах), т. 1, Издание подготовили Горнштейн и Грабарь-Пассек, Москва, 1962, էջ 414, ծան. 22:
  44. Տե՛ս Մանանդյան Հ., Տիգրան Բ և Հռոմը, էջ 143:
  45. Տե՛ս Mommsen Th., op. cit., Bd. III, Моммсен, Римская история, III, Москва, 1887, էջ 58-60:
  46. Տե՛ս Eckhardt Kurt. Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, 1910, Bd. IX, 2, էջ 72 ff.; Մանանդյան Հ., Երկեր, հ. Ա, էջ 212:
  47. Մանանդյան Հ., Տիգրան Բ և Հռոմը, էջ 144:
  48. Տե՛ս Flavii Josephi, Antiquitatum Judaicarum, liber 12:
  49. Մանանդյան Հ., Տիգրան Բ և Հռոմը, էջ 144:
  50. Նույն տեղում, էջ 144-145:
  51. Նույն տեղում, էջ 145:
  52. Cicero. IX, 23.
  53. Պլուտարքեայ Քերովսացույ Զուգակշիռը, էջ 582:
  54. Plutarch, Lucullus, XXXII. 1.
  55. «Յանկարծօրն այրացաւեր գերկիրն Հայոց առնէին (գօրքն Պարսից) առաջնորդ Մերովմանա. զորս տային ՚ի կոխումն փղաց, և զկանայս ընդ ցից սայլից հանէին. առնուին կոտորէին զամենայն բնակիչսն վերնագաւառացն Հայոց: Մինչ ղեռ թագաւորն Արշակ ՚ի կողմանսն ստորին գաւառացն յԱնգղ տան էր յուտեստ, զմիջնաշխարհն քանդեալ բրեալ գօրքն Պարսից ապականէին» (Փաստոսի Բիզանդացույ Պատմություն Հայոց, Դ, ԻԳ, էջ 218):
  56. Ցիցերոնը նկատի ունի, անշուշտ, Տիգրանակերտի գրավումը:
  57. Cicero. IX, 23-24.
  58. Адонц Н., Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, с. 412.
  59. Թոմսոնի գրաբար թարգմանության մեջ՝ «ետ հրաման ի կոճեղս ունել զնա» (Պլուտարքեայ Քերովսացույ Զուգակշիռը, էջ 583):
  60. Նույն տեղում:
  61. Տե՛ս Դիոն Կասիոս, Հռոմեական պատմություն, թարգմ. հուն. բնագրից՝ Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1976, էջ 126:
  62. Cicero. IX, 23.
  63. Cicero. II, 4.
  64. Այստեղ նկատի են առնված Գնեոս Նևիոսը (մ.թ.ա. 3-րդ դար) և Քվինտոս Էննիոսը (մ.թ.ա. 239-169), որոնք իրենց պոեմներում գովերգել են Հռոմի անցյալ պատմությունը:
  65. Ցիցերոնը ակնարկում է, անկասկած, Սպարտակի զվաճվորած սարուկների ապստամբությունը, որը ցնցեց ամբողջ հռոմեական պետությունը: Մ.թ.ա. 71 թ. գարնանը Մենատը Սպարտակի ղեմ ուղարկեց Կրասսոսին 60-հազարանոց զորքով: Ճակատամարտում Սպարտակն ընկավ հերոսի մահով:
  66. Cicero. IX, 26.
  67. Cicero. IX, 26.
  68. Մովսիս Խորենացույ Պատմություն Հայոց, Բ, ԻԱ, էջ 136:
  69. Նույն տեղում, Ա, ԻԴ (ԻԵ), էջ 71-72:
  70. Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, թարգմ.՝ Ստ. Մալխայանցի, Երևան, 1968, Ա, ԻԴ, էջ 110-111:

# Մենք այս ենք

Վրէժ-Արմէն

Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի առաջ խմբագիր

Ծուռ ենք մենք:

Ինչպէ՛ս կը դիմանանք բոլոր զրպարտանքներուն, յարձակումներուն, ծաղր ու ծանակին, որոնց կ'ենթարկուինք, ենթարկուած ենք ի սկզբանէ ու տակաւին պիտի ենթարկուինք ասկէ ետք:

Որովհետև ծուռ ենք մենք:

Մենք կը հաւատանք մեր երդումին: Կը հաւատանք, որ մեր կոչումին արժանի ըլլալու համար հաւատարիմ պիտի մնանք մեր յանձնառութեան՝ յարգելու մեր ծրագիրը, կանոնագիրն ու որոշումները:

Ա՛յս այդ որոշումները: Լաւ գիտենք, որ անոնց միշտ չէ, որ համաձայն պիտի ըլլանք, անոնք միշտ չէ, որ մեր սրտով պիտի ըլլան, բայց ամեն ջանք պիտի թափենք գործադրելու համար զանոնք, և եթէ տարակարծիք ենք, մեր տարակարծութիւնն ու մեր հակաառաջարկները պիտի յանձնենք առ որ անկ է՝ որոշումը կայացնող մարմինին կամ ժողովին՝ չշեղելով, սակայն, անկէ, մինչև մեր տեսակէտը դառնայ համոզիչ, ընդունուի պատշաճ կարգով ու փոխէ, բարեփոխէ կամ փոխարինէ տուեալ նախկին որոշումը:

Այո՛, ծուռ ենք մենք:

Մեր հակաառաջարկը կրնայ ընդունելի չըլլալ: Եւ մենք, անկախ ատկէ, պիտի շարունակենք ծառայել մեր ուխտին, անշահախնդիր ու անսակարկ նուիրուիլ մեր սրբազան նպատակի հետապնդման: Այդ նպատակը անձնական չէ, ընդհանրական է, և մենք համոզուած ենք, որ միայն մեր ընտրած ճամբով կրնանք իրապէս իրագործել զայն: Հաւաքաբար, ո՛չ անհատաբար:

Բայց ծուռ ենք մենք:

Կրնանք և դադրիլ այդպէս հաւատալէ ու կրնանք ենթադրել, որ սխալ էր մեր ընտրած ուղին ու կարծել, թէ կարելի է այլապէս հասնիլ այդ նպատակին: Ուստի կրնանք դուրս գալ այդ ուղիէն:

Դուրս գալ, որոնել մեզի ատելի առիւթնող այլ ուղի, փորձել անկէ՛ ընթանալ:

Եւ ինչքան ծուռ ենք մենք:

Կրնանք նաև շփոթել մեր հին ու նոր ուղիները, խորհիլ, թէ միշտ նոյն կերպարն ենք՝ նոյն դաւանանքով, նոյնիսկ ուզելով նոյն անունը կրել՝ յաւակնելով, թէ մեր ուղին է ճիշտը, մեր տեսակէտն է ուղիղը:

Կրնանք նաև նոր ուղիներով այլ նպատակներ հետապնդել: Այդ բոլոր իրաւունքները կը վայելենք իբր ազգային:

Բայց չենք կրնար ըլլալ այդքան ծուռ և անպարկեշտ:

Չենք կրնար թէ՛ տարակարծիք ըլլալ, թէ՛ նոյն նպատակը կամ այլ նպատակներ հետապնդել և թէ՛ օգտագործել նոյն անունը, շահագործել այդ անունը, անոր վարկն ու անհղութիւնը, անոր պատմութիւնն ու ժառանգութիւնը՝ մեր տեսակէտին արժէք տալու, մեր տեսակէտը տարածելու համար:



Եթէ համոզուած ենք, որ մեր այլընտրանքն է ճիշտը, քաջութիւնը պիտի ունենանք նոր անունով, նոր դիմագիծով ներկայանալու հանրութեան, այդ անունով վաստկելու անոր վստահութիւնը, վայելելու անոր աջակցութիւնը, ստեղծելու սեփական միջոցներն ու ընթանալու մեր ընտրած նոր ուղիէն: Սահմանն քաջաց զէնն իրեանց:

Մեր երկնակամարին վրայ միայն մէկ աստղի տեղ չէ, որ կայ: Իրաքանչիւրը, սակայն, իր փայլքով պիտի երևի և ոչ թէ պահուրտի միսին փայլքին ետև:

Բայց, ըսի, ծուռ ենք մենք:

Նոյնիսկ շեղելէ ետք կրնանք անդրադառնալ, որ մեր նոր ընտրած ուղին կրնայ որևէ տեղ չհասցնել մեզ, կրնանք զոջալ այդ շեղումին համար, կրնանք վերադառնալ ու միասին շարունակել մեր ճամբան: Աւելի ամուր, ատելի մեծ ներուժով:

Եւ... շարունակել ունկնդրել զրպարտանքները, յարձակումները, ծաղր ու ծանակը այլոց: Ինչ փոյթ:

Այո՛, այդքան ծուռ ենք մենք:

Եւ այս ենք մենք: ■



# Հայտարարություն

Հիմք ընդունելով ՀՀ անկախության հռչակագիրը, ՀՀ Սահմանադրությունը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ Արցախի ժողովրդի 1991 թվականի դեկտեմբերի 10-ի հանրաքվեի արդյունքները, միջազգային իրավունքի հիմնադրույթները, դարաբաղյան հակամարտության կարգավորմանը վերաբերող ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից բազմիցս ներկայացված հիմնարար սկզբունքները՝

## հայտարարում ենք.

1. Հայաստանի Հանրապետությունն աջակցելու է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի լիարժեք իրացմանը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչմանը: Հայաստանի Հանրապետության համար անընդունելի է դարաբաղյան հակամարտության կարգավորման որևէ վերջնական տարբերակ, որի արդյունքում Արցախը կարող է հայտնվել Ադրբեջանի կազմում:

2. Պետք է ապահովվի հուսալի ցամաքային կապ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության միջև՝ բացառելով վերջինիս անկլավային վիճակը:

3. Հայաստանի Հանրապետությունն Արցախի ժողովրդի անվտանգության և ինքնորոշման իրավունքի իրացման երաշխավորն է՝ բոլոր բաղադրիչներով:

4. Ադրբեջանի Հանրապետության հետ սահմանագծման և սահմանազատման աշխատանքները պետք է իրականացվեն հումանիտար խնդիրների լուծման (հայ ռազմագերիների, այլ պահվող անձանց վերադարձ) և Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքից Ադրբեջանի զորքերի դուրսբերման նախապայմանով:

5. Ադրբեջանի հետ սահմանագծման և սահմանազատման աշխատանքների արդյունքում բացառվում է Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության խաթարումը:

6. Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում Հայաստանի Հանրապետությունը բացառում է որևէ համաձայնություն, որը հարցականի տակ կդնի հայ ժողովրդի հայրենագրկման և ցեղասպանության իրողությունը, ինչպես նաև՝ հայության հոգևոր-մշակութային ժառանգության կրողը լինելու իրավունքը:

7. Հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորումները միմյանց հետ շաղկապված չեն: Ադրբեջանի և Թուրքիայի հետ կոմունիկացիաների ապաշրջափակումը չի կարող տեղի ունենալ միջազգային տրամաբանությամբ:

ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցություն

ՀՀ ԱԺ «Պատիվ ունեն» խմբակցություն



ԴԻՉԱԿ

Նիկոլի ժողովրդավարությունը  
Երևան, Հունիս, 2022 թ.